81 Տե՛ս Գալեոսեղյան, Ազգապատում, էջ 1338-1477:

82 Լուսն, Հայոց, էջ 409-422:

83 Եկեչյան, Հոտոտես:

84 Կեշիշիան, The problem.

85 Ջեքիյան, Համաթրոպեման, Հեկիտ, Տե՛ս Նեսես:

Գրքի բուն բովանդակությանն անցնելուց առաջ պարտքս եմ Համարում երախտագիտությունս Հայտնել իմ ուսուցիչ, ներկա աշխատանքի առաջին ընթերցող և խմբագիր, պրոֆ. Գ.Մ. Մուրադյանին, ինչպես նաև ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի Քրիստանյա Արևելք բաժնի իմ գործընկերներին, որոնք ընթերցել են այս աշխատանքն ու իրենց շահեկան խորհուրդներով և գիտողություններով օգտակար եղել:

Հայաստանյան գրատպության սուղ պայմաններում այս գրքի հրատարակությունը հոգացել է Հայոց եկեղեցու Հյուսիսային Ամերիկայի Արևելյան թեմի «Ջոզե Էպիսկոպոս Տէր Թակորեան Լիմուզրոմի» Հոգաբարձուների խորհուրդը, որի Հարգարժան անդամներին և թեմի առաջնորդ Գերաշնորհ Տեր Խոթակ արքեպիսկոպոս Պարսամյանին Հայտնում եմ անմնացորդ շնորհակալությունս:

Շնորհակալություն նաև «Պարբերական» Հրատարակչության տնօրեն Վ.Վ.Մարկոսյանին, որը Հանձն առավ գրքի ապագրումը:

## ՄԱՍՆ Ա.

### 1165 - 1178 թթ. ՀԱՅ-ԲՅՈՒՉԱՆԴԱԿԱՆ ԲԱՆԱԿՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԱՎԵՐԱԳՐԵՐԸ

#### ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Միջնադարյան փաստաթղթերի գիտական ուսումնասիրության բնագավառում չափազանց կարևոր նշանակություն ունեն վավերագրագիտական ստույգ ցանկերի կազմման աշխատանքները, որոնց միջոցով միջնադարագետ պատմաբան, վավերագրագետ և բանասեր մասնագետները հզորիա տեղեկություններ են ստանում պաշտպանական կամ կորած յուրաքանչյուր վավերագրի, դրանց պատճենների կամ մատենագրության մեջ նրանց մասին պաշտպանական վկայությունների, յուրաքանչյուր փաստաթղթի գրման շարժառիթների, թվականի և հնագրական տվյալների վերաբերյալ: Այս բնագավառում բազմական արդյունավետ աշխատանք են կատարել հզորական միջնադարագետները, որոնք ուսումնասիրողներին տեղանի են զրել Հոսմի պապական<sup>1</sup>, բյուզանդական-կայսերական<sup>2</sup> և պատրիարքական<sup>3</sup> և այլ նոտարա-

<sup>1</sup> Մասնավորապես տե՛ս Joffé, Regesta; Bothast, Regesta, Dölger-Karavancopoulos, Byzantinische, S. 10, a. 3 und 4:

<sup>2</sup> Մեջ հետազոտող ժամանակաշրջանի վավերագրերի փաթեց տե՛ս Dölger, Regesten, Teil 2:

<sup>3</sup> Տե՛ս Grumel, Documents. Vol I, Fasc. II, III.

աներից դուրս եկած փաստաթղթերի ցանկ-նկարագրությունները (Re-  
gest):

Հայագիտության մեջ նման, սակայն, միայն մեզ Հնասարքերոյ ժամանակահատվածի վավերագրերի ուսումնասիրության և ցանկերի կազմման նախնական աշխատանքի տուալին փորձ կարելի է Համարել Հ. Լևոն Զեքիյանի Հրապարակած ուսումնասիրության «Ժամանակագրութիւն ս. ներսէս ԵնորՀալիի Յոյն եկեղեցիին Հեռ միութեան աւեր-  
չակից թղթակցութեան» Հատվածը<sup>4</sup>: Կարելի է Հիշատակել նաև Հա-  
յազեա Ասատուր Մնացականյանի կողմած Գրիգոր Դ Տղայի և Նրա  
թղթակիցների փոխանակած գրությունների մասենագիտական ցան-  
կը<sup>5</sup>: Ի տարբերություն նախորդի, զերջինս իր կառուցվածքով ավելի  
մտանոլում է բնագրագիտական պարզ մասենագիտության:

Ասորև բերվող նկարագրությունը սոսկ առաջին փորձն է ՃԲ  
դարում Հոռմիլայի կաթողիկոսական (մասամբ նաև Կոստանդնուպոլսի  
կայսերական և պատրիարքական) նոտարատուն մուտք գործած սրտ  
վավերագրերի նկարագրության և գիտական դասակարգման<sup>6</sup>:

Նկարագրությունը կազմելիս փորձել ենք Հնարավորին չափ  
ամբողջական ներկայացնել յուրաքանչյուր վավերագիր. բացահայտել  
դրանց բնույթն ու էությունը: Անչուշա, Հաճախ տուրք ենք տվել Յր.  
Դյուլգերի և Վ. Գրյունիլի կազմած ցանկերի կառուցվածքին: Այնուա-  
մենայնի՞վ, ի տարբերություն նրանց<sup>7</sup>, մեր ցանկում Հիշատակվում են  
միայն այն փաստաթղթերը, որոնք գրված են 1165 - 1178 թթ., ունեն  
պաշտոնական բնույթ և դուրս են եկել Հայոց կաթողիկոսական (Ն),  
բյուզանդական կայսերական (Մ), և Կոստանդնուպոլսի պատրիարքա-  
կան (Յ) նոտարատներից և անպայման զերարերում են Հայ-բյուզան-

4 Ասոր ևս Մուզանդական վավերագրերի ուսումնասիրության և հրատարակման գրքի  
շարունակվում է, տե՛ս Huzar, Register, S. 20-35.

5 Տե՛ս Զեքիյան, Համափորձնական, էջ 55-58:

6 Տե՛ս Գոհար Տոս, Բանաստեղծություններ, էջ 48-53:

7 Գրքին ձեռնմանք արևն ձեռնարկել է ճմանատիպ ֆի աշխատանք, սկսելով է դարում  
կարողիտական զիվանից մեզ հասած վավերագրերի գիտական հրատարակումից և  
նկարագրությունից: Պետք է նկատի ունենալ, որ պահպանվել են մեծ քանակության  
վավերագրեր, որոնց մինչև այսօր նկարագրված չեն: Ի տարբերություն ձեռագիր  
մատյանների նկատմամբ հարազատության, զրեքն ցուցադրական, արտակարգ խնամ-  
քին, վավերագրերը շատ ու շատ դիճանասներում ու արխիվներում դեռևս նույնիսկ  
դասակարգված չեն և պահվում են առանց նկարագրության:

8 Այդ ցանկերում նկարագրվում են միայն կարծրական կամ պատրիարքական նոտա-  
րատներից որոս կամ անխոյր սրբո վավերագրերը:

դական եկեղեցաբարձական առնչություններին, այսինքն՝ նշված միջնադարյան նստարանների միջև փոխանակված վավերագրեր են<sup>9</sup>։

Ցանկը շծանրաբռնելու նպատակով, Հրատարակություններ և թարգմանություններ խորագրի տակ բերում ենք միայն, Հնդկահարական թուղթք Սրբոյն Ներսիսի Ենթահայւոյ (երուսաղէմ 1871, էջ 85-201)<sup>10</sup> գրքի և Թեոփրիանոսի Հուճարին բնագրի վերջին Հրատարակության (J.-P. Migne, Patrologiae Graecae, tomus 133, p. 113-298) էջերը, քանի որ մյուս Հրատարակություններն ու թարգմանությունները վավերագրագիտության առումով նորույթ չեն բերում։ Տեղ խնայելու նպատակով, գրականությունը նշելիս խուսափել ենք բերել Պր. Դյուլզերի և Վ. Գրյունելի աշխատություններում յուրաքանչյուր փաստաթղթի վերաբերյալ Հիշատակված բոլոր ուսումնասիրությունները<sup>11</sup>, և վավերագրերի ժԹ-ի դարերում հասարակած թարգմանությունները։

## № 1

### 1165 թ. սևպտեմբեր

Սկսելով Հայ-բյուզանդական երկխոսությունը, Բյուզանդական կայսրությունը կրիկիբայի 1165/66 թ. զուրս Ալեքս Աքսուխի միջոցով Ներսես Ենթահայի արքեպիսկոպոսին է ներկայացնում ծրագրավանդական Հարցերի մե խումբ, որոնց արվելիք պատասխաններին Հիման վրա Կոստանդնուպոլսի եկեղեցին նպատակ էր դրել պարզել Հայոց եկեղեցու ուղղափառ լինելու կամ չլինելու խնդիրը, Հատակեցնելու Համար Բյուզանդական եկեղեցու և կայսրության զիրքը Հոռոմիայի կաթողիկոսարանի Հեռ փոխհարարներություններում։ Այս Հարցադարն առանձին վավերագրի տեսքով մեզ չի Հասել, սակայն Հաջորդ (№ 2) վավերագրում պահպանված Հատվածներից կարելի է ճոտավորապես վերականգնել զրա բովանդակությունը։ Գատախան վավերագրում (№ 2), յուրաքանչյուր ծրագրավանդական խնդրի անզրազառնալուց առաջ, Ներսես Ենթահային բերում է մեզ չՀասած այս փաստաթղթում ար-

9 Չե՞ն չերկրո՞ւմ այն վավերագրերը, որոնք չեն գրվել զրանցից մեկի կողմից կամ չեն ուղարկվել այս երեք՝ հոգևոր և աշխարհիկ զանեթից։ Միակ բացառությունը համար 2 (Ալեքս Աքսուխի բյուզանդական պաշտոնյայից հասցեված) վավերագիրն է, որով սկսվել են 1165-1178 թթ. հայ-բյուզանդական բանակցությունները։

10 Այս հրատարակության հիմքի վրա է կազմված ՊԽՄ ժողովածուի վեր կազմած համեմատական բնագիրը։

11 Բավարարվել ենք միայն վերջից մի քանի հրատարակությունների և ուսումնասիրությունների հղումներով։

ձանագրված Հարցապնդումը կամ մեղադրանքը և ապա անցնում իր նյութին:

**Բովանդակություն.**

ա) «Գրեալ էր առաջին. թէ ի Յունվարի ի Հինգն ասենն վաղիւն Աւետեաց եւ երկնոյն Մննդեանն, եւ ի միւս վաղիւն՝ որ է վեց Յունվարի, Մկրտութեան Քրիստոսի» (ԹԸ, 1871, էջ 94):

բ) «Զերգս սրբոյ Աստուածածնին, զրեալ էր ի թղթի ասա, ոչ ասել յեկեղեցիս մեր...» (ԹԸ, 1871, էջ 95):

գ) «Դարձեալ ի թղթի ասա զրեալ էր վասն մեր եւ այս ինչ, եթէ մի բնութիւն դաւանեն Բանին եւ մարմնոյն, յորմէ Աստուծոյն ասեն ի մէնջ մտաւորանի...» (ԹԸ, 1871, էջ 96):

դ) «Դարձեալ՝ զրեալ էր ի զիրս. ի բուսարէր միթոյ, զոր չուշմայ անուանեն, լինել Միւսոնի մերոյ եւ ոչ ի ծառոց միթեանաց» (ԹԸ, 1871, էջ 97):

ե) «էր ի զիրս ասացեալ եւ վասն սրբոց պատկերաց, եթէ ոչ ընդունին Հայք ամենեւին» (ԹԸ, 1871, էջ 98):

զ) «Գրեալ էր եւ զայս ինչ, թէ զամենայն խաչս բուսուէն» (ԹԸ, 1871, էջ 98):

է) «Վասն երկոց Սրբասացութեանցն զրեալ էր, զի խաչեցար ասեմք» (ԹԸ, 1871, էջ 98):

ը) «Նաեւ այս եւս ամբաստանութիւն զրեալ էր զմէնջ. թէ ի սուրբ քառասնորդոն զկիթա անասնոց եւ զմու հաշակէն ի շարաթ եւ ի կիւրակէ» (ԹԸ, 1871, էջ 99):

թ) «Գրեալ էր ի զիրս վասն մեր եւ այս ինչ, եթէ՝ գինեաւ միայն առանց ջրոյ խաւսման մատուցանեն զգառարագն» (ԹԸ, 1871, էջ 100):

ժ) «Դարձեալ՝ էր ի զիրս եւ ծիծաղական իրս, թէ զամենայն խաչս իւրեանց յամենայն ամի նորոգ մկրտեն եւ աւրչեն» (ԹԸ, 1871, էջ 101):

ձա) «Յցոյց մեզ զրեալքս եւ զայս ինչ, թէ՝ չուսք յոմանց ի նոցանէ ասել, թէ Քրիստոս՝ մարմին Համագոյակից մեզ թանձր մաշկանացու շարշարելի երկրային ազականացու եւ եղանելի ոչ ա՛ն ի Կուսէն, այլ անազական անսար անշարշարելի և անեղանելի, և թէ՝ երեւցաւ մարդ որդէս կամեցաւ, եկիր եւ սրբ իբրեւ տա ԱրբաւՀամու» (ԹԸ, 1871, էջ 102)

ժբ) «Դարձեալ՝ զի վկայի ի զիրս, եթէ զհիրս ոչ ակամայ այլ կամաւոր կրեաց, և այս կիրք ապահանութեան ոչ կամաւոր, այլ ակամայ և բռնութեամբ ներգործի ի բնութիւնս...» (ԹԸ, 1871, էջ 104):

ժգ) «Կրեալ էր վերստին զմէնը, եթէ՛ վասն այնորիկ ասեն մի բնութիւն Քրիստոսի, որպէս թէ ամենեւին ընկզմեցաւ մարդկութիւնն յաստատանութիւն անգր, ըստ օրինակի՝ զի կաթիլ մի քացախոյ և մեղեր ի ծով անկեալ աներեւութանայ» (ԹԸ, 1871, էջ 104):

ժդ) «Ասացուք քոքր ինչ և վասն Առաջաւորացն ի մէնը անուանեալ պաշտ, զոր Հայհոյէք տղիտարար, Սարգսի ուրուժն ասելով կոխարդի՛ էչ և սկուեղ սւեռդի, ի յապտատմելոցն ի Հաւատոյս մերոյ առաջեղարանելով ի զանազան իրս վասն սորին, և պատմելով ստասոյ բանիւ առաջի ձեր» (ԹԸ, 1871, էջ 105):

Մտտաճորտացես սա է մեզ շահամ վաճերազիր-Հարցաշարի բովանդակութիւնը<sup>12</sup>:

**Պարագաներ.** Վերևում մտամբ վերականգնված վաճերազիրն, ամենայն Հաճանականությամբ, կազմված է եղել Կասանդուուպոլսի պատրիարքության նուտարատանը կամ նրա կողմից շրջանապատմելու մեջ զբովանդակումը որ փաստաթղթի Հիման վրա: Ի Հարկն, չի բացառվում, որ վերականգնված այս փաստաթղթի Հեղինակ կարող էր լինել նաև Ալեքս Աքսուխ զորահրամանատար-կառավարչը, որը փորձել է ի մի Հաճարել Հայոց եկեղեցուն Կասանդուուպոլսի պատրիարքության կողմից ներկայացվող մեղադրանքները<sup>13</sup>: Այս վերջին վարկան Հուշող միակ ակնարկը Հանդիպում ենք ԺԳ դարի պատմիչ Կիկոս Գանձակեցու երկում. «Դարձեալ զրեաց իմա՝ Ալեքս Աքսուխ - Ա.Ք.) առ նա իմա՝ Ներսես ԵնորՀալի - Ա.Ք.)»<sup>14</sup>: Հնարավոր է նաև, որ վաճերազիրը «Հայոց Հերձվածի» դեմ օրթոդոքս եկեղեցում ԺԱ-ԺԲ դարերում շրջանառության մեջ զբովանդակումը մեղադրական երկրից մեկն է: Նման ենթադրության ազդեցւոյց կարող է լինել բերված ԺԴ կետերից ամենավաճերջինը: Նմանատիպ Հակահայկական երկերով Հարուստ են միջնադարի և՛ բյուզանդական, և՛ վրացական մատենագրությունները<sup>15</sup>:

<sup>12</sup> Վերևում ընդգծված են Նոսրես ԵնորՀալու պատմաբանի արտահայտությունները:

<sup>13</sup> Հետաքրքիր է, որ Երս Թալլո Թալլոնի է բյուզանդական մատենագրությանը իր դավաճարմանակն երկերով, տե՛ս Beck, Kirche, S. 625:

<sup>14</sup> Տե՛ս *Արմենիա*, էջ 124:

<sup>15</sup> Բյուզանդական մատենագրության մեջ պատմամակն են բազմաթիվ երկեր, որ կես առ կես թիշարակում են «Տերզմում» են Հայոց շաբանամբի և Թատարալի իրենց կարծիքով ոչ տղապատ դրուցմեր: Մի շարք Եմանտիպ երկեր օրթոդոքսում բազմաճ-

**Թվականը.** Աշխարհ Արտաբար Կիլիկիայի բյուզանդական կառավարիչ է նշանակվել 1165 թ. սեպտեմբերին և իր պաշտոնը վարել է Հափանաբար, մինչև Հաջորդ տարվա նույն ամիսը: Ելնելով այս Հանգամանքից և նկատի ունենալով, որ Հաջորդ վավերագիրը (№ 2) գրված է 1165 թ., առաջարկում ենք վերորերյալ թվագրումը, այսինքն՝ 1165 թ. սեպտեմբեր:

**Գրականություն.** ԹԸ, 1871, էջ 94-105, Բազմյան, Բյուզանդիայի, էջ 207-210, 214, 233

## № 2

1165 թ. սեպտեմբերից հետո:

**Վերնագիր.** «Գիր Հուսառոյ խոստովանութեան Հայաստանայց եկեղեցւոյ՝ գրեալ ի ներսինէ արքեպիսկոպոսէ, յեղբարէ տեան Գրիգորիսի կաթուղիկոսի Հայոց, / ի խնդրոյ, գերապատիւ փեսայի ինքնակալ թագաւորին Հոռոմոց Մանուէլի, Ալէքսի մեծի պալատատարաւառի, / յորժամ ել յԱրեւելս եւ էր ի Մամեսաիա մայրաքաղաքին Կիլիկիացոց, / ի թուականութեան Հայոց՝ զից Հարիւր շորեքասան»:

Ի տարբերություն կաթողիկոսական նաարատանը պաշտանակող մյուս վավերագրերի, այստեղ՝ խորագրում հիշատակվում է նամակի գրման տեղը և տարիթիվը:

Բանաձև. Գիր N ի խնդրոյ X: Ունի քառամասն բանաձև. Հեղինակ / Հասցենաւոր / տեղ / թվական:

**Թղթառաջք.** Բանի որ այս փաստաթուղթը պաշտոնական բրնույթ չի կրում և ընդամենը Հայոց Հափաարի ընդարձակ խոստովանություն է և որոշ ձիսական խնդիրների բացատրություն, այդ իսկ պատճառով բացակայում է կաթողիկոսական թղթերին բնորոշ թղթառաջքը և թղթառաջ-ողջոյնը:

---

Վեյ և՛ նաև վրացերեն: Դրանցից մեկը, որը վերագրված է Հովհան Գաճապալուց, Միսոն Գղմնախանցու կողմից, վրացերենից թարգմանվել է Ֆայերեմ (տե՛ս ԱՍՏՄԱՆ, Միսոն Գղմնախանցի, էջ 96-98, ԱՍՏՄԱՆ, Կիտիոն, էջ 69-70): Այլ երկի Ֆայերեց թարգմանության բնագիրը տե՛ս Կիտիոնում, Հին: Բյուզանդական և վրացական գրավանդության մեջ հավասարակշիռ երկերի մասին տե՛ս Block, Kirche, p. 669-663, Carite, La source, p. 111-116, Ալեքսանի, Ալսեմ Վաչե-Յոթ, էջ 133-158, Լափալա, Կեղծ Իսամակ, էջ 64-76:



## Բովանդակություն.

Սկ.—Բանիւք զուզնաքծայ իմն խաւսելով ի լսելիս խաճեմազու-  
նիդ...

Վրջ.—...Եւ որ քր յետ զայստսնի լսելոյ ի մէնջ գայթակղեսցի  
զարձեալ ի մեզ՝ ոչ հաւատալով ասացելոցս, ինքն տողէ պատասխանի  
Քրիստոսի յաւուր գատաստանի նորա իբրեւ զպատակառոջ անգամոց  
նորին. իսկ այն՝ զոր միանգամ լսէ և հաւատայ և ոչ զատի՝ որպէս ա-  
սաց ընկողն սրտից, ընդ հշմարիտ հաւատացելոցն ընկալցի վարձս բա-  
րեաց ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ, որում փառք եւ զորութիւն՝ յաւի-  
տեանս յաւիտեանից. ամէն:

Այս վավերագրի բովանդակութիւնը հասկնորեն կարելի է իրմ-  
բովորել Հետեյալ բանաձևի ներքո.

ա) Մուտք (prooimion) — Ներսես ԵնորՀայրն արձանագրում է, որ  
թեպեւ և բանավոր պատասխաններ ավելի բոլոր Հարցումներին, ա-  
կայն զրանք կորոզ են մտաացութեան մասովել: Այդ իսկ պատեառով  
խնդրեցիք պատասխանները գրավոր ներկայացնել, որը համառոտա-  
բար կատարում եմ, շարադրելով մեր հշմարիտ Հովառը, սուրբ Հայրերի  
ավանդներին Հովատարիմ եկեղեցու ձրսակարգը:

բ) Բուն խնդիր (necessatio) — Բերվում է Հայոց եկեղեցու Հովատա  
խոստովանութիւնը (ԹԸ, 1871, էջ 88-93), ապա անգրազատեւում է  
այն բոլոր ձրսական Հարցերին (տե՛ս № 1), որոնց գրավոր պատաս-  
խանները Ներսես ԵնորՀայրուց խնդրել էր Ալեքս Աբսուխը:

գ) Վերջարան-ամփոփում (conrobatio) — Ահա մեր խնդրածի  
համաձայն ներկայացնում եմ Հայոց եկեղեցու հշմարիտ զավանու-  
թիւնը: Աւ եթե որեւէ բան թաքցրել կամ ավելացրել եմ, թող ենթարկ-  
վեմ Աստու գատաստանին, կամ ով չՀավատա ասածներին, թող ինքը  
Դատաստանի որը պատասխան տա Քրիստոսին:

Թրքավարտ-իրաճելչոյի բանաձև. — Այս վավերագիրը պաշ-  
տոնական որեւէ բանաձև չուելի, այդ բացը չբացնում է որպեւ վրջ-  
բերված Հաավաճը:

Շարահյուսական առանձնահատկություններ. — Ներսես  
ԵնորՀայր արքեպիսկոպոսը բյուզանդական զուքսին է գիմում հոգեա-  
կի թվի երկրորդ զեմքի գերատոււնով ԹԸ, 1871, էջ 87Ձ, 106ՁԹ, իսկ իր  
և Հայոց եկեղեցու մասին խոսում է հոգեակի աւալին զեմքով:

Վավերականություն. Ինչպեւ այս խմբի բոլոր վավերագրերի,  
այնպեւ էլ սույն թղթի բնորինակը մեզ չի հասել: Նրա ամբողջական և

մասնակի ընդորինակությունները առկա են Հայերեն և Հույարեն մասնագրական երկերում.

ա) ՊՆՄ ժողովածու.

բ) Կիրակոս, էջ 121-147:

գ) Կոստանդնուպոլսի կայսերական նստարատանը պահպող Հույարեն ասրբերակից Հատվածական ընդորինակություն կարելի է Համարի Թեորիանոս մազիսորոսի առաջին «Տրամախոսութեան» բնագրում պահպանված Հատվածները (տե՛ս PG, t. 133, p. 124 C, 181 B, 184 A, 192 A, 192 B):

Թվական և գրման պարագաներ. Այս ծիսահավատարանական թուղթը, ինչպես որ վկայում է վերնագիրը, գրվել է Հայոց ՌժԴ թ: Հայոց տամարի այս թվականը Համապատասխանում է 1165թ. փետրվարի 8 - 1166թ. փետրվարի 7 ժամանակամիջոցին: Նամակն ամենայն Հավանականությամբ գրվել է 1165 թ. սեպտեմբեր ամսից Հնոս, սակայն ավելի վաղ քան 1166 թ. փետրվարը: Հաջորդ թղթի ( N<sup>o</sup> 3) թվագրումից կարելի է կռահել, որ այս նամակը Կոստանդնուպոլսյան պետք է Հասած լիներ կամ 1165 թ. վերջին, կամ ամենաուշը 1166թ. սկզբին ( առաջին կեսին), որովհետև N<sup>o</sup> 3 վավերագիրը գնահա չգրած Գրիգոր Գ-ի մաշը: Այս նամակն անկասկած Հասել է Կոստանդնուպոլս: Այդ են վկայում ոչ միայն Թեորիանոսի առաջին «Տրամախոսութեան» մեջ պահպանված Հատվածները, այլ նաև Մանուել Ա Կոմենենոսի նամակի ( N<sup>o</sup> 3) Հետևյալ վկայությունները.

ա) «...ընկալա թագաւորութիւնս մեր գրով աւեւայ առ ի մէնջ» (ԹԸ, 1871, էջ 108<sub>17-18</sub>):

բ) «...ի գիրք բարեպաշտութեան մերոյ, որ թարգմանեալ ցուցաւ» (ԹԸ, 1871, էջ 108<sub>21-22</sub>):

Վավերագրագիտական նույնացումներ. Այս Հատվատ խոստովանությունը ևս մի քանի անգամ ոգտագործվել է Հայոց եկեղեցու կողմից՝ Հռոմի և Կոստանդնուպոլսի քույր եկեղեցիներին ապացուցելու Հայոց դավանանքի ուղղափառությունը.

ա) Վավերագրի Հատվատ խոստովանության Հատվածը Կոստանդին Ա Բարձրաբերզցին (1221-1267) չնչին խմբագրական փոփոխություններով առաքել է Կոստանդնուպոլս, Մանուել Ա պատրիարքին (1244-1255)<sup>16</sup>:

<sup>16</sup> Տե՛ս ՄՄ-2174, էջ 151ա-155բ: Այս շքանմի պատկանող, դեռևս չիբապարակված, հաղ-րուզանյալից քանակցությունների ներ խումարեն վավերագրերի մասին տե՛ս Bartikian, Relations, p. 50-53, Երտիցես, Ուսուսումնալ, c. 109-110:

Վերնադիր - Դաւանութիւն զոր գրեաց Հայոց եկեղեցին եւ անը  
Կոստանդին կաթողիկոսն ի Կոստանդինուպուլսոյ ի պատրիարքն եւ ի  
ժողովն այսպէս:

Սկ. - Մեծի Աստուծոյ եկեղեցւոյ պատուական գլխոյդ Մանու-  
էի սրբազան Կոստանդնուպուլսոյ Նոր Հոռոմ եւ տիեզերական պա-  
րիարքի եւ ամենայն սուրբ ժողովոյդ Կոստանդին կաթողիկոս Հայոց  
մերով ժողովրդս ծանուցանեմք: Զի խոստովանիմք զամենասուրբ  
գերբորգութիւնն...

Վրջ... եւ զմեռեալս արգարութեամբ, որում փոքք եւ զաւրու-  
թիւն յաւիտեանս. ամէն:

բ) Կոստանդին Ա Բարձրաբերդցին վազիրազրի Հաւաստ խոստու-  
վանութեան Հատվածը Տիմանչ լիկաթի (պապական եզիրակ)<sup>17</sup> մեքով  
ուզարկել է նաև Հոռոմ, Ինոկենիոս Դ պապին (1243-1254): Այս փաս-  
տաթղթի բնօրինակը պահպանվել է Վատիկանի առաքելական արխի-  
վում (Archivum secretum, Apostol. Vaticanum)<sup>18</sup>: Այն գրված է մագաղա-  
թի վրա:

Վերնադիր - Գիր Հաւաստոյ խոստովանութեան Հայաստանեաց  
եկեղեցւոյ. զոր խնդրեաց ի մէնջ առաքելական Հայրն մեր Պապն  
Հոռոմ Ինուկենուսն ի մեռն խոհեմագոյն լիկատին փրեր Տիմանչին, որ  
է ի կարգի փրեր մնուբացն:

Սկ. - Բանիւք զուզեաքեալ իմն խաւսելով...

Վրջ. --- երկարանչիւրջն ի սահմանի են ուզաքաճառութեան:  
Այս գիր մեռն իմոյ է Կոստանդիա ծառայի եւ շնորհուքն նորին  
կաթողիկոսի Հայոց<sup>19</sup>:

Այս վազիրագիրն իրեն կից ունի նաև ժԶ-ժԷ զարերի իտալերեն  
Թարգմանութիւն, որի վերնագրում փաստաթուղթը թվագրված է  
1225 թվականով<sup>20</sup>:

17 Այս գործընթացում է մահ Վարդան Արևելցու «առ շերտն» թղթում (1328-  
1901, էջ 503-509, 1994, էջ 657-665): Վարդանի գրած թղթի գրման պարագաների  
մասին տե՛ս Չոլմաճեան, Ազգայնամբ, էջ 1642-1643:

18 Տե՛ս AA. Arm. I-XVIII 1804: Վազիրագրի լուսանկարները մեզ տրամադրելու համար  
շնորհակալորդում ենք հայրմեռ շէ ԳԱԱ Պատմութեան ինստիտուտի գիտաշխատող  
Մարտիան Կարապետյանին:

19 Վերմագրը, սխալմբն ու կարողիկոսի անձնական ստորագրությունը կազմիր քանա-  
քով են:

20 Իտալերեն բնագիրը իմ խնդրանքով վերանշէ և սիրով մեզ է տրամադրել Ռոլոնճայի  
համալսարանը պրոֆ. Գաբրիելա Ռոլոնճեանը, որին էլ հայրմեռ ենք մեր կրակա-  
տաշնորդները:

զ) Այս նույն Հաժառո խոստովանությունը եռալեզու (Հայերեն, Հունարեն և լատիներեն) գուգահեռ ընաղղերով 1574 թ., որպես Հայոց եկեղեցու ուղղափառ Հաժառոքի Հաժառոտագիր, Լեմբերգի Հայոց Հաժայնքի կողմից ներկայացված է Լեհաստանի Թագավոր Հենրի 9-ին: Այդ փաստաթուղթը կցված է Լեհաստանի Թագավորին Հասցեաղբբոված նամակին: Վավերագրին այժմ պահվում է Սանկտ Պետերբուրգի Սալտիկով-Շչեգրինի անվան գրադարանի օտարալեզու վավերագրերի ֆոնդում<sup>21</sup>:

ՎՔն. - Բան Հուսաոյ Հայտատանեայց եկեղեցւոյ՝ ի Հարցն սըրբոց աւանդից ընկալեալ եւ գրեալ զայզն ինչ առ սրբազան պատրիարքն Կոստանդնուպօլսի Հրամանաւ Տեառն Կոստանդեայ կաթուղիկոսի Հայոց:

Սկ. - Խոստովանիմք զամենասուրբ զերրորդութիւն. զՀայր և զորդի...

ՎՔջ. - ...իրքն զկաթիլ մի ի զուլէ (այսպե՛ս - Ա.Բ.) առ ծովացեալ իմաստութեան ձերում. եւ Քրիստոսի փառք յաւիտեանս ամէն:

Հրատարակություններ և քարգանություններ. ԹԸ, 1871, էջ 87-107:

Գրականություն. Keshishian, The problem, էջ 91-93, Զէքիան, Համամթութենական, էջ 55, Բողոյան, Բյուզանդայի, էջ 233-236:

### № 3

1186 թ. ապրիլ-հուլիս (²)

Վերնագիր. «Թուղթ առջին՝ Թագաւորին Հոռոմոց Մանուէլի / առ սրբազան կաթուղիկոսն Հայոց տէր Գրիգորին»:

Բանաձևը երկմաս է (նամակագիր / Հասցեատեր). Թուղթ X ա N:

Թղթառաջք - Մանուէլ ծիրանածուեւզ արքայ, կարող և բարձր միշտ. օգոստոս ինքնակալ Հոռոմոց Կոմնինոս և Քրիստոսի Աս-

21 Վավերագիրը պատկանէ է Պետր Դուրյովսկու հավաքածուին: Ար է հաստատում մահ ձեռագրի կազմի ներսի կողմ յատկանատա ճիշտաւարագրութունը «Ex Museo Petri Dubrovsky»: Սակայն արդե՞ն դարակզրին վավերագրից պահվում էր Սանկտ Պետերբուրգի նշանաւոր Կարմրական (Սալտիկով-Շչեգրինի անվան զբոսայրանում թեուղալ՝ Q. v. I. № 7) ձեռագրամասի տակ: Ձեռագրի միջոցաւարվեց ունի մահ էրկանի Մաշտոցի անվան Մատենադարանը (ՄՄ դրոքի ժաւարվեցների ֆոնդ N. 1003): Հենրի 9-ի նամակը և հաժառո համագանակ յատմներն ընաղղի հրատարակութունը տե՛ս Szack, Die Confessio, p. 192-196.

առևճայ Հաւատարիմ թագաւոր, / առ շնորհիւ նորին պատուական եւ սրբազան կաթողիկոսն Հայոց աէր Գրիգորիս, / ողջոյն սիրոյ առաքեմք:

Բանաձեռ եռամաս է . X ու N, իսկ վերջում ողջոյնի բանաձեռն է:  
**Բովանդակութիւն.**

Այ. - Պարտ է անհնցուն, որք ի ձեռն աւառուածային մկրտութեանն զՔրիստոս զգեցեալ են...

Վրջ. - ... կարող էր Հաւատալ առ ի զժանկ ասացելոցն:

Բանաձեռ. մուտք-բուն խնդիր - վերջարան (ամփոփում):

Կառուցուածք.

ա) Մուտք - Եկեղեցիների միութեան անհրաժեշտութեան մասին:

բ) Բուն խնդիր - Ընթերցելով Ալեքս պրոտոսարատորի միջոցով իրեն Հասած թուղթը ( N<sup>o</sup> 2), կայսրը խոստանում է միջնորդ լինել իր հիւն Եկեղեցիների միութեան խնդրում: Գործը Հաշտութեամբ ավարտին Հասցնելու Համար առաջարկում է կաթողիկոսին Կոստանդնուպոլիս առաջել իր եղբորը (իմա՝ Ներսէս Շնորհալուին): Ու եթէ անէն ինչ բարեհաջող ընթանա, կայսրը կարծում է, որ բոլորը վարձարժան կլինեն:

գ) Վերջարան-ամփոփում - Եկեղեցիների միութեան խնդրի շուրջ բանակցութիւններ վարելու Համար կայսրը կաթողիկոսի մաս է ուղարկում իր պալատի սպասաւոր Սմբատին, որին Հանձնարարված է հչել նաև ուղեկցել կաթողիկոսի եղբորը Կոստանդնուպոլիս, բանակցութիւնները շարունակելու Համար: Խնդրում է նաև ուղարկել ունկընդրել իր զեսպանազնացի բանավոր առածներին:

Ծր. Դյուզբերը նոժակի բովանդակութիւնը Համարում է կարգադրազիր (Præceptum):

Թղթավարտ. - Ողջ լինուք: / Գրեցու յամսեանն սեպտեմբերի՝ 12նդիքաթոնին ի ժն:

Պաշտօնակն է թղթավարտի երկմասն կառուցվածքը. ա) Հրածելոյի բանաձեռ, բ) Թվական:

Թվականը. - Թղթավարտում պաշտօնականը Համարապատասխանում է 1166 թ. սեպտեմբերին: Լ. Ջեքիանը, ճիշտ թվագրելով վաղեմագիրը, բերում է նաև փաստաթղթի գրման ամսաթիվը (սեպտեմբերի 14), որն, իմ կարծիքով, Հնարավոր չէ պարզել մեզ Հասած տեմբերի 14), որն, իմ կարծիքով, Հնարավոր չէ պարզել մեզ Հասած սկզբնաղբյուրների անբավարար վկայութիւնների պատճառով: «Գրե-

ցու»-ը ՊՆՄ ժողովածու մուտք գործած օտար դիվանատներից զույս եկած վաճիրազրերի համար, մեր կարծիքով, նշանակում է Հոսովյայի նատարատուն մուտք գործելու (մուտքազրվելու) կամ ըստ Լ. Ջեքիյանի, «Քարգամանութեան Թուսկանը» (տե՛ս Ջեքիյան, Համամիութենական, էջ 15, ծան. Տ)։ Քանի որ այս թղթում Մանուէլ Ա Կամեննուք դեռևս չի առել Գրիգոր Գ կաթողիկոսի մաՀվան լուրը, ապա վաճիրազրը գրված է ամենաուշը 1166 թ. ապրիլ-հունիս ամիսներին։ Յր. Դյուզբերը, Հեռակիով Ա. Տեր-Միքելյանին, սխալմամբ վաճիրազրը թվագրել է 1167 թ. սեպտեմբերով։ Թուզթը 1166 թ. սեպտեմբեր ամսով է թվագրում Ղ. Ալիշանը։

**Պարագանները.** Թուզթը Հոսովյա է Հոսցրի բյուզանդական պալատի սպասավոր Սմբատը, ամենայն հավանականությամբ 1166 թ. սեպտեմբերին ( Կայսերական մյուս թղթերի Հայերեն Քարգամանությունների թվագրումները ևս ցույց են առնիս, որ զրանք թվագրված են անմիջապես Հոսովյա Հասնելու պահին)։ Դեպքտեպեպ Սմբատը երկար ևսնապարհորդությունից Հեռ», Հոսովյա Հասնելիս «գտանելը վաճանանայ յայնմ ամի զկաթողիկոսն աէր Գրիգորիս, ի վից Հարիսր ատան եւ Հինգ Թուսկանին Հայոց»։ Գրիգոր Գ կաթողիկոսի մաՀվան թվականը ԹԸ, 1871-ի հրատարակության մեջ (էջ 109) և ձեռագրերի մի նշանակալի մասում գրվում է Հայոց ՌԺԴ (=1165/6) թվականին, որը Հակասում է պատմական իրականությանը։ Ղ.Պաղոս Անանյանը Գրիգոր Գ ՊաՀաճունի կաթողիկոսի մաՀը իրաճաջիորեն թվագրում է 1166 թ. օգոստոսի 8-ով (տե՛ս «Բաղճաճէպ», 1975, էջ 351)։ Այդ իսկ պատճառով, Հիմք ընդունելով մի շարք ձեռագրական վկայություններ և, Հատկապես, Հնագույն ձեռագրերից մեկի՝ Փարիզի Ազգային մատենադարանի թ. 179 ձեռագրի ընթերցումը, հրատարակվող բնագրում առաջարկում ենք վերականգնել ՌԺԵ ընթերցումը (ԹԸ, 1871, էջ 109)։

Հրատարակություններ և ընթերցումներ. Այս նամակի Հունարեն բնագիրը դեռևս գիտությանը Հայտնի չէ, Հայերենը պահպանվել է միայն ՊՆՄ ժողովածուում (ԹԸ, 1871, էջ 107-109)։

Գրականություն. Չամչեանց, Պատմութիւն, Հտ. Գ, էջ 99, Ալիշան, Շեռհալի, էջ 415-416, Ter-Mikellian, Die armenische, S. 87, Dölgez, Regesten, S. 81, n° 1478, Ջեքիյան, Համամիութենական, էջ 55, Բողոջյան, Բյուզանդիայի, էջ 236-237։

№ 4

1166 թ. սեպտեմբեր - դեկտեմբեր (")



նում, որ նման երկխոսություն է սկսել ինքը Հակոբիկ եկեղեցու հոր պատրիարքի (իմա՝ Միքայել Ասորու) հետ: Եվ որպեսզի բանակցող կողմերն իրենց տեսականները միմյանց չպարտադրեն, առաջարկում է բանակցութիւնների կանոնակարգ (reglement):

գ) Վերջարան-ամփոփում - Հովասարացնում է, որ այն Հարցերը, որոնք թղթում պատասխան չեն ստացել, կայսրը կարող է ավելի մանրամասն տեղեկանալ գեապանազնացիների պատմածից:

**Թղթավարտ.** Ողջ լէք թագաւոր աւզոստէ, երկեաւոր թագաւորին պաշտօնեալ գաւրութեամբ:

Բազկացած է միայն Հրամեչար բանաձեռք:

**Թվականը.** - Վազեբազիրը թվագրում չունի: Ամենայն Հովանականությունամբ նամակը գրված է 1166 թ. սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսներին, Սմրաա զեսպանի Կիլիկիա գալու նախորդակին: Մ. Օրմանյանը, Լ.Ջեքիյանը և Ա.Քէչիշյանը այս և Հաջորդ երկու վազեբազիրը, առանց փաստարկման թվագրում են 1167/68 թ.: Վազեբազիրը թվագրելու իմ միակ կազանը ասորիների հետ բանակցելու մասին ներսես Շնորհալու ասելն են: Այստեղ հստակ երևում է, որ շատ կարճ ժամանակ է անցել, երբ առաջնորդների մաշվան պատճառով թագաւոր էին մնացել և՛ Հայոց կաթողիկոսական, և՛ Հակոբիկ-ասորական պատրիարքական գահերը: Միքայել Ա Ասորին ժամանակագրության մեջ իր նախորդ՝ Աթանաս Ը-ի մաշը թվագրում է 1166 թ. հուլիսի 14-ով, իսկ սեփական օծումը և գահակալությունը՝ նույն թվականի հոկտեմբերի 18-ով<sup>24</sup>:

**Պարագաները.** - Նամակն ամենայն Հովանականությունամբ կոստանդնուպոլիս է առաքվել Սմրաա զեսպանի հետ ուղևորված կաթողիկոսի բանազնացիների միջոցով: Այդ մասին է վկայում վերջարան-ամփոփումում առկա. «բանականքդ պատմեսցին բանիւ» արտահայտությունը (ԹԸ, 1871, էջ 119-120): Հենվելով այս թղթի «...և արժանաւոր իսկ էք՝ որպէս լուսք ի բազմաց, մանաւանդ ի սուրբ թագաւորութեանդ Հաւատարիմ ծառայէ՛ յԱբուխէզ» արտահայտության վրա, Ղ. Ալիշանը նախորդ նամակի (N° 4) մասին գրում է. «Հրովարտակը յանձնեց Սմրաա Աբուխ սնուամբ պատուաւոր պալատականի մը, որ յանուանէն կ'իմացուի մեզի պղպակից ըլլալ»<sup>25</sup>: Ա-

24 Տե՛ս *M.S.*, p. 327, 329:

25 *Առնամ. Ընդմիտի*, էջ 415:



առջարկում ենք ՊԽՄ բնագրում Արուխ ընթերցումը սրբազրի Աքսու-  
խոզ, որով կարծում ենք կհարթվի բնագիր մասն վրիպումը<sup>26</sup>:

Հրատարակություններ և քարգանություններ. ԹԸ, 1871,  
էջ 109-120:

Գրականություն. - Օրմանեան, Ազգապատում, էջ 1416-1417,  
Ջէրիսան, Համաժուրթեանկան, էջ 55. Keshishian, The problem, p.94:

## № 5

1166 թ. սեպտեմբեր-դեկտեմբեր (")

Վերնագիր. - Մահմանք Հաւատոյ Հայտատաննայց եկեղեցւոյ՝  
/ քրեայ ներսխի կաթողիկոսի Հայոց, / ի խնդրոյ աստուածաւէր Թա-  
գաւորին Հոսոսոց Մանուէլի:

Բանաձեռ եռամասն է: Բնորոշող վերնագիր - Թղթակից կողմեր  
(N № X)

Թղթառաջք. չուեի:

Բովանդակություն.

Այ. - Թէպէտ եւ աղքատութիւն մտաց եւ բանի ոչ այլ թոյլ...

Վրջ. - ...բայ իրատու իմաստնայ՝ իմաստնադոյն եւս լինել:

Վտճերագիրը բազկոցած է երեք մասից.

ա) Մուտք. կաթողիկոսը թեև իր Համեստ Հնարագորություննե-  
րից վեր է Համարում Հայոց եկեղեցու Հովատտ Հանգանակը ներկա-  
յացնելը, սակայն քանի որ կայսրն է այդ Հրամայի «ի մեռն մեծի  
յաւատանց ծառայի»<sup>27</sup>, Համարմակվում է շարագրել: Իհարկե, Ասա-  
վածային Հրաման է՝ բացատրել թուրքին, թե՛ մեծին, թե՛ փոքրին, ա-  
ռովի եւ «բարձրագուշին ամենայնի»<sup>28</sup>: Հիմնվելով առաջյուների,  
մարգարենների և ուղղափառ վարդապետների ասածներին, որոնց Հնուց  
ի վեր Հեանում է Հայոց եկեղեցին, ճշմարտությամբ շարագրում է Հա-  
վատտ գաղափարությունը: Նշում է նաև, որ ինքը մեկ անգամ էլ է այն  
շարագրի «ի խնդրոյ աստուածասիրին»<sup>29</sup>, որն ընթերցել է ինքը՝

26 Ընդամ. Բյուզանդիայի. էջ 237-238:

27 Նկատի ունի Անջատ դեպագանգմանի:

28 Ինձա՛ բյուզանդական կարերը:

29 Նկատի ունի Այկոս Ալատիսի:

կայսրը, սակայն քանի որ կրկին պահանջում է՝ ստիպված է մեկ  
անգամ ևս շարադրել:

բ) Բուն խնդիր՝ Հավաստ խոստովանություն:

գ) Վերջարան-ամփոփում. Հայանում է, որ վերջարագրյալը՝  
«յաղագս Համազոյ Երրորդութեանն և միասուլանութեանն և վասն  
անաբրինութեանն Որդւոյ», Հայոց Հավաստ զօգնությունն է:

Վավերագրի վերջում պահանջվել է ինքնատիպ Հ.Գ. (= Post  
scriptum):

Թղթավարտ. չունի:

Թվական - Այս վավերագիրը ևս գրված և առաքված է Կոստանդնուպոլիս նախորդ (ան՝ս Ն<sup>o</sup> 4) թղթի հետ միաժամանակ:

Պարագաները - Մուսթուս Ենթու Հայրէջիկն վկայում է, որ  
այս և Հաջորդ (Ն<sup>o</sup> 6) վավերագրերը գրված են կայսր Մանուկ Ա Կոստանդնուսի  
հրամանով. «սակայն ինքնակալ թագաւորութեանց Հրաման՝  
որ ի մեան մեծի պալատանց ծառայի, առ մերս Հոսեալ Կոստանու  
թիւն, տալ գրով զՀաւատոյ մեր զաւանութեան բան...» (ԹԸ, 1871, էջ  
120): Ուրեմն՝ «Հաւատոյ խոստովանութեան» գիրը Մանուկ Ա կայսր  
անուկից պահանջել է Մժրատ դեսպանը, որի հորդորով էլ Ենթու Դ  
Ենթու Հայրէջիկն գրում է այս վավերագիրը. «զի մերով Հրամանաւ պնդա  
գոյնս պահանջեաց թղթաբեր սուրբ թագաւորութեանց ի մէջը, ոչ  
ընդգիմացաք Հրամանին, այլ Հաւելիտք ևս զայս ևս ի նոյն...» (ԹԸ,  
1871, էջ 121): Այսպիսով, այս վավերագիրը ևս Կոստանդնուպոլիս է առաքվել  
նախորդի հետ միաժամանակ:

Հրատարակություններն ու թարգմանությունները. - ՉաՀ-  
պանդել է ՊԵՄ (ԹԸ, 1871, էջ 120-130) ժողովածոյում և նրանից արտագրված  
միջնագրայան զօգնական բաղձաթիվ ժառանգներում:

Գրականություն.- ТРОИЦКИЙ, Изложение, с. 21-176.; Текс-  
уан. Controverses, p. 73-119:

## № 6

1166թ. սեպտեմբեր-դեկտեմբեր (°)

Վերնագիր - Նորին՝ յաղագս աւանդութեանց եկեղեցւոյ:

Բովանդակություն.

Աղ. - Առաջուք սակաւութ ևս յաղագս աւանդութեանց եկեղեցւոյ՝  
զոր ունիմք ի Հարցն առաջեաց...

Վրջ, - ...և վարձս ընդ բանաւոր երկրի մշակացն ըստ չափոյ պաղարեբութեանն ընկալիք ի Քրիստոսէ Աստուծոյ. որում փառք եւ զաւրութիւն ընդ Հաւր եւ ընդ Հոգւոյն սրբոյ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

#### Կառուցվածք.

ա) Մուտք. կաթողիկոսն առաջարկում է առանց միժիւնց խարհչու, ճշմարտությամբ քննել ծեսերի խնդիրը:

բ) Բուն խնդիր. արձարժված են ծիսական Հարցեր. 1) պատարագի Հաց, 2) պատարագի գինի, 3) ձննդյան և մկրտության տոն, 4) «որ խաչեցար», 5) Ս. Խաչը բնեւեալ թե՞ առանց բնեւի, 6) Խաչի օրհնություն, 7) պատկերապաշտություն և պատկերամարտություն, 8) առաջավորաց պաշտք և ս. Սարգսի տոն:

գ) Վերջարան-ամփոփում՝ նշովում է, եթե Հովանի և Կեղեցու կարգերի մասին իր այս գրվածքներում զուգն ինչ մեղանշել է Հիմարտության դեմ: Հույս է Հայտնում, որ կեղեցիների միությանը վերաբերող կայսեր նախաձեռնությունը պարտա Հոգ ընկած սերմի նման կրազմապատկզի:

Թվական - Այս վավերագիրը եւ գրված է նախորդ երկու փաստաթղթերի (N<sup>o</sup> 4 և 5) Հետ միաժամանակ և նրանց Հետ առաքվել է Կոստանդնուպոլիս:

Պարագաներ - Կարելի է նաև ենթադրել, որ N<sup>o</sup> 5 և 6 վավերագրերը սկզբում միասնական են եղել, սակայն ներսէս Համբարնացին, ՊԽ Ժողովածու մուծելով առանձնացրել է գրանք: Այս ենթադրության Համար կոգան կարող է ծառայել վավերագրի վերջարան-ամփոփման մէջ առկա Հետևյալ արտահայտությունը. «Արդ՝ այս, ինչ որ յաղաքս ուսնդութեան Հաւատոյ և կարգաց Կեղեցւոյ գրեցաւ ի մէնը սակաւուք: յորժամ ընթերցցի առաջի գերակատար իմաստութեան սուրբ թագաւորութեան ձերոյ...» (ԹԸ, 1871, էջ 143):

Հրատարակություններ և թարգմանություններ. Պաշտանվել է ՊԽ Ժողովածոյում (ԹԸ, 1871, էջ 130-143) և նրանից ընդգրկել է Գրականություն. Троицкий, Изложение, с. 177-221:

**Վերնագիր** - «<sup>Ն</sup>Իսոն βασιλικού καὶ θείου γράμματος πρὸς τὸν Καθολικὸν Ἀρμενίων [Κατέστρωται δὲ ἐν τῷ παρόντι βιβλίῳ τῆς διαλέξεως οὐ μάτην· δηλοῦται γὰρ ἐκ τῆς αὐτοῦ περιλήψεως ἢ τοῦ συγγράμματος ὑπόθεσις ἅπασιν]»: *Փահագձոււ ընդմէս արտաշատու թուրք սրկէ կայ չուկի վազերագրի վերնագրի հետ, և մեր կարծիքով, հետաւստու է: Այն բացատրոււ է միայն, թէ ինչու՞ է այս վազերագրի զրգով Թուրքանոսի տակալին «Տրամաբանութեան» (Ընդ-լեզու) գրքի սկզբում:*

Բանաձև. (X) » N

Այս նաժարի վերջում ընդօրինակուցն (սմեհայն Հաճախակառ-  
թյամբ Թուրքանոսը) ընդէ է նաև այն վերնագրի, որը թերևս եղել է  
նոստրատանը պաշտօնակազմի վազերագիր-պատեհեկի վրա. «<sup>Ն</sup>Η ἐπιγρα-  
φή· Βασιλικόν εἰς τὸν τιμωτάτον καὶ εὐλαβέστατον Καθολικὸν  
τῶν Ἀρμενίων»<sup>30</sup>: *Հետքերի է, որ այս վերնագրի, բացի սկզբի  
«Βασιλικόν» բառից, որը ավելի վազերագրի տեսակի տեղանակն է,  
բացիված է նաժարի թղթատակալի այն մասից, որն ուղղված է Հաստ-  
ատիրոջը: Նոստրատան այս նշանը բանաձևն է. X » N:*

**ՊՅՄ-ում** վազերագրի վերնագրված է այսպես. «<sup>Ն</sup>Թուրք առ-  
ջին՝ Թագաւորին Հոսոսոց Մանուէլի, / առ սէր ներուէս կաթողիկոս  
Հայոց / յազգա ինդրելոյ գմբարանութիւն երկարանշիւրոցս պղ-  
անց»: Բանաձևը հետևան է. X » N, որին Հեռուում է կաթողիկո-  
սական նոստրատանը սրված վերնագրի: Կայտնական թղթի Հաճա-  
րակալուէր ( «<sup>Ն</sup>Թուրք տակալին») սմեհայն Հաճախակառ-  
թյամբ ներ-  
ստու Լամբրոսայուկն է:

**Թիրապաւր**. - Մանուիլ ըն Խրիստի տօ Յեօ քիտօճ քաւիւճ  
Սորփուրոյննիտօ, Յեօստեփիճ, Գնալ, քրատօճ, օթղոճ, Գձ  
Այլուստօ  
քալ Ատքրատօր Քուքալն օ Կոքնիտօ, տօ քիտօտօտօ քալ  
Եւլա  
քեօտօտօ Կաթոլիկօ տօն Քրմենլն տիլ ին քարն Ատօւ.  
**ՊՅՄ-ում**  
Թղթատակալի Թարգմանությունը գրեթե բացայի է: Հաճախակառ-  
թյամբ եւր տեղյակազմը փակագծերում.

«<sup>Ն</sup>Մանուէլ Բրիտտոսի Ատաւանոյ Հաւատարիմ Թագաւոր Ժրա-  
նածին, ստաւաճապատեհայ արքայ, Հգաւր եւ բարձր միշտ, աւառստոս  
եւ ինքնակալ Հոսոսոց Կսմեհիտոս. / [ յԱտաւանոյ Հոսոսատեհայ ] պա-  
տաւական եւ իմաստուն կաթողիկոսի Հայոց [ տեհան ներստի ] /  
պղչայն սիրոյ ապաքեմը»:

<sup>30</sup> «Վերնագիր. Թուրք (թագալորանակ) տղիված թագրի պատվալոր և քարտապոս կա-  
թողիկոսի»:

Թղթառաջի Հայերեն արքերական Հազելիված է. ա) կաթողի-  
կոսի անունը, բ) Հայոց կաթողիկոսական իշխանությունը Աստուծոց  
տրված իննելու մասին բանաձևը: Եզ' Հուլարեն, և' Հայերեն արքե-  
րականության վաղերադրի Թղթառաջի երանան է և ունի նույն կա-  
ռուցվածքը. X ու N, վերջում տրվում է ողջույնի բանաձևը:

### Բովանդակություն.

Այ. - "Η βασιλεία μου πολλάκις άναμαθοῦσα παρ' ὑμῶν ὅτι  
άγαθός ἔστιν ὁ ὑμέτερος σκοπός... (Թագաւորութեանս մերում ի վաղ  
ժամանակաց ծանուցաւ բարւոք մտածութիւն ձեր...)

Վրջ. -...εἶθ' οὕτως καὶ τῆς χάριτος τῆς βασιλείας μου πολ-  
λάπλῆς εὐμοιρῆσαι ὑμῶν γενήσεται ἐφ' οἷς ἂν αὐτῆς δεηθῆτε. (...և  
լառնիցս սնորհի շնորհի Թագաւորութեանս մերոյ բազմապատիկ բարեմա-  
նութեամբ ըստ կամաց ձեր եւ խնդրոյ):

### Կառուցվածք.

ա) Մուտք. կայրը Հույս է Հայտնում, որ կողմերը կմիավորվեն  
ուղղափառ Հազատի շուրջ:

բ) Բուն խնդիր. Թնորհանսին և Աթմանին իր կողմից բանակ-  
ցությունների առաքելու և նրանց լիազորութիւնների մասին:

գ) Վերջարան-ամփոփում. կայրը պատվիրում է ընդառաջ գնալ  
բանակացուների խորհուրդներին:

Ներսես Լամբրոնացու կազմած ՊԽՄ ժողովածու մուծված բուն  
նամակի Թարգմանությունը բավականին Հեռանում է Հուլարեն բը-  
նազրից: Առաջին նորագոյանությունում Թարգմանիչը Հուլարենի քո-  
նակ-ը (Հանաթ), Թարգմանի է «ի վաղ ժամանակաց»: Վաղերադրի  
մուտքում «περὶ τὴν τῶν Χριστιανῶν ὀρθόδοξον πίστιν» արտահայ-  
տությունը Թարգմանված է. «սակս միաւորութեան եկեղեցւոյ սւղ-  
ղափա Հաւատոյ»: Եւն խրիստիանոն (բրիտաններից) արտահայտությամբ  
փոխարեն բնադիր է մուծված «միաւորութեան եկեղեցւոյ եւ»  
բառակապակցությունը, որը բացակայում է Հուլարեն բնագրում: Եւ-  
րուսակություն մեջ Հայերեն Թարգմանությունը Հրմանդին Հեռացել է  
Հուլարեն բնագրի մտքից. եթե Հուլարենում կայրն առաջարկում է  
Հրամարդի Հայոց եկեղեցում պանդական զարմած ծիսադասանական  
այն խնդիրներից, որոնք մերում է Աստանդուկայի եկեղեցին, ապա  
Հայերեն Թարգմանության մեջ չնշարվում է Հայոց եկեղեցու Հա-  
մախոհությունը բյուզանդական եկեղեցու Հեռ, նշելով, որ երկու եկե-  
ղեցիներին պակասում է միայն միությունը: Մի խոսքով, եթե Հուլար-  
են բնագրում պայման է գրվում Հասակեցնել և վերանայել Հայոց

եկեղեցու տեսակետներն «որթոգոքս» եկեղեցու զավանանքին Համապատասխան և զերազանալ ուղղափառության գիրկը, Հայերենում խոսվում է միայն եկեղեցական մրուրյան Հաստատելու անհրաժեշտության մասին: Հաջորդ նախադասություն մեջ չի թարգմանված Թեոդորանուսի ΦΙΛΟΣΟΦΟΥ (ֆիլիսոֆա կամ իմաստասեր) պատմանունը<sup>31</sup>: Հուլիանոսը բնագրում Աթմանուր Փրիլուպուլուսի Հայկական վանքի վանահայր է ( Τῷ ΚΑΘΗΓΟΥΜΕΝῶ ΤΗΣ ἈΡΜΕΝΙΚΗΣ ΜΟΝΗΣ ΤΗΣ ἘΝ ΦΙΛΙΠΠΟΥΠΟΛΕΙ, Հայերեն բնագրում՝ «Հայր վանաց Հայոց, որ է Փրիլուպուլուսաց աշխարհէն»), որը երբեմն սխալմամբ ընկալվել է որպես Փրիլուպուլուսի շրջապատի Հայկական վանքերի վանահայր:

Այն կարծիքով Հայերեն բնագիրն էլ կարելի է բացատրել՝ ելնելով Հուլիանոսի բնագրի տարից, քանի որ «վանք» բառը զբարարում ևս անհնգական է<sup>32</sup>: Թեոդորանուսի գործակիցը, որը վավերագրի Հուլիանոսի բնագրում անվանվում է՝ ΑΤΜΕΝΟΣ (Աթմանոս), Հայերեն թարգմանություն մեջ բացատրված է. «գլխով Հաննէս, մականուն Ութման»: Հուլիանոսը բնագրում Հավատարմում է, որ վերոհիշյալ երկու գնապանագնացները իրավասություն ունեն ներկայացնելու թագավորի և բյուզանդական եկեղեցու զիրքորոշումը, իսկ Հայերենում մտափորագեսելույն միայն արտահայտելով, չի թարգմանվել տի՛Σ ἄγλυτάτης Ἐκλιϛίϛ (սրբազնագույն եկեղեցի) արտահայտությունը: Չորրորդ նախադասությունը ևս անհնամտափոր մեղ է կապվում Հուլիանոսի բնագրի Հնա: Նամակի շարունակություն մեջ կայսրը առաջարկում է ընդհատել գնալ գնապանագնացների խորհուրդներին, իսկ Հայերեն թարգմանություն մեջ միայն եկեղեցիները միավորելու կոչ է անում: Հուլիանոսը կայսրն իր և սեփական թագավորություն մասին խոսում է եզակի թրգով, Հայերենում՝ Հոգնակի: Երկու լեզուներով Հասած բնագրերում կաթողիկոսի և Հայոց եկեղեցու մասին խոսվում է Հոգնակի թրգով: Վերևում ասվածից կարելի է մակարերել.

ա) Վավերագրի ՊԽՄ ժողովածույում Հասած թարգմանություն մեջ մեղափոխված են այն մարերը, որոնք կարող էին ընթերցողի մտքույն ինչ կասկած Հարուցել Հայոց եկեղեցու զավանանքի ուղղափառություն վերաբերյալ կամ իրենց մեջ կոչել են պարունակում՝ վերանայելու Հայոց եկեղեցու ծիսադավանական այն խնդիրները, որոնք

31 Այս փաստը հետևել է Հր. Բարթոլոմայի (տե՛ս **ԵԱՐԽՈՍԻ**, ՔՕԽ, էջ 79):

32 Հովհաննես Աթմանի դավանական պատկերացումը և նրա նեո կապված մի շարք աջ խնդիրների մասին տե՛ս **ԵԱՐԽՈՍԻ**, ՔՕԽ, էջ 78-88, **Zekiyan**, *The Armenians*, pp. 363-373, Տե՛ս նաև այս աշխատության ֆերիմ մասը:

չեն նույնանում Կոստանդնուպոլսի եկեղեցու ավանդական պատկերա-  
ցումները Հետ:

բ) Վազիրազրի Հայերեն թարգմանություն մեջ նմանատիպ բուր-  
ակներգները մոխարինվել են եկեղեցական միություն կարևորություն  
ընդ Հազասող մարերով: Հետևապես՝ մեզ Հասած Հայերեն բնագիրը  
կարելի է Համարել այս վազիրազրի ազատ թարգմանություն: Այն,  
մեր կարծիքով, ստացել է այնպիսի տեսք, ինչպիսին կցանկանային ու-  
նենալ ներսես Լամբրոնացին և իրենց գործունեությունը բյուզանդա-  
կան եկեղեցու Հետ Հարաբերությունները բարելավելու սգով սնվող,  
Հասկնալի կաթողիկոսարանի շուրջ Համարմբգած հոգևորականների  
խումբը<sup>33</sup>:

Կարծում ենք՝ այս թղթի Հուշարեն բնագիրը բառացի Հայերեն  
Թարգմանություն Հետ միասին ժամանակին պետք է պահպանված լի-  
ներ Հասկնալի նստարանանը: Այդ են վիշտում վազիրազրում տակա  
բազմաթիվ արտահայտություններ, որոնք պատճենում են Հուշարեն  
բնագրին Հարազատ բառակապակցությունները:

Յղբավարտ. Καλῶς ἔχε. | Τῷ μηνί Νοεμβρίῳ ἰνδικτιῶνος  
τρίτης ( Ողջ լիբուք: / Գրեցաւ յամսեանս Մայիս, յԸնդիքտիսին յի-  
րեքն):

Բանակը երկման է, բազկացած է թղթագարա-ողջույնից և  
թվականից:

Թվական.- եթե Հայերեն թարգմանության թղթագարա-ող-  
ջույնի բանակը պատճենում է Հուշարենը, պաթագրումը առաջին  
Հայացքից Հակասում է գրան: Հուշարեն բնագրի թվականը՝ երրորդ  
Ընդիքտիսին ( 1169 թ. սեպտեմբեր-1170 թ. սեպտեմբեր)<sup>34</sup> նոյեմբեր ա-  
մբը, Համբնկնում է 1169 թ. նոյեմբերին, պետք է Համարել վազիրա-  
զրի գրման ժամանակը, իսկ Հայերեն տարբերակի թվականը՝ 1170 թ.  
այսին, ամենայն Հավանականությունը փաստաթղթի Հասկնալի կա-  
թողիկոսական նստարանում մուտք գործելու տարիթիվն է: Հետա-  
քերտել է, որ Հայերեն թարգմանության մեջ ևս պահպանվել է բյու-  
զանդական թվագրման Համակարգը:

<sup>33</sup> Ձի բացառում, որ վազիրազրը Պոլսի մողղածոյում դասակարգող ներսես Լամբ-  
րոնացին, Հերապոլի արքեպիսկոպոս Կոստանդինի հետ, ման այս և մյուս վազիրա-  
զրեի թարգմանիչն է: Այս մասին ազնի ժանդանսն տե՛ս աշխատության թարգմա-  
նիչների միջինում հետևածը:

<sup>34</sup> Ըստ Վ. Գորոմնի բրոզանդանական միակամ տարի մկվում էր սեպտեմբերի 23/24-  
ին: Թվագրում այս միակամ տարի մկվելի ժամանակն տե՛ս Գրոմել, La Chro-  
nologie, p. 193-203, մակրոս, էջ 199:

Նոտարական նշումներ. Վազիրազրի Հուհարեն բնագրի վերջում, փաստաթղթի գրման թվականից հետո, նշված է եւ մեկ տարբերակիչ գիծ. «Ե' Երսրթւն Գրամատւոյ Երկրայի Կարմիր Կարմիր Կարմիր Կարմիր Կարմիր»<sup>35</sup>:

Այս նշումը խոսում է այն մասին, որ Թեոփրանոսը վազիրազրին ընդորենակից է Հոսովիտ բերված նախորինակից և ոչ թե Հոսովիտում՝ կայսերական գրվանի փաստաթղթերից:

Հրատարակություններ և թարգմանություններ. *PG*, t. 133, p. 120-121, ԹԸ, 1871, էջ 144-145:

Գրականություն. *Dölger*, *Regesten*, S.82, *Վազ. 1489*, Զեքիան, Համաձուլմանական, էջ 56, Բողոյան, Բյուզանդիայի, էջ 243:

## № 8

### 1170 թ. հոկտեմբեր 1 - 5

Վերնագիր. «Պատարանի թղթոյն մեծի թագաւորին Հոսովոյ կիս Մանուէլի, / գրեալ սրբոյն Ներսիսի կաթողիկոսի / վասն Եշմարիտ դաւանութեան Հուստոյ Հայտատանոց եկեղեցւոյ»: Կառուցվածքը եռամասն է. X ու N բաժանն և թղթի նկարագրական վերնագիր: Հուհարեն թարգմանութեան վերնագիրն է «Πιττάκιον τοῦ Καθολικοῦ τῆς Ἀρμενίας Νοσέρσου | πρὸς τὸν βασιλέα κύρον Μανουήλ | σταλὲν εἰς ἀνθρώπων αὐτοῦ τοῦ βραχαμίων, | καὶ ἐξελληνισθὲν παρὰ τοῦ μοναχοῦ τοῦ Ἀτμάνου τοῦ ἀπὸ Φλιππουπόλεως, | παρῶσιν καὶ τοῦ μαίσιτωρος Θεωριανοῦ, | μηνὶ Δεκεμβρίῳ ἰνδικτιῶνος τετάρτης»<sup>36</sup>: Կառուցվածքը վեցամասն է. 1-2. N ու X բաժանն, 3. նաժարերի, 4. թարգմանչի և 5. խմբագրի նշում, 6. թվական և ժամանակի ճշգրտում: Վազիրազրի Հայերեն պաշտոնական վերնագիրն է «Պատարանի թուղթ», Հուհարենինը՝ Πιττάκιον (նամակ, թուղթ):

35 Կազմարական վազիրազրի թամարի գույնի մասին տե՛ս *Dölger-Karayanseverianos-Byzantinische*, S. 97, 99:

36 «Թոսթ Ներսիսի Կաթողիկոսի Հւսոյ / առ Օնազօր Թագաւորն Մամուէլ, / աւարեալ ի մեզ **քաղաքական** իրոց, / յնդեալ ի Յոյն բարբառ յԱղմանու: միանձն Փիլիպպուպոլեոս, / առաջի Թեոփրանոսի Մազմարոսի, / ի Գեղեցիկեր ածեալն, ի շորթօր ընթելութեմ» (Թմն. **Պալման**, Պատմորիս, էջ 33, ծան. 1. քաղի թամաններն ու ընդձեռն ի՞՞՞ն են - ԱԼԼ):





Հովհաննեսը Հայանել էն կայսեր բանավոր ցանկութունը՝ միտքան տեսնել կաթողիկե-ընդհանրական եկեղեցին:

բ) Բուն խնդիր. Բազկացած է երկու մասից. 1. Քանի որ միութան խնդիրը ավելի շատ աստվածային խնդիր է, քան մարդկային, այդ իսկ պատճառով բանակցելով զեսպանազնացիների Հեռ, ոչ շամտությամբ լսեցինք Հոսոմոց (իմա՝ Բյուզանդական) եկեղեցու Հավատքին վերաբերող բացատրութունները: Քանզի ծովի այս կողմում գտնվող սրոշ Հոսոմներից անառողջ մարեր էինք լսել Քրիստոսի անօրինութան Ձեր պատկերացումների մասին և մտածում էինք, թե դուք Հարում էք Նեստորին: Նույնպես և Դուք մեզնից բաժանված սրոշ ուղիաներից լսել էիք, թե իբր մենք Համարոհ ենք եվտրիքսին: Բանակցությունների ընթացքում պարզվեց նշմարտությունը, ըստ որի Հայտնի դարձավ, որ Դուք Հեռու եք «Նեստորի բաժանմանէն», իսկ մենք՝ «Եւտրիքսայ չփոթմանէն»: Սակայն քանի որ այժմ, չունենալով թաղավորական իշխանություն, Հայածված ենք Հայրենի Հողից և Հեռու ենք բուն Հայաստանի եպիսկոպոսներից և վարդապետներից, Հնարավոր չէ միայն մեզ շրջապատող աստվածաբաններով պատասխանել Ձեր Հարցումներին: Այդ իսկ պատճառով նամակ կգրենք Մեծ Հայք և այլուր, կհավաքենք բոլոր առաջնորդներին, նրանց կներկայացնենք Հավատքին և եկեղեցական կարգին վերաբերող Ձեր պահանջները և զրանից Հեռո կփորձենք Հասնել Համաձայնության: Ու քանի որ զեսպանազնացիները խնդրեցին առայժմ թղթին Հանձնել մեր եկեղեցու զավանությունը և ուղարկել Ձեզ, այդպես էլ վարվում եմ, Հենվելով Եախբան եկեղեցական բաժանումը զորժած վարդապետների սոսանների վրա, 2. Հավատա խոստովանություն:

գ) Վերջարան-ամփոփում. Այսպիսով շարադրեցի Երրորդության և Քրիստոսի անօրինության մասին մեր զավանությունը, իսկ ավելի կատարյալը կառարգի վերահիշյալ ժողովի Հրավիրումից անմիջապես Հեռո:

Պարագաներ. Մուտքը և բուն խնդիրը Հունարեն է թարգմանված բավական մեծ ճշգրտությամբ, թեև կարելի է մատնացույց անել նաև որոշ շեղումներ, որոնք էական իմաստային Հակասությունների անդի չեն տալիս, կամ սովորական զրչական վրիպումներ են<sup>40</sup>: Հայի-

<sup>40</sup> Օրինակ. երբմե կարողիկոսի օգտագրեմած Ձեզ կամ Դուք դեպմունդ թարգմանվել է օսու - ով (187, էջ 145<sup>25</sup>, 146<sup>51</sup>, 147<sup>9</sup>, ԲԳ. t. III, p. 213Aγ, 213Cγ): Համաձայն այս կամ այն բնագրում նկատելի են իմաստաշեղ բացթողումներ: Առաջիկա հայերեն կամ հունարեն հրատարակությունների ժամանակ պետք է հաշվի առնել երկու շեղումներ էլ, որոնք լրացնում են միմյանց:



պնդում է, որ ինքն է Կոստանդնուպոլիս տարեւոր կաթողիկոսի թուղթը<sup>46</sup>:

**Թղթաւարտ.** Հունարեն թարգմանութիւնը պաշտօնեւէ է ոչ միայն թղթի վերջին պարբերութիւնը, այլ նաև թղթաւարտի բանաձևը. και άγαλλιασθηνα εις δεξταν Χριστου του Θεου (և փառք տաճք անուանն Վրիտասս Աստուծոյ):

Հայերեն բնագրում պաշտօնեւէ է միայն թղթաւարտը. «Փրօքցաւ ի թուականութեանս Հայոց զից Հարիւր ինն եւ տասն. յամսեանն Հայոց՝ Արեգ, եւ Հոսոսոց՝ Հոկտեմբեր»: Սա ՊԽՄ-ի միակ վավերագիրն է, որ Հոսոսոց ամսանունին կոչքին օգտագործված է բնիկ Հայկականը:

**Թվականը.** Ըստ գիտորդայ թվագրման, վավերագիրը գրված է 1170 թ. Հոկտեմբերի 1-5-ը, քանի որ այդ օրերին են Համբնկնում այդ երկու ամսանունները<sup>47</sup>: Ինչպես տեսանք, Հունարեն թարգմանութեան գերնագրում վավերագիրը թվագրված է չորրորդ ինդիքտիսնի զեկտեմբեր ամսով, որը Համապատասխանում է 1170 թ. զեկտեմբերին: Այն ցույց է տալիս, որ արդեն այդ ամսին գնալանագնացները Հասնի են Կ.Պոլիս և թարգմանել թուղթը: Թվագրումը Հաճանարար ցույց է տալիս կայսերական նստարատարը վավերագրի մուտքագրման ժամանակը:

Այս նամակի թվագրման խեղճում որոշակի անելիքներ դեռ առջնում են: Բանագնաց Արաբամյաններին վերաբերող Հր. Բարթիկյանի կառուցումը դեռևս գերջնական ճշգրտման կարիք է զգում: Աւշագրով է, որ ըստ այդ ենթադրութեան Թեորիանոսի գնալանախմբից անկախ Կ.Պոլիս կարող էր մեկնել նաև բանագնացների մի այլ խումբ:

Հրատարակություններ և քարգանակություններ. ԹԸ, 1871, էջ 145-153, PG, t. 133, p. 212-224:

Գրականութիւն. **Бартикан**, Роль, с. 81, Ջէքիեան, Համաժրութենական, էջ 56, Բաղդյան, Բյուզանդիայի, էջ 244:

## № 9

1170 թ. հոկտեմբերի 1-5 (°)

<sup>46</sup> Ավելի մանրամասն տե՛ս № 9: Երե՛կ ճեղքները Հր. Բարթիկյանի կտանձնը և լրացնեն այն «Ցրամախօսութեան» սուր վկայութեամբ, ապա՝ Արաբամյան տե՛նքի մերկայացուցի պետք է համարեն նաև Թեորիանոսին:

<sup>47</sup> **Բաղդյան**, Օրացոյցի, էջ 364:







Վրջ.-...πρὸς τὴν τῆς ἀληθείας καὶ ὀρθοδοξίας ἡμέραν καθο-  
δηγῶν.

կառուցվածք.

ա) Մուտք. նամակն ուղարկելու համար շնորհակալություն է  
հայտնում:

բ) Բուն խնդիր. քոն է, որ կաթողիկոսը ճանաչում է ոչ միայն  
երեք արեղենական ժողովները, այլ նաև չորրորդը՝ Քաղկեդոնիերը:  
Հայտնում է, որ բանակցություններ փարեչու համար կրկին Հռոմից է  
ուղարկում Թեոֆանոսին և Աթմանին:

գ) Վերջաբան-ամփոփում. հույս է հայտնում, որ կաթողիկոս  
իր հաջորած եկեղեցական ժողովում Հաստատել կառ իրենց առաջ-  
ված ուղղափառ հավատա հանգանակը:

Այս նամակում կայսրը և՛ իր ( PG, t. 133, p. 233 C1, 2, D4), և՛  
կաթողիկոսի մասին խոսում է եղակի թվով ( PG, 133, p. 233 B14,  
C4-12): Թղթում բանապետ Թեոֆանոսը անվանված է τὸν ἄξιον  
τῆς βασιλείας μου ( ձայնայ թագաւորութեան իմոյ), իսկ Աթմանոսը՝  
սոսկ τὸν μοναχόν (վանական):

Թիքալարտ. Ἐχε καλῶς. | Τῷ μὲν αὐτῷ ἰνδ. 8'.

Բանաձևը երկու մաս ունի՝ ա) հրահանգ, բ) թվական:

Թվականը. Թեոֆանոսի երկրորդ գնդապետականության Հետ  
Կոստանդնուպոլիս առաջված նամակներից (տե՛ս № 10-13) միայն սա  
է թվագրված: Առաջնորդվելով թղթափարսում բերված թվականով,  
կարելի է վավերագրերը թվագրել 1170 թ. սեպտեմբերի 1 - 1171 թ.  
օգոստոսի 31 ժամանակահատվածով, քանի որ Թեոֆանոսը չի ցան-  
կացել կրկնել ամբողջ: Հավանաբար նույն ամսով է թվագրված եղել  
կամ կայսեր «յայտնի» նամակը ( № 12), կամ էլ՝ պատրիարքի ( № 13)  
պաշտոնական թուղթը, որոնց թվագրման բանաձևը Թեոֆանոսի  
«Տրամաբոսութիւնների» Հետագա ընդօրինակությունների ժամանակ  
ընկել է: Համենայն դեպս, ելնելով այն հանգամանքից, որ գնդապետ-  
խմբերը Կոստանդնուպոլիսից Հռոմից էին հասնում 2 - 3 ամսվա ըն-  
թացքում, իսկ Թեոֆանոսը հավասարում է, որ այս անգամ ինքը կաթո-  
ղիկոսական ամբողջ (այսինքն՝ Հռոմից) է հասել Ե ինդիքտիոնի երկ-  
րորդ ամսվա 20-ին (ինճ. Ե՛՝ կաτὰ τὴν Կ՛՝ δευτ. μὲνός), այն է 1171 թ.  
հոկտեմբերի 20-ին ( տե՛ս նաև Ջէքիևան, Համաժրութեանական, էջ 57),  
այս ամենայն հավանականութեամբ այս ձ թղթերը ( № 10-13) գրվել  
են 1171 թ. ամսուր:



Հարկ ենք Համարում այստեղ ելնել, որ Թեոփիանոս իր երկրորդ գնդագնացկառուցութունը Համոնի թագաւորն է նաև այլ սոսմարական Համակարգերով. « Έν ἔτει ἀπὸ κτίσεως κόσμου ᾽σχιπ', ἐν ἔτει δὴ τριακοστῆ τῆς αὐτοκρατορίας τοῦ ἐν βασιλευσίν εὐσεβεστάτου καὶ φιλοχρίστου καὶ θεοστέπτου κυρίου Μανουὴλ τοῦ Πορφυρογενιῆτου καὶ Κομνηνοῦ, ἀνούοντος δευτέρου ἔτος κατὰ μῆνας τρεῖς τοῦ θεοστέπτου βασιλέως ἡμῶν κύρου Ἀλεξίου τοῦ Κομνηνοῦ καὶ υἱοῦ αὐτοῦ » («*Βασίλ. ΘΠΘ (6680) γιωργιαιθῆνὲς ἀγιοσεβί, γαδὶ ἐρεθ-  
 ներորդի ἱερεւակառուցութեան բարեպաշտոն քրիստոսասէր և աստուածա-  
 դասկ արքայի, ձիրանածին տեան Մանուէլի Կամենեայ, յամենան  
 երրորդի, յերկրորդում ամի աստուածապատկ թագաւորի մերոյ Տիտան  
 Ալէքսի Կամենեայ՝ արգայ ետա...» տե՛ս *PG*, t. 133, p. 232 - 233, Հմմտ.  
 Պալենան, Պատմութիւն, էջ 237): Արարչութեան բյուզանդական 6680  
 թվականը ինչպես և 6 (5) ինդիքտիանը Համոնիցում են այժմյան 1171  
 թ. սեպտեմբերի 14 - 1172 թ. սեպտեմբերի 13 ժամանակամիջոցին:  
 Մանուել Կամենեոսը զաւ է բարձրացնել 1143 թ. ապրիլի 8-ին (որը Հա-  
 մապատասխանում է բյուզանդական 6650 թվականի նույն ամսա-  
 թվին): Սույնին էթն դամարենք 30 տարի՝ կատանածը կրկին նույն  
 6680 բյուզանդական արարչութեան թվականը, որը Համոնիցում է 1171  
 թ. սեպտեմբերի 14 - 1172 թ. սեպտեմբերի 13 ժամանակամիջոցին:  
 Ալէքս Բ Կամենեոսի ձեռնդրան թվական է Համարում 1169 թ.  
 սեպտեմբերի 14-ը (տե՛ս *Wirth*, *Wann*, S. 67), իսկ երկու տարի երեք ամիս  
 դամարելիս կատանածը 1171 թ. նոյեմբեր-դեկտեմբերը, որն ամսով  
 արդեն չի Համապատասխանում ինդիքտիանի թվագրմանը: Եթե  
 Հետևելով Հ.Լ.Ջեքիյանին (տե՛ս *Ջեքիյան*, Համամիութենական, էջ 57),  
 վրիպակ Համարենք այս անՀամաձայնութունը և ձկատի ունենանք,  
 որ կայսեր Հայանի թղթի թարգմանութունը տեղի է ունեցել 1171 թ.  
 որ զեկտեմբերին (տե՛ս № 12), ապա կարելի է վերապահությամբ ասել, որ  
 դեպքումսուսմբը Համոնի է Հասել 1171 թ. Հոկտեմբեր-դեկտեմբերին:  
 դեպքումսուսմբը Համոնի է Հասել 1171 թ. Հոկտեմբեր-դեկտեմբերին:  
 ևս ժամանակամիջոցով, կամ՝ վերածելով կայսերական նոտարատանը  
 բնորոշ բանաձևի՝ չորրորդ ինդիքտիանի Համար ընթերցել է*

Պարագաներ, Նամակը կաթողիկոսի Համար ընթերցել է  
 թարգմանից Միքայելը (տե՛ս *PG*, t. 133, p. 236 A5):

Հրատարակութուններ և բարգմանութուններ, *PG*, t. 133,  
 p. 233-236

Գրականություն. *Dölger*, *Regesten*, S. 84, վավ. 1515:

1171 թ. ամսաք

**Վերնագիր.** Կայսեր պաշտանական Հայտերի թղթի գերնագիրն սւ թղթառաջքը Հուներն բնագրով մեզ շնն Հասել: Գրտենք միայն, որ Թեորիանոսն այն անգանուս է ի ՓԱՆԵՐՃ (Հայտերի, բաց): Այդ պատահաւով էլ բերուս ենք միայն գերնագրի Հայերն թարգմանությունը, որը պահպանել է ՊԽՄ ժողովանուս. «Թուղթ կրկին անգամ՝ պատարանի գործնայ ի թագաւորէն Հոսոսոց ի Կրո Մանուէլէ, / Երտիսի կաթուղիկոսի Հայոց, / յաղագս նոյն խնդրոյ միարանութեան երկարանչիւրոց ազգաց եկեղեցւոյ ի աէր մեր Քրիստոսոս»: Բանական եւր եսածասն է. X ու N, և գերնագիր: Կայսերական թղթերի Համարակալուսը (այս դեպքուս՝ «կրկին անգամ»), ամենայն Հազանակալությանս, ՊԽՄ ժողովանոյի կազմող Երտես Լամբրոնացուն է:

Ճր. Գյուղիքը Հուներն բնագրի գերնագիրը վերահանգնուս է ըստ Թեորիանոսի «Տրամարտութեան» բնագրի. Փաներճ ԲԱՍԻԼԷՍ ԿՐԱՓԻՂ<sup>54</sup> (ան՝ս PG, t. 133, p. 236 B1, Հմմտ. Dölger, Regesten, S. 84, վավ. 1506):

Եզրակացություն. Գրեգոր Դ-ի պատրիարքին ուղղված թղթի խորագրում «որ նախ քան զայս փոխեցաւ յաշխարհէ ի Քրիստոս» բացարությունը, ինչպես ասել ենք, Հետագայի Հավելում է և կարելի է վերագրել Երեսնա Լամբրոնացուն: Բերված երկու թղթերի թղթափերազները և վերջարան ողջույնները իրարից շատ են տարբերվում: Այս պարագան, Հավանաբար Հեթանոսը է բացառել նրանով, որ խնդրառարկա նամակներն միմյանցից զատորոշվում են բնույթով, ցանկ որ մեկը պատրիարքին ուղղված կաթողիկոսի պաշտոնական-անհատական նամակն է, մյուսը՝ եկեղեցական ժողովի կողմից գրված ու Հաստատված պատասխանը: Մտնափանդ ակնառու են Գրեգոր Դ-ի թղթառաջը-գրմումի 12-15 բանահետմաները, որնք կարծես գրված են փայլ առաջ Համար չոր ու ցամաք թղթառաջին և Հիշեցնում են բյուզանդական վավերագրերի չերթողակոտն արվեստի նորմերով գրված մուսքերը (Προοίμιον<sup>62</sup>): Ի Հակադրություն այս թղթառաջի և վերջարան-ողջույնի, պատրիարքականները Համեմատաբար ավելի կայուն են և մշակված:

Գրեգոր Դ-ի ժողովական թուղթն ունի նաև Լ.Գ. (= P.S.) և վերջում՝ ստորագրողների ցանկ: Պեսք է ենթադրել, որ բնօրինակում Հիշատակված Հոգևոր գործիչները գրել են սեփական ստորագրությունները, գրել սեփական թեմի անունն ու տրագուսը<sup>63</sup>:

### դ) Պատրիարքական թուղթ առ կաթողիկոս

Բյուզանդական պատրիարքական միջնեկեղեցական թղթի ժանրը, կայսերականի նմանօրությամբ և նրանից անկախ, մշակվել է Կոս-

62 Այդ մասին տե՛ս H.Hanger, PROOIMION, S.19-35.  
63 Պեսք է հուսալ, որ հետագա աղբյուրների ընթացքում կհայտնաբերվի մինև ժ.գ. դարը կաթողիկոսական մտաբանական գրառենթակից դուրս եկած որևէ վավերագրի ինքնագիրը:

սահղեուպոլսի պատրիարքական նոտարատանը, Հարյուրամյակներին ընթացքում: ՊՆՄ ժողովածոյում պահպանվել են այդ թղթերից երկուսը (№ 13 և 23), իսկ Թեոքրանոսի երկրորդ «Տրամախոսութեան» բնագրում՝ մեկը (№ 13): Բացի սրանցից, Հուլարենով պահպանվել է նաև Մանուել Ա Կամեննոսի անունից գրված Միքայել Գ-ի թուղթ, որը չուկեր թղթառաջը և թղթավարս: Հաժանարար գաղմանորանական թղթի համար պարտադիր էր թղթառաջը:

Խորագիր. ՊՆՄ ժողովածոյում պահպանված վերնագրերն մշակվել են կաթողիկոսական նոտարատանը: Թերևս, ինչ-ինչ շարաւայտական ձևափոխումների ենթարկել է նաև ներսես Լամբրոնացին: ՊՆՄ-ում բերված վավերագրերից մեկը վերնագրված է. «Թուղթ տեան Միքայելի պատրիարքին Կոստանդինուպոլսոյ՝ սակս այսը խնդրոյ, առ սուրբ Հայրապետ ներսէս», մյուսը՝ «Թուղթ պատրիարքին Կոստանդինուպոլսի առ կաթողիկոսն Հայոց Գրիգոր, համաձայնութեամբ ամենայն ժողովոյն»: Առաջինում թերևս ներսես Լամբրոնացին է մուծել «սակս այսը խնդրոյ» արաւայտութեանը: Նշանակվում է կաթողիկոսական այս վավերագրերը Հայոց կաթողիկոսարանի գրիվանական գործադարութեան մեջ անվանվել են, ինչպես վերևում հիշատակված մյուս վավերագրերը՝ «Թուղթ»: Հոսմիլյայի կաթողիկոսական գրիվանատանը պահված պատրիարքական նամակի խորագրի բանաձևն է Y ա X:

Թեոքրանոսի երկրորդ «Տրամախոսութեան» բնագրում «առ ներսէս» թուղթն անվանված է. «Τὸ πατριαρχικόν», իսկ Մանուել Ա Կամեննոսի անունից Միքայել Գ Անթրախոսի գրած թուղթը՝ «Ἐπιγράμμα πρὸς τοῦτον τὸν Καθολικὸν | τοῦ ἀγιωτάτου πατριαρχοῦ κύρου Μιχαὴλ τοῦ γεγουότος ὑπάτου τῶν φιλοσόφων, γραφὲν ὡς ἐκ προσώπου τοῦ κραταίου καὶ ἀγίου ἡμῶν βασιλέως κύρου Μανουήλ»: Հնարքերը է, որ տվյալ վերնագրի բանաձևում բյուզանդական կողմը հիշատակված է խորագրի երկրորդ մասում: Վերնագրերն ուկեր Հեաւայտ բանաձևը. N ա (Y)X:

ՊՆՄ ժողովածոյում, վերնագրից Հետո «առ ներսէս» թուղթը պահպանել է նաև Հոսմիլյայի կաթողիկոսարանում այս նամակին կըցված խորագրերը. «Պատուական եւ սուրբ սիրենցելոյ սրբաւնեայ կաթողիկոսին ամենայն Հայաստանեայց տեան ներսէս», որը պատրիարքական նամակի թղթառաջ-գրիվանի բանաձևի տարբերակն է:

Թղթառաջը. Հուլարեն բնագրով պահպանված վերոբերյալ թղթերը չեն պահպանել թղթառաջի բանաձևը. Թեոքրանոս մագիստրոսը գրանք պարզապես կրճատել է: Վերահիշյալ թղթերի խմբերի

նման, այս վավերագրերի թղթասալքներն էլ կարելի է բաժանել երեք բազկացույցիչ մասերի. Y օ N, որին Հաճորում է ողջույնի բանաձևը: «Առ Ներսէս» թղթում բացատկայում է թղթառաջ-ողջույնը:

Թղթառաջը-բանաձևն. Կայսերական վավերագրերի նման և առարկական թղթերի Հետևողությամբ, պատրիարքական թղթերը ևս սկսվում են Կոստանդնուպոլսի Հայրապետի՝ այսինքն նամակի Հեղինակի անունով, Աստծոյ ողորմության Հիշատակումով (invocatio) և երկու պատգանունների արձանագրումով.

1. Միքայել

2. ողորմութեամբն Աստուծոյ

3. արքեպիսկոպոս կոստանդնուպոլսի նոր Հոգիմայ

4. և արեղերական պատրիարք

Թղթառաջ-բանաձևի այս տարրերակն առանց զույգն ինչ տարրերության կրկնվում է «առ Գրիգոր» թղթում: Նույն բանաձևն է սգաագործել Միքայել Գ Անքիալոսը Գրիգոր Դ Տղային ուղղված թուղթը ստորագրելիս, բաց թողնելով միայն արագոսի չորրորդ մասը<sup>64</sup>:

Թղթառաջը-դիմումն, Այս բանաձևն «առ Ներսէս» թղթի Համարունի երկու թարգմանական տարրերակի, որոնցից առաջինը պաւլոսանվել է իբրև նսաարաաանը պաւլոսանվոզ վավերագրի խորագիր և, մեր կարծիքով, ազելի մաս պետք է լինի Հունարեն բնագրի վերնագրին: Տարասակում այդ բանաձևը առկա ենք կենտրոնում: Եթե «առ Ներսէս» թղթի բանաձևը կրկնվում է մյուս երկու բանաձևերում, ապա միայն նշում ենք թվաւամարը.

1. պատուական

1. պատուական

4. պատուական

2. և սուրբ սիրեցնել

2. և սուրբ սիրեցնել

3. սուրբ սիրեցնել

64 Վ.Լ.Երանց բյուզանդական պատմագրի տիտղոսաւարին և ստրաշորոթյանց Գլխովան Քովածում փորձում է ցոյց տալ, որ «տիմկերական պատրիարք» պատգանունը տիտղոսաւարից զուր է ճկել ժԱ դարի սուաշին կնայց (Lacton, Le titre, p. 21-24): Ֆրանսիացի իրուամեթագետն այս առումը խկ փորձում է ժամանակագործին սրբագրել-նշանել ժԿ դարի սուաշին կնայ մասեմաւոր, Կոստանդնուպոլսի մարտադիտ Հովնանցն Ապոկալիպտի վկարութունը նշված տիտղոսի շրջանաւորութից չորս զուտ մասն լսեն Կոպն սնդում, էջ 15: Սակայն հայերենը պատկանում է Թրքայի Գ Անքիալոսի տիտղոսաւարից պարզ կնայ է, որ այդ պատգանունը գործածութեան մեջ էր նաև ժԻ դարի 70-ական թվականներին:

3. յաջորդ բարձր արժանի սրբոյ

4. և սքանչելի մեծազանգ հօրն մերոյ սրբոյն Գրիգորի Հայոց Մեծայ Լուսաւորչի

3. կաթողիկոսին ամենայն Հայաստանայ

5. կաթողիկոս ամենայն Հայոց

4. տեառ

2. Գրիգորի

5. ներսեսի

1. Տեառ

Կարելի է ենթադրել, որ երկրորդ և երրորդ սյունակներում ավելի ճշգրիտ է պահպանվել Հուներեն թղթատաշք-գիմումի բանաձևը. բանի սր կատարողները պատրիարքական նստարատանը Հատուկ չէին կարող լինել առաջին թղթի 3. և 4. մեկերգումները: Հայոց կաթողիկոսական դահի Լուսավորչի արժանի սերված լինելու գաղափարը, ինչպես երևում է, Հատուկ է պատրիարքական նստակներին շարժանց Հակիրճ ու կարուկ կատարողների<sup>65</sup>:

Թղթատաշք-ողջուլն. Այս բանաձևը պահպանվել է միայն «առ Գրիգոր» թղթում. «ուրախ լինել (յեր) ի Տէր» մեկերգումով, թղթատաշքի վերջում:

Թղթավարտ. Հայոց կաթողիկոսներին առաջված պատրիարքական թղթերի թղթավերջերը, ուր սպասելի էր երկմասն կատարողներ (այսինքն Հրամանատի բանաձև և թվական), մեզ են Հասել ոչ ամբողջական: Թղթերից ոչ մեկի թվագրումը չի պահպանվել:

Թղթավարտ-ճրամեշտ. «Առ ներսէս» թղթի վերջարան-ողջուլնի թե՛ Հուներեն, և թե՛ Հայերեն բնագրերը գրեթե լիովին Համապատասխանում են միմյանց.

- 1. Ἐρξωσο
- 2. τιμώτατε

- 1. ողջ լիք
- 2. պատուական

65 Այդ մասին է վկայում Փոս պատրիարքի. Զարաթիա Հայոց կաթողիկոսին գրած մամակի թղթատաշքը (տես ՀԱ, 1968, սյուն. 65-66<sub>11</sub>):



3. καὶ ἐν Κυρίῳ  
 4. ἀγαπετέ  
 5. καὶ καθολικῆ  
 6. ἀνερ ὁσιώτατε

3. յի սուրբ  
 4. սիրեցեալ  
 5. կաթողիկոս  
 6. այր սրբաւեանայ

Հայերեն բանավե՛ր մեկն ասորհրույթյու՛նը *ἐν* Κυρίῳ (ի տեր) որտա՛հայտության թարգմանությունն է սուրբ» գիմնելանով:

Մուտք (prooimion) - Կ. Պառի պատրիարքը մեկնում է Դավթի մեծ՝ Սագմոսի 165-րդ՝ «կաղաղութիւն բազում, որք սիրէն զարէնս Աստուծոյ, եւ ոչ զայ ի նոսա զայթակղութիւն» ասուելը, ըրիստոնայի անենակարնոր Հոսիությունը տեսնելով սիրո՞նն և Հոգևոր կաղաղցության որենքը կատարելու մեկ: Միայն սիրով կարելի է Հասնել եկեղեցու միասնությանը և բուժել բաժանման գնահանքը, որի համար էլ պարտաւոր են Հասնել սուրբ Հայրերից ժառանգություն մնացած փանդներին՝ սեր և զուխ Հղելով միմյանց (№ 13, 23):

Նամակի մուտքում պատրիարքը ողջունում է կաթողիկոսին, միաժամանակ Հիշեցնելով, որ իրենք առաքյալների գործի շարունակողներն են (№ 23): Պատրիարքն ուղղափառ է անգամում Հայոց եկեղեցու Հալաառ Հանգանակը և ուրախ է միության առաջարկի համար (№ 23):

Բուն խնդիր (narratio) - Պատրիարքը սահմանում է բյուզանդական կայսեր գիրքը տիրակալների ընտանիքում, որպես բարի ղեկավար, որը իր բարի գործերը կատարում է աստվածային նորակալում, որը իր բարի գործերը կատարում է աստվածային նորակալում խնամության օգնությամբ<sup>67</sup>: Նա բացատրում է Քրիստոսի բաժանված եկեղեցին միավորելու իրենց ձգտումը, զովում այս Հարցի շուրջ կաթողիկոսի ուղարկած նամակները, բարի ավարտ է մաղթում կաթողիկոսի և կայսեր բաժան գործին (№ 13):

Պատրիարքը Հայտնում է, որ ընդունում է կաթողիկոսին ուղարկված թագավորի թղթի ուղղափառ գովանությունը: Չնակերպում է Երբորգության մասին Կոստանդնուպոլսի եկեղեցու գովանությունը, անզրադաճում աստվածության խնդրին և այն արհամարհում որպես «մի բնություն, մի էություն, մի գորություն, մի իշխանություն, մի տերություն, մի թագավորություն»: Այնուհետև անցնում է Բյուզանդական

<sup>66</sup> Պատրիարքական նամակների մտաբերի ըրիստոնայան սիր զաղափարի՛նն նվիրված բանավե՛րի մասի՛ն տե՛ս՝ *Magal. Prooimion*, S. 174-177:

<sup>67</sup> *Siv. 6*, հոդվ. տեղում, էջ 147-157, 806տ. նաև *Dilger. Familie des Könige*, S. 46-69:

եկեղեցու Հովատո խոստովանությանը, ուր երկու բնություն, կա՞ք ն  
եկրգործություն է վերագրում Քրիստոսին, սակայն Հայոց Հոգևոր  
Հայրերին գրավելու միտումով՝ շեշտում է նաև Ձժի է երկու բնու-  
թեանցն անձնաւորութիւն» (N<sup>o</sup> 23) ձևակերպումը:

Վերջաբան-ամփոփում (conclusion) - Կոստանդնուպոլսի պատ-  
րիարքն Հովատոսացուն է, որ Բյուզանդական եկեղեցին պատրաստ է  
իր գերին ընդունել Հայոց եկեղեցական կազմակերպությանը (N<sup>o</sup> 13):

Նա Հիշեցնում է, որ իրեն Համախոհ եպիսկոպոսների Հետ ան-  
ձամբ է ստորագրել կաթողիկոսին ուղղված նամակը: Հույս է Հայա-  
նում, թե Հայոց եկեղեցին նա իր եպիսկոպոսներով ու Հոգևորական-  
ներով ընթացք կտա միավորության գործին՝ Բյուզանդական եկեղեցու  
օրինակով ստորագրելով պատասխան նամակը: Պատրիարքն իր վստա-  
հությունն է Հայտնում երկու եկեղեցիների միության գործը ավարտին  
հասցնելու խնդրում (N<sup>o</sup> 23):

Եզրակացություն. Պատրիարքական թղթերի պաշտոնական բա-  
նաձևերը, ինչպես կայսերական թղթերինը, բավական կանոնավորված  
են.

ա) Կոստանդնուպոլսի պատրիարքն ըստ փոշոսաչարի՝ իրեն  
Համարում է Աստծո ողորմությամբ իր պաշտոնին նշանակված:  
Թղթառաջի կառուցվածքը նման է կայսերական թղթի Համապատ-  
ասխան Հատվածի կառուցվածքին<sup>68</sup>:

բ) Այս վավերագրերի թարգմանական տարբերակներում առկա  
չեղումները թույլ են ապիս նեթողել, որ կաթողիկոսական նստարա-  
ստեղ մշակվող բանաձևերը ժամանակ առ ժամանակ վերանայվում  
էին:

68 Բյուզանդական պատրիարքական ցանկնեղի մտարդի ուղեցանախորյանը նվերված  
Օստո Մագալի Ռուտզոստորյանը, այս ներդի վերաբերյալ դասական է (Magal, Die  
Prosimien, S. 174-177):

## ՄԱՍՆ Բ.

# ՀԱՅԵՐԵՆ ԵՎ ՀՈՒՆԱՐԵՆ ԺՈՂՈՎԱԾՈՒՆԵՐԸ, ԲԱՆԱԿՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐՆ ՈՒ ԹԱՐԳՄԱՆԻՉՆԵՐԸ

## ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ ՎԱՎԵՐԱԳՐԵՐԻ ՀԱՅԵՐԵՆ ԺՈՂՈՎԱԾՈՒՆ ԵՎ ՆՐԱ ԿԱԶՄՈՂԸ

Հայ-բյուզանդական եկեղեցական փոխհարաբերություններին վերաբերող ժողովածուներ կազմվել են սկսած և դարի առաջին կեսից, սակայն զրանց մեջ իր ծավալով, միասնությամբ և շաշափած Հարցերի շրջանակներով առանձնանում է ԺԲ դարի Հայ-բյուզանդական եկեղեցական բանակցությունների ժողովածուն, ուր ամփոփված են 1165-1178 թթ. երկու եկեղեցիների միջև փոխանակված վավերագրերը:

Այդ ժողովածուի կազմողը ԺԲ դարի երկրորդ կեսի Մերձավոր Արևելքի և Հայոց եկեղեցու պատմության մեջ քաջ Հայտնի եկեղեցա-քաղաքական գործիչ Ներսես Լամբրոնացին է: Լինելով Կիլիկիայում իր հորուսթեամբ երկրորդ՝ Լամբրոնի Օշինյան ազնվականական տան հոգևակը և Հռոմկլայի կաթողիկոսների ազգականը, նա մի շարք նշա-նավոր իրազարժանությունների գործող անձն է: Մասնակցել է Հռոմ-կլայի եկեղեցական ժողովին, Լևոն Բ Ռուբինյան իշխանի Հանձնա-րարությամբ ուղարկվել է զինավորելու Ծրիզրիխ Երկամորուս (Բար-բարսաս) Արևմտահռոմեական կամ Գերմանական կայսեր զլխավորած երրորդ խաչակրաց բանակներին, պաշտոնական զննպանագնացու-

Թյամբ այցելել է Կոստանդնուպոլիս<sup>1</sup>: Ներսես Լամբրոնացին նաև բազմաթիվ անգամներ է մի շարք մեկնությունների, ներքոյ-յանների, ապաղի, ճառերի, թղթերի հեղինակ և հունարենից, լատիններենից ու ասորերենից կատարված բազմաթիվ թարգմանությունների խմբագիր և համաթարգմանիչ<sup>2</sup>: Նրա մատենագրական վաստակը մեջ օւրույն տեղ ունի «Պատճառ խնդրոյ միարանութեան. թաղաւորին Լոսոսոց էմանուէլի եւ սրբոց կաթուղիկոսացն Հայոց Ներսիսի եւ Գրիգորիսի թուղթքն, զոր գրեցին առ միմեանս» վավերագրերի ժողովածուն (կամ ինչպես արգեն կրեատ անվանել ենք՝ ՊՆՄ<sup>3</sup>: Այդ երկի մեջ տեղ են գտել 1165-1178 թթ. եկեղեցիների միության Հայ-բյուզանդական բանակցությունների զեբարբերոյ վավերագրերի<sup>4</sup> մեծագույն ժառ: Ժ՛՛ վարի վերջում ևս Բյուզանդական կայսրության Հեռ փոխանակվել են վավերագրեր, սրեցից մեկ են Հասել միայն երկուսը<sup>5</sup>: Այդ բանակցությունների վերջին փուլի մասնակիցն ու նախամեղծողներից մեկն էլ Ներսես Լամբրոնացին էր<sup>6</sup>:

ՊՆՄ ժողովածուի կազմողը Հայոց եկեղեցու կրիկիայում զբաղվող կարևորագույն եկեղեցական թեմերից մեկի՝ Տաբատ «վերագրական ժայռաքաղաքի» արքեպիսկոպոսն է<sup>7</sup>: Ըստ Հնագույն քրիստոնեական ափանգույթի, այն համարվում էր Գողթա առաքյալի Հայրենի քաղաքը<sup>8</sup>: Քաղաք, որն երկար ժամանակ կրիկիայի բյուզանդական

1 Ներսես Լամբրոնացու եկեղեցադպրատան գործունեության մասին տեղեկացություն պատմաաղբյուրագիտական աշխատանքը տես ԱՆՆՈՒԱՆ, Ներսես Լամբրոնացի, էջ 29-56, հմտ. Սահ ՀԱՄԵՆԻԱՆ, Ներսես, էջ 67-84, ԱՄԱՍՏՐԵԱՆ, Ներսես: Ներսես Լամբրոնացու մասին աշխատություններ լույս են տեսնում Սահ ԱՄՍՐ (տես ԱՌԱՄՆԱՆ, Ներսես):

2 Տես ԱՆՆՈՒԱՆ, Ներսես Լամբրոնացի, էջ 131 և հսև., Zekiyan, Nersès de Lambron, p. 123-134:

3 Հ. Լևոն Ձեղեխյանը վերամշակու Քաղաքիտարանային հոդվածի մեջ Ներսես Լամբրոնացու երկերի շարքում ցիղալամբ չի հիշատակել ՊՆՄ ժողովածուն, որը հրատարակված է ԹԸ, 1871, էջ 85 - 201:

4 Այս վավերագրերի ժողովածուին նվիրված ուսումնասիրություններից կարևորներն են Tekouzes, Costouvozes, ՁԵՐԻՆԱՆ, Համալուսեմական, Kschichian, The Problem:

5 Այդ մասն տես Ըարտեման, Նոր Գրքեր, էջ 285-290, հմտ.Սահ ԲԱՐՏՄԱՆ, К историческ., с. 53-56, ԲՈՐՏՄԱ, Носе-й, с. 224-230:

6 Այդ մասն մանրամասն տես ԱՆՆՈՒԱՆ, Ներսես Լամբրոնացի, էջ 49-52:

7 Տես ԱՆՆՈՒԱՆ, Ներսես, էջ 22, հմտ. Սահ ԹԸ, 1871, էջ 86: Տարտեմ՝ քրիստոնեական եկեղեցու հնագույն կենտրոնի մասին աղելի հանգանակայի տես Hill, Hellenkempet, Kilikien, S. 428-439:

8 Այդ հանգանակայի ցավմիտ շեբավում է Սահ Ներսես Լամբրոնացու երկերում: Օրինակ Սերբերեթալ հատվածում Լամբրոնացի Հևոն քաղաքին անվանվում է, որ Անտոքի հույներն ու լատինները իրեն զնտում են տղան Գղթա առաքյալի արտի

կառավարիչների նստավայրն էր<sup>9</sup> և Կոմենենոս կայսրերի տիեզերահալական քաղաքահանության Հենակետը՝ ԺԱ-ԺԲ դարերի ընթացքում Փոքր Ասիայում<sup>10</sup> և Մերձավոր Արևելքի տարածաշրջանում:

Տարսուռ ԺԲ դարի 70-90-ական թվականներին Հիմնականում Հայաստանի քաղաք էր, սակայն այնտեղ բնակվում էին նաև Կոստանդնուպոլսի եկեղեցուն Հայաստանի քաղկեդոնական Հայեր ու Հույներ, կաթոլիկ լատիններ և Հակոբիկ ասորիներ<sup>11</sup>: Հավանաբար մերձակա բնակավայրերի բնակչության մեջ քիչ թիվ չէին կազմում նաև Հրեաները, մուսուլման արարներն ու թյուրքերը<sup>12</sup>: Բազմազգ բնակչությունը բնորոշ էր նաև այդ տարածաշրջանի՝ Կիլիկիայի և Հյուսիսային Ասորիքի, Հայաստանի մյուս շրջաններին և իր ուրույն գերն է սեռացել ինչպես Ներսես Լամբրոնացու, այնպէս էլ Հուսիկայի կաթոլիկոսարանի և Ռուբինյան իշխանության եկեղեցաքաղաքական և դավանական գործունեության ձևավորման ասպարեզում<sup>13</sup>:

Հայոց եկեղեցու ներսում, Հյուսիսային Հայաստանում և Հասկաղես Հազրատ-ՄանաՀինում ձևավորված ընդգրկությունը ևս մահացուս Հազրատ-ՄանաՀինում ձևավորված ընդգրկությունը ևս մահացուս Հայաստանի և Հյուսիս-արևելյան Հայաստանի տարածքում գործող եկեղեցիները, զանգված վրացական պետության իշխանության ներքո, փորձում էին Հակոբյանի այդ երկրի սահմաններում սկսված ազգային և եկեղեցական ՀամաՀարթեցման քաղաքականությանը և Հակազորվում էին Կիլիկիայում սկիզբ առած ամեն անսակ եկեղեցական կամ ծիսական բարեփոխման, երկյուղելով, որ զա կարող է առիթ տալ օրթոդոքս եկեղեցուն զավանակտե գիջում կոտարելուն: Հյուսիս-արևել-

ժամանորդը. «...Պատմութ անուամբ գմբ Եռաստորթին քարեմանքանց, և Երից արտողն արժանապատի յինչ բաշտղ վկայեմ...» տե՛ս Ներսես Լամբրոնացի, էջ 230-231:

9 Բոստան, Բյուզանդիայի, էջ 202 և հոս.:

10 Այդ ժամանակաշրջանի թիւ է համընկնում նաև Ամստերդ քաղաքի կողմից Տարսուռի ժամանակավոր գտնված լոտն Ալիշան, Սթամբ, էջ 267, թմտ. նաև Hild-Hellenkemper, Kilikien, I. Teil, S. 433:

11 Ներսես Լամբրոնացի ճամփն է թիշտակում իր գլխավորած թեմում օրթոդոք-հույների (մելիենացի), կաթոլիկ-եղեռացիներ (լատինացի) և հակոբիկ-ասորիների (ասորի) անկախությունը տե՛ս Ներսես Լամբրոնացի, էջ 220, թմտ. նաև Hild-Hellenkemper, Kilikien, I. Teil, S. 433:

12 Կիլիկիայում թիշտակված բազմազգ ազգաբնակչության անկախության մասին տե՛ս Hild-Hellenkemper, Kilikien, I. Teil, S. 102-103:

13 Այս մասին անմանրցմանը գծերով տե՛ս Բոստան, Բյուզանդիայի էջ 12-18, 164-190:

յան Հայաստանի վարդապետների կեցվածքը բխում էր տարածաշրջանում Հայոց դավանական ու մշակութային ինքնությունը պահպանելու շահերից: Դրա լավագույն փաստարկը ժՌ-ժԴ դարերում Հյուսիս-արեւելյան Հայաստանի հոգևոր դպրոցներից մեկ Հասան մշակութային բազմաթիվ արձեթևներն են<sup>14</sup>:

Հայոց եկեղեցու կյանքում չափազանց կարևոր նշանակություն ունեցող վավերագրերի ժողովածուի սակզմումը սովորական խնդիր չէր: Նրա հեղինակը պետք է էլք ու մուտք ունենար կաթողիկոսական զիվան, ուր պահվում էին բազմաբնույթ վավերագրեր, որոնցից օգտգինը ոչ միայն լեզուների, այլ նաև մասնագիտական Հասուկ պատրաստություն էր պահանջում: Փողոզածուի կազմման հիմնական նպատակը վավերագրերը հասու գարձնելն էր Հայ Հասարակություն բոլոր շերտերին: Ա քանի որ նման ժողովածուն պետք է շրջանառություն մեղ մտներ Հայոց եկեղեցու բոլոր թևներում, կազմողն նպատակ էր հետապնդում սակզծել զազափարախոսական պայքարում օգտագործելի և ժամանակի պահանջները բավարարող մի գավանական ժողովածու, քանի որ գիտավորություն ուներ միասնականացնել Հայոց եկեղեցու դիրքը Բյուզանդական (կամ օրթոդոքս) եկեղեցու և գավանների հարձակումներին դեմհեղինակ: Պատահական չէ նաև այն փաստը, որ վավերագրերի այդ ժողովածուի կազմման հովանավորողը և հորգորողը սերում էր բյուզանդական նկրտումներ ունեցող իշխանական անից:

ՊՆՄ վավերագրերի ժողովածուն կազմված է ներսես Լամբրոնացու եղբայր, Լամբրոնի իշխան Հեթումի<sup>15</sup> պտովերով: Այդ է վկայում Հայագնաների ուշադրությունը դեռևս ժԹ դարում գրաված ներսես Լամբրոնացու կազմած ՊՆՄ վավերագրերի հավաքածուի հի-

14 Մատենադարան այդ դարոցի ճշակութային ժառանգությանը և Գլխովան Արեւմտեան, «Վարդապետը» վրայերին մեմագրությունը:

15 Նրա մասին հանգամանորեն տե՛ս Արեւմտեան, Ներսես Լամբրոնացի, էջ 116-130: Հերոմ Օշինյանը կենսագրության շքադարձային խոստարներումհերոցից է Գաև այդ փաստը, որ հետագայում ժԳ դարի սկզբին, երբ Լեոնը Ա քաղաքը տարալի էր Գաև հրաժարվել Լամբրոնի իշխանի պարտականություններից, Գա ընդունում է կուսակրոնություն և վաճը մտնում, Հերոմ անունը փոխելով Հեղին (այդ մասին տե՛ս Արեւմտեան, Ներսես Լամբրոնացի, էջ 126): Հերոմ-Հեղին գրծունեությանը վերաբերող և վկայությունները բախվաբան հազվադեպ են: Հավանաբար այդ է պատճառը, որ գրականագետ Գ.Անանյանը շիտություն մեղ է ընկել և ակամա սխալ ճանապարհով էր ընթերցողին տանում է Խաչիո, Հերոմ-Հեղին վերաբերող հիշատակագրությունը վերագրելով ներսես Լամբրոնացուն (տե՛ս Արեւմտեան, Ներսես, էջ 8):

չտասկարանը<sup>16</sup>, ուր Հեղինակը մեզ Հեռաբրբրոզ երկի մասին գրում է. «Այս սկանառէս եւ անանջուր եղեալ նուստս Հոմանուն նորին տեսուն Ներսէսի Հայրապետի, ըստ փափողման քո, իշխան բարեպաշտ եւ Հարազատ եղբայր իմ Հեթում, շարագրեցի Համառուաարար զՊատճառ համակացն Հանդերձ թղթովքն»<sup>17</sup>:

Վերորերջյալ վկայությունից տեղեկանում ենք, որ վաղերազրերի Հովաքածուն սանդձող Ներսես Լամբրոնացին Հեղինակն է 1165 - 1178 թթ. Հայ-բյուզանդական բանակցություններին յարաքանչյուր փուլին Հաջորդող լրացուցիչ «պատճառ»-տեղեկությունների, ժողովածուն ամբողջացնող առաջարտի եւ վերջարտի<sup>18</sup>:

Վաղերազրերի միջնադարյան այս ժողովածոյում գետեղված են Հայոց կաթողիկոսներ Գրիգոր Գ Պաշտօնաւոր (1110<sup>19</sup>-1166), Ներսես Դ Շնորհալու (1166 - 1173), Գրիգոր Դ Տգայի (1173-1193), Բյուզանդիայի կայսր Մանուիլ Ա Կոմնենոսի (1143-1180) եւ Կոստանդնուպոլսի պատրիարք Միքայիլ Գ Անքիւլոսի (1170-1178) միջև փոխանակված նամակների բնագրերը:

ԳեՄ ժողովածուն պարունակում է 1165-1178 թթ. գրված 17 վաղերազրեր, որոնցից առանձնիկ վերոյիշեալ Հայոց կաթողիկոսների<sup>20</sup> դատմական թղթերն են եւ պաշտոնական գրագրությունները Բյուզանդական կայսր եւ պատրիարքի Հեռ, չորսը՝ Մանուիլ Ա Կոմնենոսի, երկուսը՝ Միքայիլ Գ Անքիւլոսի թղթակցություններն են ուղղված Հոսթիլիայի Հայրապետներին: ԳեՄ-ում թղթերը բերված են ըստ ժառանգիչ Հայրապետներին: ԳեՄ-ում թղթերը բերված են ըստ ժառանգիչ Հայրապետների: Երբեմն Ներսես Լամբրոնացին մանակագրական Հերթականության, երբեմն Ներսես Լամբրոնացին մանակագրական Հերթականության, երբեմն Ներսես Լամբրոնացին մանակագրական Հերթականության համ թվակատարի է այս կամ այն թղթի գրման Հանգամանքներին կամ թվակատարի է այս կամ այն թղթի գրման Հանգամանքներին, որոնց մասին նին վերաբերող ծանոթագրություններ՝ «պատճառներ», որոնց մասին

16 Այս թիշտակարանը ժամանակին ճշտակարակ է ՂԱԿԻՅԱՆԸ ԻՍԻՆ ԱՆՆԱՆ, Հայրապետութ., էջ 426-427: Այնուհետև այն տպագրվել է եւ երկու անգամ, տե՛ս ԳՅՈՒՆՅԱՆ Ա. Թիշտակարանը, էջ 622 եւ Ա. ԱՆՆԱՆՅԱՆ, Ներսես Լամբրոնացի, էջ 210:

Ա. Ա. Մարտոսյանը (Հակոբեան Թիշտակարաններ, Ե-ժԻ դր., Երևան 1988) վրիպել է և չի ընդգրկել այն իր աշխատության հատրում:

17 Ա. Ա. ԱՆՆԱՆՅԱՆ, Ներսես Լամբրոնացի, էջ 218:

18 Այս հատվածները ԹԸ, 1871, էջ 85-201-ում ճիշտարակված են աչ տպուստեանով:

19 ԳեՄ ժողովածուի բնագրում (ԹԸ, 1871, էջ 86) Ներսես Լամբրոնացին Գրիգոր Գ Պաշտօնաւորն զանակալման բնական է ժամացում «Հայոց թիգ հարիր լիտն էս ինն»-ը, որը ժամայտատարանում է 1110թ. փետրվարի 22 - 1111 թ. փետրվարի 17 ժամանակաշտակածն:

20 Գրիգոր Գ Պաշտօնաւորի կարողիտն անունով ժողովածու մտնված միակ վաղերազրի հեղինակը, ըստ այդ թղթի վերնագրի, Ներսես Երեմիային է: «Գեալ ի Ներսիսէ արժանակարան լիտրէ տեսն Գրիգորիս կարողիտն Հայոց» (ԹԸ, 1871, էջ 87):

Հեթումինն պրած Հիշատակարան-թղթում ասում է. «շարագրեցի Հա-  
մասուտարար զՊատեառ նամակացն Հանդերձ թղթոգրն»<sup>21</sup>:

Այդ վավերագրերն ինքնին, Հայոց կնիզեցու ուղղափառ գովա-  
նանքի Հովաստման վկայագրեր են, իսկ ժողովածոյում քննարկված՝  
պատմությանը, ձեռին ու քրիստոնեական վարդապետությանը վերա-  
բերող վկայությունների սուսմնասիրությունը թույլ է տալիս որոշել  
կիրիկիայում և Հյուսիսային Ասորիքում Հաստատված Հայկական իշ-  
խանությունների ու Համկկայի կաթողիկոսարանի փոխհարաբերու-  
թյունների բնութիւնը, բուզանդական կայսրութեան և Կոստանդնու-  
պոլսի պատրիարքութեան վերաբերմունքը Մերձագոյ Արևելքում տեղի  
ունեցող կնիզեցական և քաղաքական իրադարձությունների նկատ-  
մամբ<sup>22</sup>:

Ինչպես արդեն նկատել ենք, ժողովածու չեն մտել ձի շարք վա-  
վերագրեր, որոնք անկասկած լրացնում և անպայմանորեն վերաբերում  
են փաստաթղթերի այս խմբին<sup>23</sup>: Կարծում ենք, ներսնս Լամբրոնացին  
ՊՆՄ-ի բնագիր չի մուծել այդ փաստաթղթերը (№ 1, 9, 10, 11, 17, 18,  
20), Հաշիի աննելով Հետևյալ Հանգամանքները.

ա) Այդ վավերագրերի ձի մասւմ շարագրված տեսակետներն  
արդեն արձանագրված են ՊՆՄ-ում տեղ գտած գրություններում<sup>24</sup>:

բ) Վավերագրերի ձի մասը գազանի է եղել և անպատեհ է եղել  
գրանց Հրապարակումը կամ Բյուզանդական կայսրութեան, կամ էլ  
Համկկայի կաթողիկոսութեան գնահատմամբ<sup>25</sup>:

գ) Մի շարք վավերագրեր էլ կամ Հաստատված չեն եղել կաթո-  
ղիկոսանքի և Հոդհոր ժողովների կողմից, կամ էլ սուսմնայով ծրագրա-  
յին բնույթ, գրված են եղել Համկկայի նոսարաասանը պահվելու  
նպատակով և չեն առաքվել Կոստանդնուպոլիս<sup>26</sup>:

21 Տե՛ս Ե. Ա՛ւնճեան, Ներսէս Լամբրոնացի, էջ 218:

22 Հիշատակված հարկերը ճնարակորից չստիւ վաճառման քննված են մեր (Բողոքայն  
Բյուզանդիայի մեծագործարան) մեր:

23 Տե՛ս Բողոքայն, Գրիգոր, էջ 98:

24 Տե՛ս Բողոքայն, Գրիգոր, էջ 97:

25 Օրինակ, Մամուկ Ա Կոստենոսի կամ Ներսն Դ Օսորհայու գաղտնի քղերը (№ 9,  
11), որոնց մասին տե՛ս Բողոքայն, Բյուզանդիայի, էջ 245:

26 Օրինակ, քյուզանդական կողմի պահանջած ինչ ծիսադավանարական կետերի պա-  
տաստանները, Ներսնս Լամբրոնացու Աստեմարանությունը և Համկկայի ժողովի Ծանո-  
սարանից Ներսնս Լամբրոնացու գրած մյուս երկերը (տե՛ս ստորև, Համկկայի ժողովի  
վավերագրերից Աթթուված հատվածը):



Ինչ խոսք, Ներսես Լամբրոնացին ժողովածու չի ներառել նաև Հայոց կաթողիկոսների համակազմությունը Հյուսիս-արևելյան Հայաստանի (Արցախ, Հաղարատ, Սանահին) գորղապետների և առրինների Հակոբիկ եկեղեցու պատրիարքարանի Հեռ<sup>27</sup> (գրատառթղթեր, որոնք անմիջականորեն առնչվում են Հայ-բյուզանդական բանակցություններին)<sup>28</sup>: Հեռագայում, Հաժանարար, արդեն ժԳ դարում, Ներսես Դ ՆորՀայու և Գրիգոր Դ Տղայի թղթերի մեծագույն մասը ՊՆՄ ժողովածուի Հեռ միասին Հաժարգիկ են մեկ մեռազրի մեջ և ավանդվել սերնդն-սերունդ<sup>29</sup>: Այդ ավանդույթը շարունակվում էր նաև ժԹ դարում երկիս գրեթե բոլոր հրատարակություններում<sup>30</sup>:

Հայ բանասիրության չլուծված խնդիրներից է Ներսես Լամբրոնացու ՊՆՄ ժողովածուի կազմման թվականի հզգրոտումը: ՊՆՄ վերագրերի ժողովածուի սահմանն աստիճանաբար մասնակից գործել է որոշել Հ.Ներսես Ակիբյանը: Եկատի ունենալով Փարիզի ուղղախյն դրադարանի № 179 (L) և Երևանի Մաշտոցի անվան Մատենադարանի (այսուհետև՝ ՄՄ) № 2496 (C) Հեռգույն մեռազրերում պահպանված Ներսես Լամբրոնացու վերոհիշյալ հիշատակարանը, բողոքականաց հայագետը գրում է. «Կից յիշատակարանս, որ թեև թուրքական չի կրէր, բայց կը վերջանայ Մանուէլ Կայսէր մաւուան յիշատակութեամբ, որ տեղի ունեցաւ 1180 սեպտ. 24-ին: Ուստի գրութեան տարին ալ նկատելու է այս տարին»<sup>31</sup>: Հաժանարար Ներսես Ակիբյանը եկատի է ունեցել ոչ թէ իջված հիշատակարանը, ուր նման վկայություն չկա, այլ ՊՆՄ-ի վերջարանի՝ «Իսկ երանելիս Հանգուցեալ...յաւիտեանս.

27 Գրիգոր Դ Տղայի և Հրախոսիկ վարդապետների փոխանակված թղթերը մեզ են հասնել առանցիկ մտացոլումով և ժողովածու չեն կազմել (տե՛ս Չիտորո Տղայ, Բանաստեղծություններ, էջ 50-52): Հակոբիկ-առրինների հետ փոխանակված վավերագրերից մեկը պահպանվում է Ներսես Դ Օհրոմազու առանցիկ վավերագրերի ժողովածուում (ԹԸ, 1871, էջ 205-206), իսկ մի քանիսն մասին էլ ակնարկում է Միգայե Ասորի (MS, I, III, p. 335-336): Ասորի հավորիկյանների և Հաղոց եկեղեցու այս դարաշրջանի փոխադարձությունների մասին տե՛ս Տղայ-Միգայեանց, Հայոց, էջ 271-283:

28 Այս հանգամանքը ժամանակին նկատել է Ներսես Ակիբյանը (տե՛ս Ակիբյան, Ներսես Լամբրոնացի, էջ 220):

29 Ներսես Օհրոմազու և Գրիգոր Տղայի նստակների նման ժողովածուի կազմումը Տ. Ներսես Ակիբյանը քննարկում է ժԳ դարի սկզբով և վերագրում է Քոնստանդնուպոլսի (տե՛ս Ակիբյան, Ներսես Լամբրոնացի, էջ 220):

30 Ցե՛ս այս նստակների (ԹԸ) 1788, 1865 և 1871 թվականների հրատարակությունները:

31 Կողմ տեղում, էջ 219:

ամէն» Հասմածը<sup>32</sup>, ուր իսկապես Հիշատակվում է Մանուէլ Ա Կոմնենոս կայսեր մահվան լուրը:

Ժողովածուի վերջաբանում Ներսես Լամբրոնացին նաև ճշգրիտ թվագրում է Մանուէլ Ա Կոմնենոսի մահվան լուրը Հասմէլա Հասնելու ամսաթիվը. «չուաք զգախնան բարեպաշտ աասուածասէր եւ իմաստուն սրբային Հոռոմոց յամսեանն սեպտեմբերի քսան եւ եւթն, եւ ի Թուականիս Հայոց վեց Հարիւր եւ քսան եւ ինն»<sup>33</sup> (= 1180 թ. սեպտեմբերի 27): Ներսես Լամբրոնացին գրան նաև Կոստանդնուպոլսում զեղջերի Հետագա զարգացման ընթացքի մասին. «եւ ազա՛ զի որդի նորին (սկզբնաղբյուրը նկատի ունի Մանուէլ Ա Կոմնենոսի որդի Ալէքս Բ Կոմնենոսին – Ա.Բ.) մահուկ տրաւք յաջորդեալ զաթոսն, ոչ կարաց խաղաղութիւն նուանել զընտանիսն, այլ ցարզ եւս ունի զթագաւորական քաղաքն ամբոխ խռովութեան յիշխանացն եւ յընասանծացն, որք յսկառակ նմին յառնէն. յորոց միջի ոչ սակաւ Հեղձուկք արեանց լինին եւ ամենայն բարեկարգութեանց լուծուծն»<sup>34</sup>:

Այս Հասմածից ակնհայտ է, որ ժողովածուն կյանքի կոչող Ներսես Լամբրոնացին քաշտոեղյակ է Կոստանդնուպոլսում 1180 – 1183 թթ. տեղի ունեցած ողբերգական իրադարձություններին. Մանուէլ Ա Կոմնենոսից Հետո՝ Ալէքս Բ Կոմնենոսի (1180 – 1183) գահակալմանը, Մանուէլ Ա-ի զտակը և փետայի խռովությանը, Անգրոնիկոս Ա Կոմնենոսի խորզավանջներին (մանկահասակ կայսեր խնամակալի՝ Ալէքս Բ-ի մոր սպանությանը, Թագաւորին փրկելու խոստումներով Անգրոնիկոս Ա-ի մուտքին Կոստանդնուպոլիս և Ալէքս Բ-ին գահակից-խնամակալ Հռչակմանը)<sup>35</sup>: ՊէՄ-ի վերջաբանի Հեղինակը վկայում է նաև, որ Բյուզանդական կայսրության մայրաքաղաքում, «յերից ամաց սկսեալ՝ զեռ եւս ար ըստ ուրէ աեկ խռովութիւնն, եւ ի կարծիս ձգի ամենայն միայք առ ի Հաստասելոյ վերսին թագաւորական ամբռոյն»<sup>36</sup>: Վերահիշյալ անցուղարձերին վերաբերող՝ Ներսես

32 Տե՛ս ԹԸ, էջ 201:

33 ԹԸ, 1871, էջ 200: Ուղղագրագիտության մեջ Մանուէլ Ա Կոմնենոսի մահվան ամսաթիվ է նշանակվում 1180 թ. սեպտեմբերի 24-ը (Տե՛ս Grunzel, in Chronologie, p. 358): Միջնադարում հայտնիացրության մասնագետների և լուրերի տարածման բնույթի պատճառով սեպտեմբերի 24-ից մահացած կայսեր մահվան լուրը Հասմէլա լուրն և Կիլիկյան Հայաստանը նկատի ունի մեր հիշմանը) է հասել սեպտեմբերի 27-ին, այսինքն՝ զեղջեր տեք օր Տեսո:

34 ԹԸ, 1871, էջ 201:

35 Այս իրադարձությունների մասին մանրամասնորէց տես՝ *Vasiliev, History*, pp. 433&.

36 ԹԸ, 1871, էջ 201:

Լամբրոնացու ակնարկները և Ալեքս Բ Կոմենենոսի սպանության և նրա  
հարազատ՝ Անդրոնիկոս Կոմենենոսի (1183 - 1185) միակենսան պա-  
հակալման իրազարմությունները մասին պաշտօնական լուսբյուրը և,  
հիշատակությունն այն մասին, որ Մանուել Ա Կոմենենոսի մահվանից  
հետո Բյուզանդական կայսրությունում սկսված խռովություններն  
արդեն երբորդ տարին է ինչ չեն պազարում. թույլ են տալիս մերժել  
Ներսես Աղիկյանի կողմից ՊՆՄ ժողովածուի ստեղծման վերահիշյալ  
թվագրումը:

Ելնելով ՊՆՄ-ում պաշտօնական վկայություններից, ժողովա-  
ծուս պետք է թվագրել 1182 թ. սեպտեմբերի 24 - 1183 թ. սեպտեմբեր  
ժամանակահատվածով: Թվագրման սկիզբ ենք Համարում 1182 թ.  
սեպտեմբերի 24-ը, որովհետև այդ թվականին է սկսվում Ալեքս Բ-ի  
միանձնյա թագավորության երբորդ տարին<sup>37</sup>, իր հոր՝ Մանուել Ա  
Կոմենենոսի մահվանից հետո<sup>38</sup>: Ինչպես որ ցույց տվեցինք վերևում,  
Ներսես Լամբրոնացին կայսրության մայրաքաղաքում տեղի ունեցող  
ներքաղաքական պայքարի սկիզբը թվագրում է իր կողմից ՊՆՄ ժո-  
ղովածուս կազմելուց երեք տարի առաջ («յերից ամաց սկսեալ»): Այդ  
իսկ պատճառով, ժողովածուս գրելու վերջին սահման ենք Համարում  
1183 թ. սեպտեմբերը, քանի որ Ներսես Լամբրոնացին գեա չգիտէ Ա-  
լեքս Բ Կոմենենոսի սպանության և Անդրոնիկոս Ա Կոմենենոսի միակե-  
նան դաշակալման լուրը<sup>39</sup>:

ՊՆՄ ժողովածուի Հես կապված աղբյուրագիտական հարցերը  
քննարկելիս կարևոր նշանակություն ունի նրա կազմողի պատմագի-  
տական Հայացքի և գիրքորոշման քաջաշայտումը: Ինչպես արդեն  
նշվեց, ժողովածուի ստեղծման Համար առիթ է ծառայել Հեթում  
Լամբրոնացու խնդրանքը, սակայն Ներսես Լամբրոնացին բնագրի ա-  
ռաջարկում իսկ ՊՆՄ-ն Հասցեագրել է Հեսապ սերունդներին,  
«Յայա ասնելով, զի թէպէս եւ Հասարակական վարեանուն փոխի  
յատանացս, սակայն որքան մշտնջենաւոր ինքեան թողու յերկրի  
յարմանի յիշատակի գործս, որով եւ յազգս ազգաց տնյայազ զովա-  
սանական երգով պատուի»<sup>40</sup>: Տարածի արքեպիսկոպոսը քաջ գիտակ-  
ցել է ժողովածուի մեջ ընտրված վավերագրերի որժեքը և պատմու-

37 Կեսոֆ ասեմ ՊՆՄ-ի վերջաբանն ձևակալելու համար: «յերից ամաց սկսեալ» (ԹԸ,  
1871, էջ 201):

38 Ալեքս Բ Կոմենենոսը զանազան է ճշտվել ղեկուն իր հոր՝ Մանուել Ա Կոմենենոսի իշ-  
խանութեան տարիներից: Այդ ժամանակ՝ *Clément*, Les Coméne, p. 212:

39 Տե՛ս *Barros*, *Genealogia*, том. B'.

40 ԹԸ, 1871, էջ 85:

Թյան զիրկն անցած մարդկանց արարքներն ու քաղաքական իրազար-  
 անություններն ակնհասեսի կողմից սերունդների դատին հանձնելու  
 անհրաժեշտությունը. «Ձայս տեսնալ մեր՝ ի նուազեալս ժամանակի՝  
 Հայաստանեայց եկեղեցւոյ առաջնորդս, ոչ յապազեմք առ յապա թո-  
 ղուլ գլխաւորակ անուանն նոցա պարագրութեամբ բանի ի Հանդիպեալ  
 ժողովուրդս՝ որք զկնի լինիցին, զի եւ զսոցայցս ախորժելի կարծեմ  
 պատմութիւն քան զնախ եղեւոց Համապատիւ նոցա սրբոց»<sup>41</sup>: Ուրեմն՝  
 արգեն վավերագրերի ժողովածոյի առաջարկում ներսես Լամբրո-  
 նացին հայտնում է, որ այն, ինչ ինքը մատուցելու է ընթերցողին, մեր  
 այսօրվա պատկերացումներով պատմություն է: Հեղինակի նպատակն  
 է ցույց տալ հայ ժողովրդի եկեղեցաքաղաքական կյանքում Հայոց  
 կաթողիկոսների քացատրիկ դերը: Հեղինակը չի մոռանում նաև շեշտել,  
 որ ինքն այդ եկեղեցու բարձրաստիճան պաշտոնյաներից մեկն<sup>42</sup> է:  
 Այդ իսկ պատճառով, ներսես Լամբրոնացին իր երկը սկսում է Գրիգոր  
 Գ Պաշլափունի կաթողիկոսին ուղղված ներբողյանով, անուշադրու-  
 թյան շմատնելով այն պարագան, որ նրա կաթողիկոսության ժամա-  
 նակաշրջանը արթնացնող շունչ հաղորդեց Հայոց եկեղեցական և քա-  
 ղաքական կյանքին, երկարատև ընդարձացումից հետո աշխուժացրեց  
 հոգևոր դատին («Որպէս եւ զկնի ումպոյ՝ արեզակն, և յես ձմերայնոյն՝  
 դարնահային աւուցն քաղցրութիւն, այսպէս եւ երանելի Հայրս ի նու-  
 ազեալ ժամանակս՝ յորժամ մեռն մեզոց տիրէր ի վերայ աշխարհի, եւ  
 մէզ թշուառութեան պաշարէր զմեզ սրոյ եւ զերութեան, երեւեցաւ  
 ջահուորեալ վարդապետութեամբ եւ լուսակրօն վարուք, և փարատեաց  
 յաշխարհէ զմորթիկ մեղացն եւ վերստին կանաչացոյց զմեզ ի ձմերային  
 մեռելութենէն յանուան հոգեւոր չափոյ Հասակի կատարմանն  
 Բրիսատոսի»<sup>43</sup>): Տարսնի արքեպիսկոպոսը չի մոռանում հիշատակել  
 նաև, որ խնկարկելի կաթողիկոսը Գրիգոր Լուսավորչի առհմից է («Ազ-  
 ցաւ Պաշլափկ, ի ցեղէ սրբոյն Գրիգորի»<sup>44</sup>, և երբորդ կաթողիկոսն է  
 Գրիգոր Բ Վկայասերից հետո<sup>45</sup>:

41 ԹԸ, 1871, էջ 85:

42 «...ի նուազեալս ժամանակի Հայաստանեայց եկեղեցու առաջնորդս» (տես ԹԸ, 1871, էջ 85):

43 ԹԸ, 1871, էջ 85:

44 ԹԸ, 1871, էջ 85:

Ներսես Լամբրոնացին առաքելական է համարում Հայոց կաթողիկոսական արքեպ-  
 աքոսը. «յաշիրը առաքելական արքեպ կաթողիկոսութեանս Հայոց» (ԹԸ, 1871, էջ  
 85): Պատմության համար նուազրիբ է հարցի մասն որվածքն նախապատմությունը,  
 քանի որ ինչպես վերևում տեսանք, քրիստոնեական կողմի փոթմուն էր միայն Գրիգոր



պատճառաւ, մոռացեալ զերզմեակուս գաշինան՝ որ ի միջի, եւ գհնա-  
 գանդութիւն նորա»<sup>50</sup>, Հակադիւղ թորստի վարքադիմը Օշինի Հաժա-  
 տարմությանը դեպի բյուզանդական կայսրությունը («Հաւատարմու-  
 պէս մնացեալ ի Հնազանդութիւն արքային Հոռոմոց»<sup>51</sup>): Ըստ ներսն  
 Լամբրոնացու, նրիւ Հայ իշխանների միջև մտաւ պատերազմի Հիմ-  
 նական պատճառն Օշինի Հաժատարմությունն էր «Հոռոմոց (իմա՝  
 բյուզանդական-Ա.Բ.) թագաւորին», որի Համար «ոչ սակաւ խոսովու-  
 թիւնք լինէր եւ Հեղձուք արեան ի մէջ երկուց իշխանացն»<sup>52</sup>:

Ներսն Լամբրոնացին եւ Հաժատարմ է, որ Լամբրոնի տեր Օշին  
 Հեթումյանը բյուզանդական քաղաքականության Հեռանդական  
 պաշտպանն է. Կոստանդնուպոլսի կայսեր Հաժատարիմ ստորական:  
 Բյուզանդիայի գերիշխանության դեմ թորսս Բ. Թուրքիյանի յու-  
 բաքանչյուր ելուլթ Օշինը դիտում էր իրեն սեփական իշխանության  
 դեմ ուղղված, կանխամատմված գործողություն: Լամբրոնին տիրող  
 Հեթումյանների քաղաքական բուր նկրումներն ու ձգտումները ժԲ  
 դարի 60 - 70-ական թթ. ամբողջովին ու կուրորեն, անմնացորդ կաղ-  
 ված են կիլիկիայում Բյուզանդական կայսրության Հետապնդած շա-  
 Հերին: Այդ քաղաքականության գաղափարախոսական դիրքերի վրա է  
 կանգնած նաև ՊԵՄ Ժողովածոյի կազմող ներսն Լամբրոնացին, որը  
 թորսս Բ. Թուրքիյանի պայքարը կիլիկիայի Հայկական իշխանու-  
 թյունները միավորելու և քաղաքական անկախությունն ձեռք բերելու  
 Համար բնութագրում է որպես «խոսովութիւն»<sup>53</sup>:

Ներսն Լամբրոնացու Համար Բյուզանդական կայսրությունը  
 Համաշխարհային քաղաքակրթության պահպանման Հենասյունն ու  
 ապագենն է<sup>54</sup>: Խոսելով Մանուել Ա Կոմնենոս կայսեր մաշից Հետո  
 Բյուզանդիայի սաւմաններում տեղի ունեցած վերսկիչյալ խոսովու-  
 թյունների մասին, Տարսոնի արքեպիսկոպոսը գրանք մատուցում է որ-  
 պես աշխարհի կործանման բացահայտ ոչան. «Թագաւորական արժ-  
 ուոյն՝ որ սիւն է աշխարհի ըստ ասելոյն Պաղոսի»<sup>55</sup>: Բյուզանդական  
 կայսրության քաղաքական կյանքի վայրկիւրումների Հետ է կապում  
 ներսն Լամբրոնացին ողջ աշխարհի կացությունը, «Արդ ընդ սեանն

50 ԹԸ, 1871, էջ 86:

51 Նույն տեղում:

52 Նույն տեղում:

53 ԹԸ, 1871, էջ 86:

54 ԹԸ, 1871, էջ 201:

55 Նույն տեղում:





քրիստոսարանական ելանակութիւնը. «եթէ զկորուստ քրիստոնէիցն զուշակեաց՝ ոչ զհանձ, եւ եթէ զսագոյն սաստկութիւն՝ որ ի նոյն ամն եղև, եւ ոչ զայն եւս»<sup>62</sup>:

Ուրեմն՝ Ներսես Լամբրոնացու քաղաքական Համասամքի Համաձայն պետք է ամեն կերպ աջակցել Բյուզանդական կայսրութեան Հզորութեան ամրապնդմանը և պատապարտել ու խանդարել Թորոս Բ Թուրքիայն իշխանի գործունէութեանը: Այդ իսկ պատճառով յուրաքանչյուր Հարմար պահի Ներսես Լամբրոնացին ոգևորված ներքազյաններ է ծնում Մանուկ և Կոմնենոսին՝ ԺԲ դարի 60-70-ական թթ. Հայ-բյուզանդական փոխհարաբերութեաններում բյուզանդական կողմի Հիմնական Հերոսն<sup>63</sup>: Ներսես Լամբրոնացու Համար Մանուկ և Կոմնենոսը<sup>64</sup> Հայ-բյուզանդական եկեղեցաքաղաքական փոխհարաբերութեանների ամենազորուն և մասնակիցն է. չնայած ՊՄ Տոզոլոթու մտած առաջին վավերագիրը (1165 թ. Ներսես ԵնորՀայի եպիսկոպոսի թուղթը առ Ալեքս Աբսուխ) Ներսես Լամբրոնացին Համարում է կիլիկիայի բյուզանդական զորահրամանատար-կառավարչի պատվերով դրված փաստաթուղթ<sup>65</sup>, այնուամենայնիվ բանակցութեանների Հետագա ընթացքում Մանուկ և Կոմնենոսը այդ փոխհարաբերութեանների իսկական ոգին է և, ըստ Հավաքածայի Հնդիակի, միայն երա մաշն է խանդարում վերջնական Համաձայնութեան կնքմանը:

62 ԹԸ, 1871, էջ 169:

63 Մանուկ և Կոմենոսը Պսև բնագրում երեմն կոչվում է աքա, երեմն՝ քազավոր: Աքա Ռիչառակված է Պսև Տեակալ էլեթում. ԹԸ, էջ 8612, 1079, 11, 10929, 15325, 16827, 20027, քազավոր՝ ԹԸ, էջ 8615, 24, 873, 10923, 25, 27, 14332, 1441, 14520, 15322, 25, 1546, 15935, 1601, 1665, 17, 1688, 10, 15, 17, 19, 25, 1695, 18025, 20114, 32:

64 Ուշաքայլ է նաև այն հաճախումը, թէ Ի՜՜՜ Փակդիթների Տես են հաճողիսում վերոնիշյալ (քազավոր և աքա) տեքստերը: Ռյուզանդական կազար կոչվում է «Յունաց աքալ» (ԹԸ, 1871, էջ 8612), սակայն՝ «քազաթ Լոտոնոց» (ԹԸ, 1871, էջ 8615, 24), այնուամենայնիվ հանդիպում է նաև «աքալ Լոտոնոց» (ԹԸ, 1871, էջ 2007) բանակը: «Քաբուալտ» փակդիթ հանդիպում է և՛ քազավոր (ԹԸ, 1871, էջ 10921, 1546, 1665, 17, 1689, 19, 1695, 20118), և՛ աքա (ԹԸ, 1871, էջ 16817, 2007) տիտղոսների Տես: Աքա բառի Տես հանդիպում է նաև «քաբուալտալտա» (ԹԸ, 1871, էջ 15325) և «քաբուալտ, սաստածալտ և ինաստուն» (ԹԸ 1871, էջ 2007), իսկ քազավորի Տես՝ «աքմանազովի» (ԹԸ, 1871, էջ 20132) անական-տիտղոսները: Ռյուզանդական կաբուրական վավերագրերի տիտղոսների մասին տե՛ս նաև Տերկա աշխատանքի վավերագրերի նախան ընտրյալ համապատասխան հատվածը:

65 Ըստ Ներսես Լամբրոնացու, «որ եւ քաբաննեալ զեյաննիմ, զի զսաստոթիմ Հայտաաննեայ քանն առացեալն զրով պարունակեալ տալն նմա» (ԹԸ, 1871, էջ 87):





## ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ ՎԱՎԵՐԱԳՐԵՐԻ ՀՈՒՆԱՐԵՆ ՃՈՂՈՎԱԾՈՒՆ

Կոմսենոսների դարաշրջանի բյուզանդական ծիսադավանական և վիճարանական գրականությունը մեծ է ծավալով, Հարուստ՝ ընդգրկած Հարցերի ու խնդիրների բազմազանությունը<sup>1</sup>: Կայսերական աստվածաբանները, երկրի ներքին և արտաքին, քաղաքական ու եկեղեցական իրավիճակից ելնելով, Հաճախ նաև կենտրոնական իշխանություն ուղղակի միջամտությամբ, դավանական այս կամ այն կրոնական Համայնքի դեմ<sup>2</sup>, երբեմն էլ՝ եկեղեցիների միություն բանակցություններ էին վարում Հարևան ժողովուրդների Հետ: Դավանական պայքարը, որը վաղուց ի վեր ներխուժել էր կայսրության ներքին ու արտաքին քաղաքականության ոլորտը, գաղափարախոսական Հզոր զենք էր դարձել միջնադարյան Արևելքի և Արևմուտքի, Բյուզանդիայի և Հարևանների փոխհարաբերություններում:

1165 - 1178 թթ. Հայ-բյուզանդական եկեղեցական բանակցությունների բնագրերը ավանդված են նուև բյուզանդական ժառանգրությամբ: Հունարենով պաշտոնական փաստաթղթերը մեզ են Հասել Թեոփրաստի Διᾶλεξις πρὸς τὸν καθολικὸν τῶν Ἀρμενίων («Տրամախոսություն Հայոց կաթողիկոսի Հետ») երկում, ուր ներկայացված են առաջին և երկրորդ այցելությունների բանակցությունների արձանագրությունները:

ԺՐ դարի Հույն փիլիսոփա, Թաղափորական ծառա (ըստ Γωնուելի Ա Կոմսենոսի թղթի բնորոշման. Ἰζίου τῆς βασιλείας μου), ժադիտ-

<sup>1</sup> Այդ դարաշրջանի դավանաբանական գրականության մասին քաղված է հանգամանորեն տե՛ս Brock, Kirche, S. 609 - 629:

<sup>2</sup> Անճա Կոմսենի պատմությունը լի է ճմամ իրադարձությունների մկարագրություններով. տե՛ս AC, t. I, Lib.VI, 2 (p.272-274), 4 (p. 278-280), t. II, Lib. X, 1 (p. 1-4.), Lib. XIV, 8-9 (p. 295-306), Lib. XV, 8-10 (p. 350-365), ճմտ. Anna Comnena, c. 24-25, 177-178, 180-181, 264-265, 394-399, 419-426:



դեցական արհեստի և արքունիքի առջև, բազմացվել է Հարյուրից ավելի օրինակ և Հայաստանի գաղմկի ամբողջ Ռուսներնայում (իմա՝ Ռյուզանդիա-ա-Ա.Ռ.)<sup>6</sup>։ Ուրեմն՝ դեռևս Հոսովյայում առաջին զինուորականացու-թյան արդյունքները դրի են առնվել Թեոփիանոսի կողմից, իսկ Կոստանդնուպոլսում դրանք ընթացվել են արհեստում և արքունիքում։ Մինչև երկրորդ զինուորականացումից ժամանումը Հոսովյա, Ռյուզանդիայում Հայաստանի էին գործել առաջին զինուորականացումից ընթացում տեղի ունեցած վիճարանությունները, քանի որ այդ բնագրի Հարյուրից ավելի օրինակ էր բազմացվել ու տարածվել կայսրության սահմաններում<sup>7</sup>։ Առաջին զինուորականացումից բանակցությունները արձանագրված բնագրի մասին տեղեկություն է պահպանել նաև ՊՆՄ ժողովածուն, «Իսկ նորա (իմա՝ Թեոփիանոս - Ա.Ռ.) առեալ զթուղթն Հանգերձ Հարցմամբքն եւ պատասխաններն, վասն զի դամենայնն ի դրի դրաւ շմեաց, ընթանայր առ Թագաւորն. ապա ի ձեռնն ունելով եւ զպէսպէս Հարցմանցն նշանագրութիւն եւ զՀայաստանեայց յաւժարածիտ լինելն ի միարևուտթիւնն, յայտնէր զգիրն՝ որ ի սրբոյ Հայրապետէն առ Թագաւորն»<sup>8</sup>։

Մեզ Համար ուրույն Հետաքրքրություն է ներկայացնում նաև այն պարագան, թե որտե՞ղ է վերջնական տեսքի բերվել Թեոփիանոսի առաջին բանակցությունների արձանագրությունների բնագիրը։ «Տրամատեսութիւններում» առկա մի շարք վկայություններից կարելի է ենթադրել, թե այդ կատարվել է Կոստանդնուպոլսում՝ Թեոփիանոսի առաջին զինուորականացումից անմիջապես Հետո<sup>9</sup>։ Այս ենթադրություն Համար անուղղակի փաստարկ կարող են ծառայել «Տրամատեսութեան» Հեռնյալ տեղեկությունները.

ա) Թեոփիանոսի առաջին «Տրամատեսութեան» բնագիրը Համատարած է Հոսովյայում դրի առնված արձանագրությունների Հիման վրա։ Այս փաստն է Հաստատում այն վկայությունը, ըստ որի մեզ Հասած բնագիրը չեն մտել Քաղկեդոնի ժողովի դավանանքին վերաբերող

6 Տե՛ս ՔԸ, է. 133, ք. 248 Ը, Հմճո. Պատմագ. Պատմութիւն, էջ 244:

7 Այս տեղեկությունը շարժական ուղագրով է բյուզանդական պաշտմանի տեղեկատվական հեղինակի յափարկան յափերի հասող զարարութեան ուսումնասիրության առումով:

8 ՔԸ, 1871, էջ 153 (ընդգծումը՝ Ա.Ռ.-ի):

9 «Ὡμῶς ἐν ἐπὶ παῖσι τούτοις εὐχαριστήσατες τῷ Θεῷ, τῆς πρὸς Κωνσταντινοπόλιν φερόμενης ἀρχιμἐθα ἀποδότες καὶ εὐλογοῦντες τὸν Θεόν...» (ἐπὶ միջ գեճացեալս զԱստուծոյ վասն անեմաց շնորհաց, եկեղեցի՝ դամուց անդրս ի Կոստանդնուպոլիս) համապատասխան ի Յանապոսին, օրհնելով եւ փառաբանելով զԱստուծան...» տե՛ս ՔԸ, է. 133, ք. 212 Ը, 3, հմճո. Պատմագ. Պատմութիւն, էջ 236, տե՛ս նաև ՔԸ, է. 133, ք. 208 Ը, հմճո. Պատմագ. Պատմութիւն, էջ 234:

մի շարք արտահայտությունների բացատրություններ, որոնց շուրջ կաթողիկոսի խնդրանքով խոսել է Թեոփիանոսը<sup>10</sup>:

բ) Խոսելով ներսև Դ Շնորհալու Հրամանով իրեն Համար արտադրել արժանանա կաթողիկոսի երկի մասին, Թեոփիանոսը գրում է. «...որը և բերեցինք մայրաքաղաք»<sup>11</sup>:

գ) Թեոփիանոսի երկրորդ այցելության ժամանակ առաջին «Տրամախոսություն» բնագիրը եղել է բանագնացի ձեռքին<sup>12</sup>:

դ) «Տրամախոսություն» բնագիրը վերանայված և Համառոտված է Կոստանդնուպոլսում<sup>13</sup>: Այս ենթագրության կողմնակից է Հ. Լևոն Զեքիյանը. «Կարելի է մոռանալ նաև որ Թեոփիանոսի տեղեկագրությունն ալ սղագրական ասենագրությունն էր չէ: Հետևարար, բնական է որ Թեոփիանոս զայն խմբագրած ըլլայ՝ այն գաղափարին Համաձայն Գոր ինք կազմած էր վերաբանություններու արդիւնքի մասին»<sup>14</sup>:

Այժմ անդրադառնանք Թեոփիանոսի առաջին գիտականագնացության ժամանակի խնդրին: Բյուզանդական աստվածաբանը Հառնիլա է Հասել իր Հեռ բերելով Մանուել կայսեր Թուղթը՝ թվագրված երրորդ ինդիքտիստի նոյեմբեր ամսով (76 միլի Ոոեմբրե Ինդիկտիոս տրիդիս)<sup>15</sup>: Այս ինդիքտիսը Համապատասխանում է 1169 թ. սեպտեմբերի

<sup>10</sup> «Ἐπὶ τῆ ἀνεγνώσει ὁ ἔπος, καὶ τὸ βῆλα εὐρέθησαν ἐπιστάοντα, τὸ τε Ἄρ-  
μυκὸν, καὶ τὸ ῥωμαϊκόν, καὶ οἱ τῷ Καθολικῷ δοκῶσιν δοσάειν αὐτοῦ λέξαις  
μετρίαι οἷσα ἰκανῶς τετυχηῖσιν σαφηνείας, δίδεν ὁ Οὐμανὸς πρὸς τὸν Κα-  
θολικόν» («Յետ ընթեմնից զայս վնի ժողովոյն եւ միայն գումնից չմարտանել  
Հայոց ընդ բնագրի Հոսմայեցոց, իրն պարզցան յստակնցան բանք ժողովոյն, որք  
մթնք կարողիկոսին եղեին, Թեփիանոս զայս ինչ արբանցան» տես ԲՃ, է. 133, ք.  
197Ծ. 5. Պատմութ. Միարմորթիւմ, էջ 307. Պատմութ. Պատմորթիւմ, էջ 253):

<sup>11</sup> «καὶ ἐξ μεταγραφῆσά ἐβόθε ἤμιν, ἦν καὶ ἀποκομσμένη πρὸς τὴν βασιλεύ-  
ουσαν» («Հնծայեցաւ մեզ պատճն գրով, եւ մեր անկալ զայն բերաք ընդ մեզ  
յարբանական բաղարն» տես ԲՃ, է. 133, ք. 208Ծ. Պատմութ. Միարմորթիւմ, էջ 313.  
Պատմութ. Պատմորթիւմ, էջ 234):

<sup>12</sup> Այդ է վնարն «ևնա τὰς παραθέσεις τότε, χρήσας ἐν τῇ φρασσει γυρίσθαι  
«θαλέει παραλέει» («ի բայ բողով գվարթիւմ, զոր յստակնում բանակցու-  
րեան ընթեմնուցաք» տես ԲՃ, է. 133, ք. 241Ծ. 3. Պատմութ. Պատմորթիւմ, էջ 241):

<sup>13</sup> «Տրամախոսութեան» բնագրի համառոտման մասին խոսում է այն հասկմաք, որտեղ  
կոչմոքը բնագրում են Փրիստոսն ճնցրան տոնի հարքը: Այստեղ կարողիկոսն ասում  
է, որ ֆրատակված հարքը անաշիք բանակցութեանն չմարտան բազմակմաք  
բնօղել է և կարի չկա կրկնի դրան անդրադառնալու (τὸ κοφθαλασκιστοῦ τοῦτο ἐν τῇ  
προτέρῳ, διαλέγει τρακαϊσθὸν ἰκανῶς εἰς πέρας ἕξῃς χρηστόν· οὐ δὲλ γού-  
βη τευτολογεῖν εἰς κενόν, տես ԲՃ, է. 133, ք. 268Ծ. 3): Ակարկվող հասկմաք  
չտեսնով անաշիք «Տրամախոսութեան» բնագրում, ենթադրում ենք, որ այն բնագրից  
զորս է Թուղթի վերջնական խմբագրման փուլերից որևէ մեկում:

<sup>14</sup> Տես Պատմութ. Համափութեանակ, էջ 30:

<sup>15</sup> ԲՃ, է. 133, ք. 121 Ա.:



Հեռակայես Թեորիանոսի Ա զեսպանախուսքը Հսոմկլա է Հասել 1170 թ. Ճայխի 15-ին: Այս թվականի նշումը չունի Հովհաննիսի Ա Մանուել Ա կայսեր գերեզման Հրչատակված թղթի Հայերեն տարբերակի թվագրումով, որն ըստ մեր ենթադրության, կրում է կաթողիկոսական դիվանատուն վավերագրի մուսթ գործելու արեթիվն ու ամբողջամետան Մայիս, յՆՆդիքարտներն յերեքն»<sup>19</sup>: Ուրեմն՝ անվիճելի է, որ Թեորիանոսն իր առաջին զեսպանախուսքով Հսոմկլա է Հասել 1170 թ. Ճայխի 15-ին:

Արդյոք քանի՞ անգամից է բազկացած եղել առաջին զեսպանախուսքի անձնակազմը: «Տրամախուսութեան» բնագրում որևէ ուղղակի վկայություն այդ մասին չենք գտնում: Վերոհիշյալ՝ Մանուել կայսեր ներսես կաթողիկոսին ուղղված թղթի թե՛ Հուլիանոս, թե՛ Հայերեն տարբերակներում Հրչատակվում են Թեորիանոսը և Փրիլուպուլոսի Հայ վանահայր Հովհաննես Ութմանը (աղլիղոն թագաւորութեան մերսյ վամալաթ Թէօփանոս առ մերդ երկրագանութիւն ապաքեաց թագաւորութիւնս մեր, ընդ նմին և զհայր վանաց Հայոց՝ որ ի Փրիլուպուլոսիսեաց աշխարհէն զՅուհաննէս՝ մականուն Ութման»<sup>20</sup>: Այս խոսքին վերաբերող մի անուղղակի տեղեկություն էլ Հաղորդում է երկրորդ «Տրամախուսութեան» բնագրը<sup>21</sup>: Եթե վերապահությանը ենթարկենք, որ Հովհաննես Ութմանի գործակիցը (ὁ συντροφεός) Թեորիանոսը չէ, պետք է ենթադրել, որ զեսպանախուսքի կազմի մեջ եղել է մի երրորդ անձնակազմի, որը գրի է առել վիճարկությունները:

Աշխարհի արտալուստրոսյան ժյուզմանակաճ 6678 (-5508[9]) թվականը համապատասխանում է 1169 թ. սեպտեմբերի 1 - 1170 թ. օգոստոսի 31 ժամանակահատվածին: Հարցն է, որ Մանուել Ա Կոմենենց արտալուստրի կողմից Կոստանդնուպոլսի Ս.Սոփիայի տաճարում կազմ է օձգել 1143 թ. Արեմբերի 28-ին (սե՛ս *Genesio*, La Chronologie, p. 358, Հմե՛ս. Տակ *Bazzos*, Genealogia, p. 424), որե՛ս՝ նրա թագալուստրոսյան 28-րդ տարին համապատասխանում է 1170 թ. Արեմբերի 28 - 1171 թ. Արեմբերի 27 ժամանակահատվածին: Գրե՛նք Տակ, որ Մանուել Ա-ը գա՛նի է բազկել իր հոր մահի անմիջապես հետո, այ՛ է՛ 1143 թ. արեմբի: Ի լրումն վերոբերյալ փաստարկների, ինդիքսիտնի երրորդ տարվա մայիսի 15-ին համապատասխանում է 1170 թ. մայիսի 15-ը:

<sup>19</sup> ԹԸ, 1871, էջ 145: Այս թույլը Բ. Միլայնի Հավանքի սխալման օրված է հաճախում 1170թ. մայիսին (սե՛ս *Հավանք*, Գառնուպոլս, էջ 105 - 106):

<sup>20</sup> ԹԸ, 1871, էջ 197: Թղթի հուշարե՛ս բնագրում դիպաճագանցճի մասին արվում է «էն τοῦτο τὸν παρόντα λίκρον τῆς βασιλείας μου τὸν μαύροτα Θεωραίου καὶ φιλόσοφον πρὸς τὴν ἐμετέρων εὐλάβειαν ἢ βασιλεία μου ἐξοπέστελε σὺν ἅμα τῷ καθηγομένῳ τῆς Ἀρμενικῆς μονῆς τῆς ἐν Φιλιππουπόλει τῷ Ἀτ- μάνα» (ԹԸ, t. 133, p. 1206p.14):

<sup>21</sup> Ἐγγραφή γὰρ τοῦτο ὁ συντροφεός μου (ԹԸ, t. 133, p. 248Cγ)



Որքան ժամանակ է Հռոմկայում մնացել Թեորիանոսն իր գեապանախմբով: Առաջին բանակցության արձանագրությունների բնագրում երբեմն նշվում է, թե ինչ որ ժամանակով բանակցությունները զադարեցվել, սակայն մի քանի որ անց կրկին շարունակվել են<sup>22</sup>: Բնագրի նմանատիպ Հատվածներից կարելի է ենթադրել, որ վիճարանությունները տևել են ընդամենը 12 - 13 օր: Սակայն, եթե նկատի ունենանք, որ վիճարանությունների գրառումները Աստանկուպուսում «ուղղագիս» անցի բերելիս Թեորիանոսը որոշ Հատվածներ է Հանել, ապա թերևս կարելի է նաև ենթադրել, որ վիճարանություններն ավելի երկար են ընթացել: Համենայն դեպս՝ գեապանախումբը Հռոմկայում է եղել մինչև 1170 թ. Հոկտեմբերը: Մեր այս ենթադրությունը կարծես Հաստատվում է Թեորիանոսի ձեռքով Մանուել Ա Կոմնենոսին առաջված Ներսես Դ Շնորհալու ԳԽՄ-ում պաշտպանված թղթի թվականով. «Փրեցաւ ի Թուականութեանս Հայոց վեց Հարիւր ինն և տասն. յամսեանն Հայոց՝ Արեղ և Հոսոսոց՝ Հոկտեմբեր»<sup>23</sup>: Հայոց ՌԺԹ (619) թվականը Համապատասխանում է 1170 թ. փետրվարի 7 - 1171 թ. փետրվարի 6 ժամանակահատվածին, իսկ Հայոց Արեղ ամիսը Համընկնում է այդ տարվա Հոկտեմբերին՝ ձիայն նրա առաջին Հինգ օրերին: Ուրեմն՝ նամակը գրվել է 1170 թ. Հոկտեմբերի 1 - 5 ժամանակամիջոցին<sup>24</sup>:

Այս բանակցությունների մասին ընդհանուր պատկերացում կազմելու Համար, Հետազոտիչ է իմանալ, թե ովքե՞ր են եղել Թեորիանոսի Հետ վիճարանողները, նրան Հանդիպած անձինք.

1) Հայոց կաթողիկոս Ներսես Դ Շնորհալին, որի Հետ վիճարանությունները կազմում են Թեորիանոսի առաջին «Տրամախոսության» ողջ բովանդակությունը:

2) Ատորերեն իմացող մեկը, որը կաթողիկոսի խնդրանքով Հայերեն է թարգմանում Փրիդոս Առավմարանի «Յաղագս Որդւոյ. բան երկրորդ» երկից մի Հատված<sup>25</sup>:

22 Նման վկայություններ տե՛ս ԲՃ. I. 133, pp. 121C10-148 D6, 149 C2, 164 C6, 164 C8, 165 A12, 197 D7:

23 ԹԸ. 1871, էջ 153:

24 Հմտ. Գև. Ջեղեղյան. Համախոսեմական, էջ 56:

25 «Ο εὖ Καθολικὸς προσκαλεσάμενος ἕνα τῶν ἀγαλλυακόντων Συριστῶν (Տե՛ս ԲՃ. I. 133, p. 152B6, 7. Պատմութիւն, Պատմութիւն, էջ 215): Այս փաստը ցույց է տալիս, թէ Հռոմկայի կաթողիկոսարանի հայ հոգևորականների մէջ կարճ Գև. առիթների գիտակցեր:

Գրիգոր Առավմարանի այս երկի հաջորդ թարգմանությունը ծանոթ է հայագիտությանը տե՛ս Ջառսխանյան. Մատենադարան, էջ 347, Մուրաթյան. Գրիգոր, էջ 79:



3) Գրիգոր եպիսկոպոսը<sup>26</sup>, որն այս բանակցությունների ժամանակ, ըստ Թեոփրաստի, իբր Հայաստանում է, թե ինչը գովանանքով Հուկազայան է<sup>27</sup>:

4) Սափիրի եպիսկոպոս Գեորգոսը<sup>28</sup>;

5) Բեսունի եպիսկոպոս Հովհաննես Ասորին<sup>29</sup>, իր քահանաների Հեռ<sup>30</sup>:

6) Վարդան վարդապետը<sup>31</sup>;

7) Ստեփանոս վարդապետը<sup>32</sup>;

8) Իսահակ եպիսկոպոսը<sup>33</sup>;

Սրանք են այն բոլոր անձինք, ում Հեռ իր առաջին գեղականագիտություն ընթացքում վիճարանել է Թեոփրաստը<sup>34</sup>:

դիտութեանը Հայանի չեն այն տեսքով, որով գրանք մեզ են Հասել Հայերեն թարգմանութեամբ: Գերմանացի Հայագետ Ֆրանց Նիկոլաուս Թրեմերի կատարած Համեմատութեանը արդեն իսկ ցույց է տալիս, որ մեզ Հասած Հունարեն բնագրերը պակասներ ունեն: Միաժամանակ կարելի է Հաստատարար պնդել, որ Նեղոս Դարսապատուի և Նպիֆան Կիպրացու աշխատութեաններում թարգմանիչներն ավելացրել են Հատվածներ, որոնք, մեր կարծիքով, պետք է բխին Հռոմիլյայի եկեղեցական ժողովի նախորդակին Ներսես Լամբրոնացու և Հռոմիլյայի Հայոց կաթողիկոսարանի հոգևորականների որոշ շրջանների որդեկրած սկզբունքներից: Նման Հատվածների թվին ենք գասում Նպիֆան Կիպրացու երկուստեղ գտած «Իշխանութիւն Հայոց Մեծաց» կտորը<sup>52</sup> և Նեղոս Դարսապատուի երկուստեղ պատրիարքական աթոռի և Հայոց կաթողիկոսարանի կարգավիճակը բանավեճող մի շարք Հատվածները<sup>53</sup>:

Նպիֆան Կիպրացու երկ մուծված «Իշխանութիւն Հայոց Մեծաց» գլուխը Համառոտ շարադրանքն է Նեղոս Դարսապատուի Հայերեն թարգմանված երկի նույն բովանդակութեանն ունեցող Հատվածը<sup>54</sup>, ուր թարգմանիչները շեշտում են Հայոց եկեղեցական թեմի ինքնուրույնութեանը: Ե՛վ Նպիֆան Կիպրացու, և՛ Նեղոս Դարսապատուի երկերի թարգմանութեան մեջ Հայոց կաթողիկոսարանի անկախ զիրքը Համեմատված է Կիպրոսի ինքնագլուխ աթոռի նույնանման կարգավիճակի Հետ, միայն այն տարբերութեամբ, որ Նեղոս Դարսապատուի երկում վերահիշյալ երկու անկախ եկեղեցիների շարքում հիշատակվում է նաև Բուլղարիայի վիճակը (թեմը): Նեղոս Դարսապատուի երկի Հունարեն բնագրի Համապատասխան կտորում թեև խոսվում է Կիպրոսի և Բուլղարիայի եկեղեցական թեմերի մասին<sup>55</sup>, սակայն որևէ անկախ չկա արեղծական եկեղեցու աստիճանակարգում Հայոց կաթողիկոսի և նրա գլխավորած թեմի վերաբերեալ:

Այս Հանգամանքը, այնուամենայնիվ, չի խանգարել Ներսես Լամբրոնացուն կիլիկիայի և Հյուսիսային Ասորիքի Հունագավան գործիչներին մեկի՝ Յուսկան արգելական եզնավորի Հայոց եկեղեցու դեմ ծավալած գաղափարախոսական պայքարի գրույթներին հակադրել սեփական Հավելումը, նշելով, թէ, «եւ տարախոսն, յորում կարգ

52 Եւսեւմ, էջ 53-54:

53 Նևոս, էջ 1016-1124, 1316-1622 և այլուր:

54 Եւսեւմ, էջ 52-54, 6680. Նեղոս, էջ 10:

55 Նևոս, էջ 1035-1119:

եպիսկոպոսացն սահմանի գրեալ է՝ որ Հայոց կաթողիկոսն պատուեցաւ վասն սրբոյն Գրիգորի, որպէս եւ կղզին կիպրոսի վասն առաքելոյն Բաւաբայ եւ յիւրեանցն եպիսկոպոսաց առեալն արքեպիսկոպոսքն զճեռնապարտութիւն: Ըստ զայս ի Ձեր գրոց ունիմք՝ Հաստատեալ եւ ոչ ի Հայոց»<sup>56</sup>:

Հայ-բյուզանդական եկեղեցաբազմական բունակցությունները Մանուել Ա Կոմնենոսի մահէից հետո լնացման փուլ են մտնում և ընդհատում են բազմական երկար ժամանակով: Բյուզանդական կայսրությունն այնքա հույս չունէր նոր ապագաբաղանքներ կազմակերպելով վերականգնել սեփական պետության հեղինակությունը կիրիկիայում և Հյուսիսային Ասորիքում: Սակայն այս ասպարեզում կայսրերը և նրանց կամակաարները փորձում էին շրջանցել Հայոց եկեղեցու Հեռավարձ բունակցությունները, բռնի կերպով կամ Համագման նահապարհով Հունագավանություն տարածելով Հայոց կաթողիկոսարանին ենթակա Փիլիպուպոլսի (այժմ Գլովգիվ) և Փոքր Ասիայի որոշ թեմերում<sup>57</sup>: Ի ասորիքություն այս ստանձություններին, Հայոց եկեղեցու Համար Հայ-բյուզանդական բունակցություններին Հետագա շարունակուժը զնուս պահպանում էր կենսունակությունը: 1197 թ. Ներսես Լամբրոնացու այցը Կոստանդնուպոլիս և բունակցություններում քննարկված Հարցերը այդ մասին են վկայում<sup>58</sup>: Այդ բունակցություններն ընթանում էին Կ.Պոլսի Ա.Գէորգ եկեղեցում<sup>59</sup>, իսկ ծրագրավանական վճեռերին մասնակցում էին Ալեքս Գ Անգելուս կայսրը (1195-1202թթ), Գեորգ Բ Փոսֆիլիսոս պապրիարքը, արքունիքի և եկեղեցու գործիչներ<sup>61</sup>: Դրանով կաթողիկոսարանը ձգտում էր կիրիկիայի և Հյուսիսային Ասորիքի բազմասարք բնակչության առկայության պայմաններում զայնք Հաստատել Բյուզանդական կայսրության և օրթոդոքս եկեղեցու ու բնակչության Հեռ, նպաստել նշված տարածքներում Հայոց եկեղեցու գիրքերի ամբողջմանը:

56 Տե՛ս Առանձն. էջ 24 (ընդգծումը իմն է.-Ա.Ռ.):

57 Այդ մասով է վկայում Իսահակ Անգելոսի նամակի քննությունը. տե՛ս Ընտրեւան. Նոր ցրտեր, էջ 287, Сборник, К истории, с. 53-56:

58 Ներսես Լամբրոնացու կոստանդնուպոլսյան բանակցությունների քննվող տե՛ս Խոսակցությունը Ա.Ներսեսի Լամբրոնացու ընդ պատիարքի Յուսեպ, Կ.Պոլիս 1861, էջ 3-24:

59 Սուրբ մանասի՛ր - իմք.:

60 Գիսուրյանը հայտնի է նաև փճել 1197 թ. այս նպատեղ ուղարկված Գրիգոր Ա Ասիլբառ (1194-1203) կաթողիկոսի փ նամակը տե՛ս Сборник, Москва, с.227-230:

61 Առանձն, Ներսես, էջ 201:

ժՌ գարի ընթացքում, մասնավորապես 80-ական թվականներին օրթոգոքո-հունարական հոգևորականությունը (որոնց մեջ կային նաև հայազգի գործիչներ) բացահայտ պայքար է ծավալում հայկական եկեղեցու դեմ: Նրանց կողմից ոչ միայն Հերձվածոզական է համարվում «մի բնութիւն» Հայոց գաղանարանական բանաձևը, այլև Հիմք ընդունելով Ս.Սահակի «Տեսիլքը», պնդում էին. «Ոչ է առ Հայոց ազգի եկեղեցի քահանայութեան շնորհ»<sup>62</sup>: Ներսես Ալեքիմյանը այսպես է բացատրում Յուսկան ճգնաժամի և նրա հետևորդների տեսակետը. «Ս. Սահակի Տեսիլքին համաձայն դադրած էր Հայոց քահանայապետութիւնը, ուստի նաև ձեռնադրութիւն տալու իրաւունքը»<sup>63</sup>: Ուստի, եթե հոգևորականն է ընդունում բյուզանդական օրթոգոքոություն՝ պետք է կրկին ձեռնադրվի, եթե շարքային քրիստոնյան՝ հրահանգվում էր «մեռանիւ կեցիւ»<sup>64</sup>: Ինչպես երևում է վերորեքյալից, Բյուզանդական եկեղեցին և նրա հետևորդներն այդ պայքարում չափազանց կարևոր դեր են հատկացրել Ս.Սահակի «Տեսիլքին»<sup>65</sup>: Բյուզանդական հոգևորականության գաղափարախոսական պայքարի այս լծակի խոսանման ակնկալություններ է, որ Ներսես Լամբրոնացին և Կոստանդին Հերակլոսեցին դեռևս ժՌ գարի 70-ական թթ. ձեռնամուխ են լինում Անդրեաս և Արեթա Կեսարացիների «Յովհաննու Սայանութեան մեկնութիւն» աշխատութեան թարգմանությունը<sup>66</sup>:

Հստակապի կաթողիկոսարանի նստարատանը աշխատող Թարգմանիչներ Կոստանդին Հերակլոսեցու և Ներսես Լամբրոնացու այս աշխատանքը ևս բառացի թարգմանությունն չէ: Այսանց դժգար է հասել թարգմանիչների Հովհյումներին, քանի որ Հայերեն բնագրի գլխակարգությունը ամբողջովին համապատասխանում է հունարենի հետ: Այնուամենայնիվ, մասնագետների ուշադրությունը կարելի է հրավիրել միայն մեկ կարևոր հանգամանքի վրա. հունարենով պահպանված առաջարանը չի կրկնվում Հայերեն թարգմանության մեջ, որը շատ անգիտելի համաստարար վերադասում է հունարեն բնագրի բովանդակությունը: Թարգմանությունը գրեթե բառացի է զառ-

62 Յուսկան, էջ 21:

63 Ալեքիմյան, Ներսես, էջ 217:

64 Յուսկան, էջ 21:

65 Նրդի հոմաքան բնագիրը տե՛ս ԲԸ, 1. 132, p. 1155-1238: Այս նրդի մասին տե՛ս *Menaker-Gov*, Keosopy, c 208-222:

66 Հունարեն բնագրի հրատարակությունը տե՛ս ԲԸ, 1. 106, p. 494-786: Հայերեն թարգմանության հրատարակումը՝ *Մեկնութեան Յուսկանութեան*: Տե՛ս նաև Ալեքիմյան, Ներսես, էջ 267-273:

նում այն Հատվածներում, որ մեկնվում է «Յովհաննու Յայտնութեան» մեջ կանխատեսվող բարքերի ապականության և քաղաքի զարհուրելի աղտեղության մասին գլուխը<sup>67</sup>: Այս Հատվածը Արեթեան ու Անդրեասը մեկնում են սրպես Կոստանդնուպոլսի կործանման մասին գուշակություն<sup>68</sup>:

Թարգմանելով այդ մեկնությունը, Ներսես Լամբրոնացին և Կոստանդին Հերապոլսացին փորձել են ս. Սահակի «Տեսիլքին» հակադրել «Յովհաննու Յայտնութեան» կանխագուշակությունը: «Ան Յուսկան» թղթում Ներսես Լամբրոնացին այդ առիթով գրում է. «Եւ զայս Յահաննէս կանխաւ ի վերայ Կոստանդնուպոլսի ետես, եւ մեկնիչքն Անդրէաս եւ Թէապլոս (այսպե՛ս) մտերամասնաբար Հելլենացի բարբառով եւ զրոզ ի վերայ նորին լուծին, որ կայ առ իս նայն զրոզն եւ Հայ Թարգմանութեամբ: Զոր ինձ թուի թէ իմաստունքն, որ ըստ Սահակայ տեսչեանն զուշացեալ խորշեցան ի Հայոց Կոստանդին ՈւռՀայոցին, եւ Գերամարտիկ Կլայցցին, եւ յետաւք երէց Վահկացին, ոչ էին ընթերցեալ. զի այս կարի սոսկայի եւ քամնելի նախատինք է քան զՍահակայ շնչեալ գիրն վարուց եւ Հուսատոց. եւ արեան Հեղման եւ կախարչութեան, բաւական էին Համարեալ զգործը չարեացն Հաղորդութիւն յորում էին՝ քան զմեծամեծացն առ որ ընթացան»<sup>69</sup>:

Նշելով վերոհիշյալ փաստերից, Կոստանդին Հերապոլսացու և Ներսես Լամբրոնացու Համասեղ թարգմանական աշխատանքների թվում կարելի է դասել նաև Պետր Ժողովմու ժոռե կայսր Մանուէլ Ա Կամենոսի և Միքայել Գ Անքիալոս պատրիարքի նամակների Հայերեն թարգմանությունների վերջնական բնագրերը. սրանց նախորդականը պետք է պահպանվեն Համակլայի նոտարատան պահպում:

Համագործակցելով ազգությունը Հույն, Հերապոլսի մեարապոլիա Կոստանդինի Հեա, Ներսես Լամբրոնացին 1179-80թթ. Հուլիանոսից Հայերեն են թարգմանել վերոհիշեալ աշխատությունները Հայոց կաթողիկոսի աջակցուն մեկնատությունը<sup>70</sup>: Այդ Համասեղ թարգմանությունների իրագործման աշխատանքակազմի մասին Ներսես Լամբրո-

67 Օւոյնմանն Օստոնոտեմ, ԺԸ:

68 Տես ՄԸ, t. 106, p. 720-725, Ռուս. Մեկնութեան Օստոնոտեմ, էջ 234-244:

69 Օստոնմ, էջ 26:

70 Այդ նամակների Պերսեթումբ էլ կարելի է ասել. «Կարողիկոս... Գրեզորիոս ... քրտալուսաց բարգմանի ի մեռն մերապոլսոյն Սերապուղի Կոստանդնուց» յտ՛ն Աննիման, Ներսես, էջ 269, «Կամարն... կարողիկոսն Գրեզորյ թողմանեց զայս ... ի մեռն մերապոլսոյն Սերապուղի Կոստանդնուց» Աննիման, Ներսես, էջ 281:





## ՄԱՍՆ Գ.

### ՀՌՈՄԿԼԱՅԻ ԺՈՂՈՎՆ ՈՒ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԵՐԽՆԴԻՐԸ

#### ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

#### ՀՌՈՄԿԼԱՅԻ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ ԵՎ ՊԽՄ ԺՈՂՈՎԱԾՈՒ ՉՄՏԱԾ ՆՐԱ ՎԱՎԵՐԱԳՐԵՐԸ

Ժողովի հրավիրման պարագաները. ՊՄ-ի ծանոթագրու-  
թյուններից մեկում, որը վերաբերում է Մանուկ Ա Կոմնենոս կայսեր  
առ Հայոց կաթողիկոս թղթին (N<sup>o</sup> 22) և Կոստանդնուպոլսի եկեղեցա-  
կան ժողովի մասնակիցների ստորագրած պատրիարքական կամակիին  
(N<sup>o</sup> 23), ներսեռ Լամբրոնացիին անդրադառնում է նշված վավերագրերի  
պատասխանների գրման պարագաներին: Ըստ ՊՄ-ի կազմողի՝ ընդ-  
առաջ գնալով Հայոց կաթողիկոսարանին, բյուզանդական կողմն.  
«փոխան ինն գլխոցն՝ զոր ի ժամանակս երանելոյսն տեսան ներսիսի  
խնդրելին, որ ծանր թուէր յայս մեր, միայն զսա խնդրեցին զՀաւատոյս  
բան՝ նիւթ միարանութեան, եւ քննեալ զսոյն գօրին ուղղափառ եւ  
Համաձայն սրբոյ Հարցն»<sup>1</sup>: Իրոք, Մանուկ Ա Կոմնենոսի և Միքայիլ  
Գ Անքիլալոսի 1176 թ. գրված նամակներում Բյուզանդական եկեղեցին  
այլևս չէր պաշտօնում անվերապաՆորին Հրամարվել քանավե՛նի  
աարկա գարձած ծիսական անՀամաձայնությունները վերացնելու  
պաշտանքից և, ճանաչելով Հայոց գավառների ուղղափառությունը,  
խնդրում էր, որ Հավարվելիք եկեղեցական ժողովը Համկլայի սրբա-  
գան քաճանայապետի Հետ Համատեղ կրկին զրի Հավատա խոսա-

<sup>1</sup> ԹԸ, 1871, էջ 180:



թյունը պահպանել է ՊՅՄ ժողովածուն. «Այս ժողովեցան յամենայն պատասայ եպիսկոպոսք ի սուրբ Պատրյայն, ի Հայրապետական օթոնն Հռոմկայ՝ որ է առ արին Եփրատայ...»<sup>7</sup>: Ակնհայտ է, որ ժողովը գումարով է կաթողիկոսանիստ Հռոմկա բերդաքաղաքում, սուրբ Զատիկի տոնակատարության օրերին: Հռոմկայի ժողովի թվականը պարզելու ամենակարևոր տեղեկությունը այդ Հովաքի կողմից Բյուզանդական պատրիարքին ուղղված ժողովական նամակի խորագրի Հետևյալ Հասվածն է. «...պատասխանի թղթոյն Միքայելի պատրիարքին՝ որ նախ քան զայս փոխեցաւ յայշխարհէ ի Քրիստոս»<sup>8</sup>: Հայտնի է, որ Միքայել Գ Անքիւղոս պատրիարքը մահացել է 1178 թ. մարտ ամսին<sup>9</sup>: Ուրեմն՝ սկզբնաղբյուրում հիշատակված Պատեքի տոնակատարությունը Համպատասխանում է 1178 թ. ապրիլի իննին<sup>10</sup>: Ելնելով այս իրողությունից, Հռոմկայի եկեղեցական ժողովը կարելի է թվագրել 1178 թ. ապրիլի 9-ից Հեռա ընկած մոտակա շարքի մամանակահատվածով<sup>11</sup>, քանի որ ըստ նույն սկզբնաղբյուրի. «կատարեալ զգրկազործ աւարք շարչարանայ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ի միասին, եւ յեա այսորիկ պարտաղեցին ի քննութիւն դրեցելոց թղթոցս ի թագաւորէն Հռոմոց եւ յեկեղեցւոյն»<sup>12</sup>:

ժողովի հրավիրվել է Հռոմկայում, որ և ընթերցվել է Ներսես Ամիրճանցու Առն-ճարսեղոյնը (տե՛ս Աննան, Ներսես, էջ 29-35, 193-194):

7 ԹԸ. 1871, էջ 180:

Արև սքեմիսպայանցի մասնացույց է անում Հռոմկայում գումարված երեք ժողով.

ա) Առաջին ժողով, որը տեղի է ունեցել 1165 թ.: Այստեղ Աննայն Հայոց կաթողիկոս է ընտրվել Ներսես Գ Ծնողալից,

բ) երկրորդ ժողով, որը քվազում է 1172թ. հետ ընկած ժամանակաշրջանով, հրավիրվել է, սակայն տեղի չի ունեցել: Այստեղ, ըստ հրա, պետք է ընճարելին հանրազանքական նկղեցու ինք պամանքերը,

գ) երրորդ ժողովի նա քվազում է 1179 թ., որ, ըստ հրա, հազարվել էին երեսուցորդ երեսունվեց եպիսկոպոս: Այս ժողովին յն մասնակցել Արևելյան եպիսկոպոսները (տե՛ս Միստուխան, Պատմություն, էջ 111-117):

8 ԹԸ. 1871, էջ 182:

9 Տե՛ս Gravel, La Chronologie, p. 436:

10 Gravel, La Chronologie, p. 257, Բարսեղյան, Օրացույց, էջ 439:

11 Ժողովի գումարման քվազանը ճշտելիս ընտրել ենք Ք. Ներսես Ամիրճանի որդեգրած ճամապարհը, սակայն քաղմախտական հայազեղ կաթոն է, թե Միքայել Գ Անքիւղոս պատրիարքը մահացել է 1177թ. մարտ-ապրիլին: Նա հղում է բյուզանդական Լրդի փարոց ճնացած աշխատանքը: Հետևաբար, ըստ Ն.Աննանի, ժողովն էլ գումարվել է 1177 թ. ապրիլի 24-ը հետ (տե՛ս Աննան, Ներսես, էջ 38):

12 ԹԸ. 1871, էջ 180:



բիւրքին<sup>16</sup>: Վազիրազրերից երկրորդի տակ ստորագրել են 33 ժողովականներ (Վազիրազրագիտական ցանկ, № 24, 25):

Այժմ Հարկ ենք Համարում ուշադրութեամբ Հրավիրել Ներսես Լամբրոնացու մատենադարան մի քանի երկերի վրա, որոնք առկա թյուն ունեն քննարկիչոց ժողովի Հետ: Նկատի ունենք նրա գործունեության վաղ շրջանին պատկանող երկերի ժողովածուն, որը վերաբերում է Հայ-բյուզանդական բանակցության եննրում արժարեզմ խնդրներին: Այդ ժողովածոյի մեզ Հասած օրինակներն ընդօրինակվել են 1205-6 թ. Ներսես Լամբրոնացու քրոջ որդու՝ Ներսես քահանայի մեկնանությունը արտագրված ձեռագրից<sup>17</sup>: Վերջինս այս Հավաքածոյի վերջում ընդօրինակել է ավելի կան Գրիգոր Սկեսացու<sup>18</sup> գրած՝ Ներսես Լամբրոնացու ձեռնագրով: «Ներքողեան պատմագրաբար ստացուել է վարս մեծի քահանայապետին սրբոյն Ներսէսի արհիեպիսկոպոսի Տարսոնի Կիլիկիացու» վարքագրական երկը<sup>19</sup>, որը ստեղծվել է մատյանի ընդօրինակումը աղանձով մեկնանոսի՝ Ներսես քահանայի խնդրանքով<sup>20</sup>: Ձեռագրերի այս խմբին են պատկանում Վատիկանի գրադարանի Բորդյան Հավաքածոյի № 84 (1325 թ.<sup>21</sup>), Երուսաղեմի Սուրբ Հակոբյանց Մատենադարանի № 146 (1551 թ.<sup>22</sup> և Երևանի Մաշտոցի անվան Մատենադարանի № 10509 (1618 թ.<sup>23</sup> մատյանները:

զ) Տպւմ է Հայոց Անդեղոս վազաների քանակը, որ ոչ մի տեղ չի հանդիպում երկու քննարկում արտահայտւորուը:

16 Տե՛ս Վազիրազրական ցանկ, № 25: Բյուզանդական պատմագրից խղզված թղթում արված է Հայոց Անդեղոս դավանության քանակը, որ (այս քանակություններն պաշտոնական գրադարաններին մեջ տեսչին անգամ), փրայց մեկ դարելվածքով հանդիպում ենք «խոստովանից քանակայն մեզ է Թիստոսի անճառ փորքիմն երկու բնութեան սետրին» (ՔՄ, 1871, էջ 196):

17 Անդեղոս, Ներսես Լամբրոնացի, էջ 165-167, Մատենացու, Հայերեն, էջ 48-53:

18 ԺԲ դարի երկրորդ կեսի և ԺԳ դարի սկզբի վաճակամ այս գործի գործմանության մասին տե՛ս Անդեղոս, Մատենացու, էջ 100-101: Գրիգոր Սկեսացու մատենադարական վատակի մասին տե՛ս Հակոբյան, Սկեսացի, էջ 34-35:

19 Չեղար Անդեղոս, Ներքողեան, էջ 5-90:

20 Անդեղոս, Ներսես Լամբրոնացի, էջ 9:

21 Այս ձեռագրի վարագրությունը տե՛ս Tisserand, Codices, p. 177-185 (պարմենտե՛ս՝ վՅԼ, 84):

22 Վարագրությունը տե՛ս Tisserand, ՄՏՁՍՅ, հտ. Ա, էջ 417-419 (պարմենտե՛ս՝ ԵՅԼ-146):

23 Տե՛ս Անդեղոս, Երուսաղեմ, էջ 45-51 (պարմենտե՛ս՝ ՄՄ 10509): Ըստ Ա. աղբ. Սյուր-ժոպի, դեռևս 1949 թ. օգոստոսի եղեղից ձեռագրից պատկանել է վարիգարանի Խոս Բոլո-Ս: 1971 թ. ապրիլի 30-ին մատյանը Թարիգոմ անուղի է հանվել: Այժմ գնել են Երվանդ Լրսայանը (Մյուսակ), Մուշեղ Շիթրճյանը (Մուսակ), Մուշեղ և Պետրոս Մելքոնյան եղբայրները (Գեղարտ), Արծրուկ Ջրաշյանը (Մալտա) և հանձնել Մալտա Ա. Էլմիսանին: Երևանի Մաշտոցի անվան Մատենադարանը ստացել է ձեռագրը:

Քոլորն էլ ունեն նախորինակի՝ 1205/6 թ. արտագրված հեռագրի Հիշատակարանները: Միայն ՄՄ 10509 մատյանում Գրիգոր Սկևռացու «Ներբողեանը» և դրա Հիշատակարանն ու 1205/6 թ. Ներսես քառանյի Հիշատակարանը տեղագրված են Ներսես Լամբրոնացու Պատարագի մեկնությունից միջնամասում՝ «Օրէնք արկանելոյ սգառ եկեղեցւոյ» գլխից առաջ: Մեր կարծիքով, ՎՔՄ 84 եւ ԵՅՄ 146 մեռագրերը հարազատորեն են պահպանել նախորինակի Նյութերի դասավորութիւնը.

ա) Աստեարանություն<sup>24</sup>,

բ) Գլխակարգություն Հասոնոց ... եւ լուծմունքն արնթէր եղեայ<sup>25</sup>,

գ) Խնդիրք Հայոց<sup>26</sup>,

դ) Խորհրդածություն ... (և Պատարագի մեկնություն<sup>27</sup>;

Ձեռագրերի այս խմբում պահպանված Հիշատակարաններից երկուսն է, որ Ներսես Լամբրոնացին վերահիշյալ երկերը գրել է 1177/8 կամ 1178/9 թվականին<sup>28</sup>: 1189/90 թ., Հիշյալ երկերը պարունակող կամ մեծական մատյանը գրել է ընկնում և միայն 1192/3 թ. է Հաջորդում այն ազատագրի գերություններից<sup>29</sup>: 1193/4 թ. Ներսես Լամբրոնացին կրկին վերանայում և արտագրում է մատենագրական երկերի այդ խումբը առանձին մատյանի մեջ, որից էլ մեծ բարեխղճությամբ ընդօրինակում են Սկևռայի վանական Ավետիքը և Ս.Զորավար եկեղեցու կլերիկոսներից<sup>30</sup> (քառաններից) մեկը. «Ընդարինակեցաւ գիրքս այս ըստ առաջին գրեալսն մեռամբ սրբոյ ասնն Աստուծոյ եւ

գիրն Ամենայն Հայոց կաթողիկոս, երջանակաշատակ վազգնն Ա-ից: Այս տեղեկությունները քաղել ենք մատրանի կազմի վրա ստեղծված հիշատակագրությունից:

24 Տե՛ս Նեոսես Լամբրոնացի, 1838, էջ 91-202:

25 Տե՛ս Պատմում, Պատմություն, էջ 260-266:

Ուշ շրջանի որոշ մեռագրերում այս բնագրին հաջորդում է հետևյալ հիշատակագրությունը. «Կատարեցաւ պատասխանում թ' գլխոց խնդրոց Հասոնոց, և ընդ Եթից է խնդիրս եւ ի կողմանէ Հայոց ժողովոյն, գրք հանդերձ քրիստ և խոստովանութեանք ստացելից առ արշալոյն և պատրիարքս՝ կաթողիկոսն Հայոց Գրիգոր Յայնակցութեանք Բողոսմոջ ժողովոյն» (ՄՄ- 3062, քղ. 123ա):

26 Տե՛ս Եղի տեղում, էջ 266:

27 Այս երկի հատուցվածքի մասին ալիի ծանոթանում տե՛ս Աննան, Ներսես, էջ 159-162: Նրբերի մեզ հասարկելու հնարակամոտյան հրատարակությունը տե՛ս Նեոսես Լամբրոնացի, Նորբերանություն, էջ 1-555:

28 Տե՛ս ՎՔՄ 84, քղ. 49բ, 573ա:

29 Մատենի Ա, Թիշատակագր, սրմ 467:

30 Հմտ. Աննան, Ներսես Լամբրոնացի, էջ 166:

Հաստատված պաշտառակէի Քրիստոսի Ներսիսի: Վասն որոյ զգուշացի իւրաքանչիւր ոք. թէ՛ ո գիտէ, եւ անցի ի գաղափար բանի եւ գրոյ՝ Հրամանի եւ ստորաւի եւ սան»<sup>31</sup>:

Հիշատակարանից Հասակ երևում է, որ երկերը գրված են եղել Հասարակութեան կողմից քննարկվելու Համար. «Ճիանկամ եւ երկիցս Հանի զսա յատեան եւ ի ժողովս հայկեհայասաց եւ իշխանաց, եւ ոչ եղև պարապումն զոնէ ընթերցման կամ ունկնդրութեան»<sup>32</sup>, բողոքում է Տարսնի արքեպիսկոպոսը: Այս սողերից կարելի է կառել, որ Ներսես Լամբրոնացին Հոսովյայի ժողովի նախորդակին գրած այս երկերում սակա գրութեանը փորձել է քննարկման տարեկա զարձնել ժողովում, սակայն ազարդյուն են անցել նրա բոլոր ջանքերը, և նա 1193/4 թ. վերստին արտագրում է գրանք սերունդներին դա՛ւ ասլու ժառհգութեամբ<sup>33</sup>: Այս ենթագրութեանը Հաստատվում է նաև Ներսէս Լամբրոնացու Հեռեկայ տղերքով. «Ձկանիալ լուսեան պատւոն ի թուին ՈՒԷ (= 1178/9), աստ վերստին շարագրեալ թողի զհին եկեղեցոյ նուսառ Ներսէս ի թուականին ՈՒԷ և Բ (= 1193/4)»<sup>34</sup>:

Ձեռագրերի այս խումբն է պատկերում նաև Ներսես Լամբրոնացու «Ասեներանութեան» խորագրի<sup>35</sup> Հնագույն տարբերակը. «Ասրբ եւ տիեզերական ժողովոյն, որ եղև ի շրջան ընթացից ժամանակի ՈՒԶ. թուականէ»<sup>36</sup>. Հրամանա Պրիզորիս՝ յաջորդի տարեկական Աթոսոյ<sup>37</sup> Պրիզորի: Համաձայնութիւն Ներսէսի նուսառ նոցին պաշտառակացի»<sup>38</sup>: Ինչպես վերևում տեսանք, Հոսովյայի եկեղեցական ժողովի

31 Ասեներան. Համբն, էջ 53:

32 Պարեհեմ 11, Յիշատակարան, սրմ 467:

33 Նույն տեղում, էջ 467:

34 ՎՌԲ - 84, թղ. 49ա:

35 Աթոսյանն անդադանալով Հոսովյայի ժողովից Օղ հասած վարկարերին, ընդգծում է. «ժողովական գործեր չգտնելուն վրայ, ոմանք այլ ժողովին պատշանցուցին Լամբրոնացիի նշանաւոր Ատեմարանութիւնը...» (Օրնակնակ, Ազգապատում, էջ 1469): Աթոսյանսն պարզապես հայտնի չի եղել Ատեմարանութեան վերաբախելով մտազերում անկա խորակիրը: Վաստակաւոր հայազմուի կարծիքը ճշմարիտ է անշուշտ, որքանով որ Ատեմարանութեանը գրվել է Հոսովյայի ժողովում ընթերցվելու նպատակով, սակայն անհնայն հավանականութեամբ, ինչպես վկայում է ճշդմանը՝ չի շքերցվել:

36 Թուական: ՆՅՄ 146, ՄՄ 10509:

37 սրբոյ ՄՄ 10509:

38 ՎՌԲ - 84, թղ. 3ա: Ժ՛-ի դասի սկզբի մի այլ մտազերում նույն երկն արդեն վերագրված է. «Յաստատանալուք եւ ի տիեզերական ժողովն Տարսնի, որ եղև ի հասարկելական կարողելունն Հայոց Պրիզորի՝ եղարարուլ սրբոյն Ներսէսի Կլայեկեղեցում եւ ի քրիստոսական պղա՛ւն Հայոց Լեւոն, սակա միութեան եկեղեցոյ: Ատեմական խառց մեծնք եւ սրբոյն Ներսէսի՝ այն աստատանալով քաղաքի արո-



Նախապատրաստական աշխատանքները սկսվել են 1177 թ. Հունվարից Հետո, ըստ այդմ էլ Ներսես Լամբրոնացին «Ատենաբուսութիւնը» և վերոթվարկյալ մյուս երկերը ավարտել է 1177 - Հունվար - 1178 թ. ապրիլ ժամանակամիջոցին<sup>39</sup>: Ակնհայտ է, որ այդ երկերը գրելու պահին Ներսես Լամբրոնացին գեղես Տարսուհի արքեպիսկոպոսը չէր, քանի որ միայն, «յետ ամաց ինչ զարձեայ անայ յեկեղեցական պաշտաւն եւ ի մարմնական գործոց գրագանք»<sup>40</sup>: Ներսեսն իբրև Տարսուհի արքեպիսկոպոս, առաջին անգամ Հիշատակվում է Համիլյայի եկեղեցական ժողովի՝ Կոստանդնուպոլսի պատրիարքին Հասցեագրված թղթում. «Ներսէս արքեպիսկոպոս մայրաքաղաքին Կիլիկիաց Տարսուհի»<sup>41</sup>:

Հոսովլայի եկեղեցական ժողովի մասնակիցները Այս ժողովը 1165-1178 Հայ-բյուզանդական եկեղեցաբազմաբանական փոխհարաբերությունների բարձրակետն է: Այնտեղ թնտրված ծիսական և զավանակյան խնդիրների Հանդեպ Հայոց եկեղեցու վերաբերմունքը պիտի անուղղակիորեն ազդեր Հայ-բյուզանդական եկեղեցական և քաղաքական Հարաբերությունների Հետագա ընթացքի վրա: Այս ժողովում Հավաքվել էին Մեծ Հայքի և մերձակա Հայարեանկ զավանների ու Մերձավոր Արևելքի մի շարք պետութայունների Համիլյայի աթոռին ենթակա եպիսկոպոսները, ինչը իրսոււն փաստ է ժողովի կարևորության մասին: Փորձենք աշխարհագրորեն աստիճանաբար այն կարևորական միավորները, որտեղից ժամանել էին ժողովականները.

ուսկայի եւ աստուածայան վարդապետի» (ՏԵՆ՝ ԼԳՄ - 500, թղ. 381ա, ըստ Օ. Եսանյանի Սեբաստիայում: Մեր կարծիքով այս երկու վավերագրերի միասնական է գտնվում Սեպուհի Սեպուհի վերջնական ավելի ընդարձակ պարբերակը, որը հանդիսանում է Օ. Եսանյանի Սեպուհի մեղադրում. «Սաստուածայանքն և ի սեղեցական ժողովն Տարսուհի, մի զարմիր մեղադրում. «Սաստուածայանքն և ի սեղեցական Հայոց, Տրամանա Կար եղև ի շրջան ընթացից ժամանակի ՈւՂ. թուականի Հայոց, Տրամանա Կար մարմնական կարողիլուսին Հայոց Գրիգորիսի երբորդոյր արդյո՞ Ներսիս յարցոյի անարձակ արտոյ արդյո՞ Գրիգորի և քիստուասական արցայն Հայոց Լեւոնի, անպիսական արտոյ արդյո՞ Գրիգորի և քիստուասական արցայն Հայոց Լեւոնի, անպիսական արտոյ արդյո՞ Գրիգորի և քիստուասական արցայն Հայոց Լեւոնի» (ԼԳՄ - 84, թղ. 373ա, ՍԵՄ - 146, թղ. 572բ):

39 Ձեռագրական այս ժողովածուում հիշատակված անվանույթը պատկանել է նաև Ներսես Լամբրոնացու գրած 1177/8 թ. ճիշտակարանք. «Գրեցա ի թուականս ՈՒ և Ձ սեւ Լամբրոնացու գրած 1177/8 թ. ճիշտակարանք. «Գրեցա ի թուականս ՈՒ և Ձ սեւ Լամբրոնացու սուրբ Գևորգ, ի մէջ լեթնս Տարսուհի, ի զան Կիլիկիոց և ի սփարճ Գանձակասուս սուրբ Գևորգ, ի մէջ լեթնս Տարսուհի, ի զան Կիլիկիոց և ի սփարճ Գանձակասուս սուրբ Գևորգ, ի մէջ լեթնս Տարսուհի, ի զան Կիլիկիոց և ի սփարճ Գանձակասուս սուրբ Գևորգ» (ԼԳՄ - 84, թղ. 373ա, ՍԵՄ - 146, թղ. 572բ):

40 **Ատենահ Ա.** Ճիշտակարանք, զում 407: Տարսուհի է, որ է. Ներսես Ալեքսանդրոսյանց որն է թիմուպոր ապացույթ պնտեմ է, որ 1175թ. Ներսես Լամբրոնացին, «տեսաքա կարողիլուսն աշն եպիսկոպոսական օճուց, իբրև արքանստուաս Տարսուհի թմիս» (տե՛ս **Ալեքսանդրոսյանց**, Ներսես, էջ 22):

41 **ԹԸ**, 1871, էջ 199:

ա) Հայեպի աթարեկություն - Հայոց կաթողիկոս (Հասնկյա) Ն-դեոբայի արքեպիսկոպոս և Ապամեայի եպիսկոպոս<sup>42</sup>,

բ) Ասորպատական (Նելասուդյաններ) - Ազգանից կաթողիկոս (Չարեք բերգ<sup>43</sup>), Սյունյաց արքեպիսկոպոս (Տաթև), Գլխի արքեպիսկոպոս, Նաբեազան, Հեր և Ջարեվանդ, Սալմաս և զբանն Գարսից եպիսկոպոսներ,

գ) Վրաստան - Տփլիսի արքեպիսկոպոս (Հաղբասի զանա-Հայր)<sup>44</sup>,

դ) Անտիոքի զբասություն Անտիոքի արքեպիսկոպոս, և Հաոգի-կիայի (կամ Հատակիայի) եպիսկոպոս<sup>45</sup>,

ե) Երուսաղեմի թագավորություն - Երուսաղեմի արքեպիսկոպոս,

զ) Իկոնիայի սուլթանություն - Կապադոկիայն Կեսարիայի, Մե-լիանների, Սերաստիայի և Նեոկեսարիայի եպիսկոպոսներ,

է) Կիլիկիայի Հայկական իշխանություններ - Տարսուսի արքեպիսկոպոս, Անարզարայի, Սելեկիայի, Մամեստիայի, Կոկիսոնի եպիսկոպոսներ,

ը) Ենզղուդյան ամիրայություն - Անիի արքեպիսկոպոս և Կարոի եպիսկոպոս<sup>46</sup>,

թ) Սալզուխյան ամիրայություն - Թեոդոսուպոլիս-Կարենի արքեպիսկոպոս<sup>47</sup>,

42 Նեդիսան, Հոմերան և Ապամեան Հայեպի արքեպիսկոպոսն սկսեցին է 1144-1151 թվականներին (Cahen, Syrie, p. 368-373, Elisséeff, Nur ad-Din, I, p. 165): Վճ դարի 70-ական թվականներին Հոմերան և Ապամեան արքեպիսկոպոսն Հայեպի արքեպիսկոպոսն կասկած չի հարուցում: Այդ են վկայում Գեորգ Գ Տրյա կաթողիկոսի բնագրությանը նախորդած իրադարձությունները (տե՛ս MS. t. III, p. 353-354):

43 Ազգանից կաթողիկոսների մասնագրքը այս շրջանում Կիսակոս Գաննակեցին Ռամսուր և Չարեք բերդի մասնագրքում գտնվող բառալսքը (տե՛ս *Historia*, էջ 178, հմմտ. *Ընդհանուր* մասը, Գառնոթից, էջ 189):

44 Այս եպիսկոպոսական արտի մասնագրքը Հաղբասոց էր, տե՛ս *Առաջադրում*, Հյուսիսային, էջ 213-214, ծան. 274:

45 Cahen, Syrie, p. 325.

46 Ըստ Վ.Սարգսյոզի և Կ.Հեկկեոզի 1161-1206թթ. թաղաքը պատկանել է Օտոյադյաններին (տե՛ս *Historia*, Koes, p. 697):

47 Ըստ Հ.Իմաշլիևի 1178 թ. թաղաքը գտնվել է Սաղջուխյանների մեջին ( *Historia*, Erzurum, p. 730, հմմտ. մասն *Ընդհանուր*, Գառնոթալսք, Բ, էջ 311): Այս մասին տե՛ս մասն Սաղջուխյան ամիրաների ժամանակագրությանը զեթրված նորագույն Թաղալսքում մեջ. *Յուսուպուրան*, Կարճ, էջ 116, 124:

ժ) Խլաթի ամիրայություն (Շահի-Արմեններ) - Բզունիքի, Մա-  
նազկերաի, Տարունի եպիսկոպոսներ<sup>48</sup>.

ժա) Արտուքյան ամիրայություն - Մոֆքի, Մամուսաի, Աշմու-  
շաի (Արշամաշատ), Նփրկերաի եպիսկոպոսներ.

ժբ) Բյուզանդական կայսրություն - Կիպրոսի եպիսկոպոս:

Այսպիսով, Հռոմկլայի ժողովին մասնակցող 33 բարձրաստիճան  
հոգևորականները ներկայացնում էին Մերձագոր Արևելքի առանձնակու  
թաղաքական միավոր:

Բացի Հայոց եկեղեցու սպասավորներից, Հռոմկլայի ժողովին  
մասնակցել են նաև Հանրիկ-ասորական եկեղեցու ներկայացուցիչներ,  
որոնց մասին ՊԽՄ-ում ընթերցում ենք. «ընդ նոսին (իմա՛ Հայ հոգևո-  
րականներ-Ա.Բ.) և յեպիսկոպոսապետէն Ասորոց զարգազեաք և ի-  
մասաուն արք»<sup>49</sup>:

48 Աղբյուրների սակավության պատճառով դեռ չիվիճ հրատարակված չեն այս և Քաչարի  
ամիրայության ամենագետեր:

49 ԹԸ, 1871, էջ 180:

**ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ**  
**ԱՆՏԻՈՔԻ ՊԱՏՐԻԱՐՔԱԿԱՆ ԱԹՈՒԻ ՀԱՐՅԸ**  
**ԺԲ ԴԱՐԻ ՀԱՅ-ԲՅՈՒԶԱՆԴԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ**  
**ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ**

*Տրեզորական եկեղեցու կառուցվածքի, պատրիարքական աթոռների և Համաշխարհային եկեղեցական կազմակերպությունների ՀեռաՀայոց եկեղեցու փոխհարաբերությունների ուսումնասիրության Համար Հնագույն սկզբնաղբյուրներ է տրամադրում Հայոց մասնագրությունը: Սակայն այդ բնագրերը շրջանառության մեջ են գրգռել միջանցից անկախ ու մասնագիտական գրականության մեջ չեն ջրհեռարկվել միասնական ժամանակագրական շղթայի մեջ, քանի որ միայն գրանցիչ մի քանիսն են առանձին Հարցերի կազակցությամբ գրավել մասնագետների ուշադրությունը: Այս տեսանկյունից, մեզ Հնաաբբերող սկզբնաղբյուրներին ավելի մասնագիտորեն և Հաճախ են անգրագարձել այն Հեղինակները, ովքեր գրազգել են Մխիթար Գուշի Դատաստանագրքի բնագրով և նրա սկզբնաղբյուրներով<sup>1</sup>: Համաբնույթ սկզբնաղբյուրների մի այլ խումբ՝ Գրիգոր Լուսավորչի տունի կաթողիկոսների գործունեությանը նվիրված Անտոնուսի վարքագրական երկու Հուշարձանները թվագրել և Հավանենու Դրասխանակերպու Պատմության Համապատասխան Համաձայնի Հեռ Համեմատելով*

<sup>1</sup> Տե՛ս Մխիթար Գոշ, Դատաստանագրք, էջ 246-259, ծան. 247-259, ավելի մանրամասն տե՛ս Մխիթար Գոշ, Դիրք Դատաստան, էջ 135-137, 398-400, 585-599, ծան. 145-149: Մխիթար Գոշի Դատաստանագրքի այս հոդվածի սկզբնաղբյուրը բրուզանդազան Հրաչ Բարթիկյանը ենթադրարար Քամուրոմ է ինչ որ բրուզանդազան գաղմանակ (αλγερολόγιον), որը թարգմանված պետք է լիներ Նևրոս Լամբրոմադու կողմից (տե՛ս Էստրաշու, Ο ορισθητικός, σ. 197-204, հինա. Ցակ Βασιλίου, Συζητήσιο, p. 239-259):

բանասիրական մանրակրկիտ քննության է ենթարկել Աշոտ Սարգսյանը<sup>2</sup>:

Հայկական սկզբնաղբյուրների՝ պատրիարքական օթոսների թվին և Հերթականությանը վերաբերող Հատվածները Հավաքել և արևելյան մյուս սկզբնաղբյուրների հետ Համեմատության մեջ է գրել պրոֆ. Միշել վան Էսթրուկը<sup>3</sup>: Տրեզիրական եկեղեցու նվիրապետական կառույցին վերաբերող Հարցերը քննարկվել են նաև եվրոպական միջնադարագետների կողմից, որոնք ուսումնասիրության ելակետ են ընդունել կա՛մ Հատմե՛հ, կա՛մ էլ՝ Կոստանդնուպոլսի<sup>5</sup> եկեղեցու գիրքորոշումը այս խնդրի կապակցությամբ:

Եթե Հեռանկար մասննագրական երկերի ստեղծման ժամանակաշրջանը, Հայտնի կզատեա, որ ժամանակի ընթացքում փոփոխվել են պատկերացումները տրեզիրական եկեղեցու կառուցվածքի, պատրիարքական օթոսների ու նրանց թվի և Համաշխարհային եկեղեցական նվիրապետության սահմաններում Հայոց եկեղեցու տեղի ու դերի մասին: Նկատի ունենալով այս խնդիրների նկատմամբ Հայոց եկեղեցու դիրքի ու վերաբերմունքի փոփոխությունները, ինչպես նաև նմանաբնույթ Հարցերի ուսումնասիրությունն ավելի նպասակապես չըզված զարմնելու միտումով, Հարժուր նկատեցինք Հայոց մատենագրությանը Հայտնի սկզբնաղբյուրները բաժանել երեք ժամանակագրական խմբի.

ա) Ե-է զարբերի մատենագրական Հուշարձաններ: Հայերեն սկզբնաղբյուրներին զեռևս Հայտնի չէ տրեզիրական եկեղեցու այն կուռ՝ աստիճանական կառուցվածքը, որը վերջնականապես ձևավորվում է Բաղկիդոսի ժողովում և տեսական Հիմնավորում ստանում արդեն Հեռապա զարբերում:

բ) Ը-ԺԱ զարբերի մատենագրական Հուշարձաններում արդեն փորձ է կատարվում ներկայացնել տրեզիրական եկեղեցու նվիրապետության կառույցը, ելնելով Դրոնիսիոս Արիոպոլսացու ճշգրտագույն երկ-

2 Աստուխան, Հովհաննես, էջ 117-136:

3 Տե՛ս Eshrock, Primates, pp. 493-521: Եմանարմուց Բաղդեի մի այլ խմբի ընդգնացի բառամասերով անցադարձել է Օսե մե՛կ այլ հրատարակման մեջ (Eshrock, Rome, p. 351-355):

4 Այլ խմբի մ նվիրված գրականության մեջ պետք է ստանձնացնել Քսենոպոլսացու ընդհանրացնող աշխատությունները. Vives, Orient, Byzance, Primes, Kato. The Jurisdiction.

5 Կոստանդնուպոլսի եկեղեցու տեսանկյունից այս հարցերի ընթացումը և հիմնական գրականության միջառակումը տե՛ս Beck, Kirche, p. 27-37, հիմն. Օսե *Dromik*, İdeci, p. 241-244.

Նային քահանայութեան» երկուս զաստիարակած ինն Հրեշտակագետական աթուակներին վերաբերող տեսութուննից:

զ) ժԲ դարի 60 - 70 - ական թԹ. Հայ-բյուզանդական եկեղեցաբարձրական բանակցությունների առնչությամբ, Ներսես Լամբրոնացին մի նոր երանգ է ավելացնում Տրեզբրական եկեղեցու նվիրապետութեան շրջանակում Հայոց եկեղեցու տեղին ու նրա դիրքի նոր բնկալմանը՝ էլ ներդրում արածաշրջանում ուժերի եկեղեցական և քաղաքական նոր բաժանումնից:

Ա. Ե-Է դարերի մատենագրական հուշարձանների ավանդույթը. Նշված ժամանակաշրջանի Հայոց գրական երկերին, ի-Հարկն, Ժանոթ են փնդերական եկեղեցու նվիրապետութեան գաղտնիստ արդրեր աստիճաններում գործիչներ և բողոքաբան կախկողմական ու թեմական աթուակներ, որոնք վճարույզ գեր ունենին Տրեզբրական եկեղեցու գործերում, սակայն գրանց փոխհարաբերություններում գեղեստ ամբողջովին չեն հասակված նվիրապետական աստիճանները, գեղեստ բացակայում են Հոգևոր կյանքի այդ ոլորտը տեսականացնող երկերը:

6 Այս կատարող տեսականացնող առաջին փորձերից միջ Տրեզբրական եկեղեցու մեջ կատարված է «Մանուսկրիպտ և կանոնը գոր նիցն աշակերտքն Գրատոսի եկեղեցու սրբոր յստ վերամաղդ տեսուն» երկում (Տաշիրն բնագիր տե՛ս Մանուսկրիպտ Հայոց, ԹԹ. Ա. էջ 18-66): Հետաքրքիր է, որ այստեղ Գևորգն է գրանցում «վճմն հաստոյ, հիմն եկեղեցոյ, անդամիցն սասցիոյ» (էջ 22): Այս կանոնախմբի 2 հոդվածում արարալները հաստատում են երեցների, սարկավազների և կեսասկավազների կարգերը. « Եւ աստիպազունց սղաստոյց երիցանցն կարգեսցն, եւ բնորնայն կրիտունք » (էջ 31): Այս մեջն հոդվածում տամբանվում է նաև « Կարողիկուն զէս եւ զլոյս եւ արքեպիսկոպոս լիցի ժողովողեսցն » (նույն տեղում): Այս կանոնախմբի 1<sup>2</sup> հոդվածում յտալում է նաև այն ժամն, թե՛ աշխարհի ո՞ր անկյունում են քարոզել արարալների յարարանշարը: Այստեղ ըստ Տրեզբրանորայն նախարարի կն ճիշտաց սրբոնորք. ա) Եղտապետ (Հակոբի), բ) Ալեքսանդրիս (Մարկոս Ալեքսանդրի), գ) Հնդկաստան և Կարանա շրջաններ (Թովմայի), զ) Անտիոք, Սուրիս, Կիլիկիս, Գաղատիս (Սիմոն վանի), ե) Հլետոն (Սիմոն վանի), գ) Եփեսոս և Թեսաղոնիկն, աշխարհն Կորնթուսոց և Աքալան (Հովնանես Ալեքսանդրի), է) Նիկիս և Նիկոմիդիս, Բյուզանդիսների աշխարհ եւ Գուտիսցից (Անդրասի), ը) Բյուզանդիս, Թրակիս (Լուկաս Առաքյալի), թ) Բոնոս, Միլեզետք, Հալց (Թադդեոս), ժ) Փարս, Գարբն, Ասորեստան, Խոնաստան և այլն (Թադդեոսի աշակերտ Աղայի) [էջ 58-64]:

Կղնեսի «Կանոնք երկրորդ արարելական»-ում (Մանուսկրիպտ Հայոց, Ա. էջ 67-100) յտալում է միայն միջնարարական վեց աստիճանների մասին. ա) Եպիսկոպոս, բ) երէց, գ) սարկավազ, զ) կեսարկավազ, ե) գրակարոց, գ) սաղմոսերգու (վերջին երեցի մասին յտալում է միայն ՀԷ հոդվածում):

«Կանոնք հարանց Ռետուդայ» (Մանուսկրիպտ Հայոց, Ա. էջ 101-113) կանոնախմբը գրեթե Եպիսկոպոս, քորնապիսկոպոս, սեպետոս (հոգվ. ԻԵ), վարդապետ/հոգվ. Զ, Է և այլն, քամանս, երեց կամ մոնազոն/հոգվ. ժԳ):



Ազատանդեզոսի, Փափասոս Բուզանդի, Մովսես Խորենացու և մյուս Հեղինակների երկերում մինչև Սերեսու և վերջինիս ժամանակի պատմական սկզբնաղբյուրներում հաճախ են հանդիպում եպիսկոպոս, մետրոպոլիտ, կաթողիկոս, պատրիարք, Հայրապետ և քրեպիսկոպոս տերմինները, սակայն զրանք չեն գրվում եկեղեցական նվիրապետութան կուռ, աստիճանական համակարգում<sup>11</sup>: Ենդիրն այս տեսանկյունից գրեթե, արձանագրման է արժանի այն փաստը, որ սկզբնաղբյուրներում մերթընդմերթ առանձնանում են երկու մայրաքաղաքային աթոռների՝ սկզբում Հոռմի, ապա և Բյուզանդիոն-Կոստանդնուպոլիսի թեմակալների նշանակությունը: Այս Հարցում Հայոց պատմաագրական ավանդույթը որոշակիորեն մոտենում է բյուզանդականին (կամ արևելահայաստանականին), որը, սակայն, եկեղեցական նվիրապետութան ամբողջական կառույցը տեսնում է միայն Հոռմեական (Նույն՝ Բյուզանդական) կայսրութան տարածքներում<sup>12</sup>: Հայոց մոտենագրական ավանդույթը, աղգվելով բյուզանդականից, ժամանակ առ ժամանակ ամբողջում է այս երևույթը, սակայն բավական ընդգծված է նաև բյուզանդականից Հեռացող այն գրույթը, ըստ որի Հայոց եկեղեցին ամբողջական եկեղեցական կազմակերպություն է տեսնում նաև Սասանյան Պարսկաստանում<sup>13</sup>:

Համեմատաբար կուռ են պատկերացումները Հայոց եկեղեցու նվիրապետութան կառուցվածքի մասին: Բույր Հայկական սկզբնաղբյուրները գրեթե միաբերան պնդում են, որ Հայոց կաթողիկոսները մինչև Ներսես Մեծը ձեռնադրվել են Կեսարիայի առաջնորդի կողմից, որը մեր սկզբնաղբյուրներում հաճախ անվանվում է նաև կաթողիկոս: Միաժամանակ, սկսած օ. Գրիգոր Լուսավորչից, Հայոց կաթողիկոսները ձեռնադրում են երկու Հարեան ժողովուրդների՝ վրացիների և աղվանների Հոգևոր առաջնորդներին, որոնք կրում են երբեմն կաթողիկոս, երբեմն՝ եպիսկոպոս կամ արքեպիսկոպոս անվանումը:

Ինչպես տեսնում ենք, ի տարբերություն Հոռմեական, ապա և բյուզանդական պատկերացումների (ըստ սրտից եկեղեցու նվիրապետութան սահմանները գրեթե ամբողջությամբ համընկնում են Հոռ-

11 Մեր կարծիքով, առ առանձին խնդիր է և պահանջում է մասնակիտ լինություն:

12 Ասիայում Եփեսոսի և Կոստանդնուպոլիսի նվիրապետական արտոնքի առաջնական ծագման մասին տես՝ Giese, Die Hauptkirche, S. 31-35, Dvorik, The Idea:

13 Այդ տեսանկյունից մեր պատկերացումների բավական ընդարձակում են Ե դարի պատմական իրադարձություններից Գևարգոտի մեր եղև պատմյունքը՝ Եղիշեն և Ղազար Փարսեղյան, որոնք ուշագրավ վկայություններ են հաշտում Պարսկաստանում գրեթե եկեղեցական կազմակերպության մասին:





աստիճանական անկում սկսեց ապրել Սասանյան Պարսկաստանի քրիստոնյաների նվիրագրատական կառույցը<sup>16</sup>:

Սակայն Քաղկեդոնի ժողովի նշանակութունը բյուզանդական եկեղեցու Համար Հանուն էր ոչ միայն դավանական Հարցերի տեսանկյունից: Այդ ժողովից Հետո է Հասակվում և ամբողջական դառնում Բյուզանդական եկեղեցու նվիրագրատական կառույցը: Եթե մինչ այդ տիեզերական եկեղեցու ժողովներում Հավասարների մեջ առաջին էին զիտում Հոռոմի, Աղեքսանդրիայի, Անտիոքի թեմերը և ըստ պատվի նրանց էին Հովատարեցնում Կոստանդնուպոլսի և Երուսաղեմի աթոռները, ապա Քաղկեդոնի ժողովում (կանոն ԻԸ) կայսեր անմիջական միջամտությամբ, ի Հակակշիռ Հոռոմի, բարձրացվում էր Կոստանդնուպոլսի եպիսկոպոսական աթոռի զերե ու Հեղինակությունը, քանի որ այդ քաղաքում էին կենտրոնացվում կայսրության կառավարման լծակները, ի Հեծուկա կայսրության ներքին կյանքում իր նշանակությունը Հեռզհեսե կորցնող Հոռոմի: Չնայած կայսրության Հին ժայրաքաղաքի եկեղեցին Քաղկեդոնի ժողովում կարողացել էր անցկացնել Հոռոմի պապ Լեոն Ա-ի գաղտնական գրույթները, որոնք ասացել են «Լեոնի ամար» անունը, այնուամենայնիվ եկեղեցական նվիրագրատության շրջանակներում գերջին Հաշվով Հոռոմը քաղաքական պարտություն էր կրել Կոստանդնուպոլսի եկեղեցական աթոռից, որին ասանց մեականությունների Հովանավորում էր Բյուզանդական կայսրությունը: Պետք է նաև նշել, որ եթե մինչ այդ եկեղեցական կազմակերպության շրջանակներում առաջնության Համար պայքարին մասնակցում էին նաև Աղեքսանդրիայի և Անտիոքի եպիսկոպոսական աթոռները, ապա Քաղկեդոնի ժողովից Հետո նրանց զերը աստիճանիկ նվազեց Բյուզանդական կայսրության Համանկեղեցական կյանքում: Այդ պատրիարքությունների մեկտեղյան թեմերը գարձան Կոստանդնուպոլսի եկեղեցու կցարգը, իսկ Հոռոմի եկեղեցին իրեն ծնթակա նույնանուն պատրիարքություններ ստեղծեց միայն ժՐ գարում:

Կոստանդնուպոլսի եկեղեցական աթոռի զերակա զերբը իր նովելներում գերջնակառնապես Հաստատարեց Հուստինիանոս Մեծը<sup>17</sup>: Սակայն Կոստանդնուպոլսի եկեղեցում շարունակվում էր կիրառության մեջ մեալ շորս պատրիարքական աթոռների՝ Հոռոմի, Աղեքսանդրիայի, Անտիոքի, Կոստանդնուպոլսի Համազորության և Երուսաղեմի

16 Սասանյան Պարսկաստանում քրիստոնեության խնդիրների մասին այնպիսի մանրամասնորեն տես *Christensen*, *l. cit.*, p. 258-315:

17 *Comes Iustinus*, vol. III, nov. CXXIII, cap. III, p. 597:

աթոսի Համապատասխան մասին ավանդույթը, որը լայն տարածում էր ստացել նաև Արևելյան մյուս եկեղեցիներում:

Ը դարից սկսվող ավանդույթը. Մույն ավանդույթի մեկ այլ տարբերակ չրջանառության մեջ էր Հայ մատենագրության մեջ Ը դարից Հետո: Այն քննարկելու առումով շահեկան է Մ. Ջան Հարությունի վերջերս Հրատարակած Հոգվածք<sup>18</sup>: Ինչո՞ւ էր պայմանավորված Ը դարում Հայ մատենագրության մեջ եկեղեցական եփրապատության Համակարգի տեսականցման ձգտումը: Կարծում ենք կարելի է նշել երկու պատճառ. նախ՝ Բյուզանդական կողմը Հայոց եկեղեցուն մեղադրում էր կատարյալ եփրապատություն չունենալու մեջ, երկրորդ՝ Հայոց եկեղեցին փորձում էր ավելի կատարյալ դարձնել սեփական եկեղեցական կառույցը:

Եկեղեցական եփրապատության Համակարգման ուսումնասիրության նախադարձին սկզբունքային նշանակություն է ստանում Դիոնիսիոս Արիոպագացուն (Արիոպագացի՝ Հայ մատենագրության մեջ) վերագրված «Յազգաւ երկնային քահանայութեան» աշխատությունը<sup>19</sup>: Բյուզանդական մատենագրության մեջ այս աշխատության գրման Հնարավոր ժամանակ է Համարվում Զ դարը<sup>20</sup>, այսինքն՝ այն դարաշրջանը, երբ ավարտվում էր Բյուզանդական կայսրության մեջ քրիստոնեական եկեղեցու եփրապատական կառույցի վերջնական ձևավորման գաստական շրջանը, որն արդեն արձանագրված է Հուստինիանոս Ահմեթի շարք եպիսկոպոսում և վավերագրերում<sup>21</sup>:

Անշուշտ, Հարց կառաջանա, թե ի՞նչ կույ կա երկնային քահանայապատության գտների և եկեղեցու եփրապատության առթանանների Համակարգի ձևավորման սկզբունքների մեջ: Դիոնիսիոս Արիոպագացուն վերագրված վերոհիշյալ աշխատության մեջ<sup>22</sup>, մի

18 Esbeck, *Primaevit*, p. 503-510.

19 Այդ աշխատությունը ճշգրտաբան է և անգլերեն է թարգմանվում անգլիացի Քարոլոս Թոմսոնը (տե՛ս *Dionysios*, t. 17, p. 1-53, t. 18, p. 1-38):

20 Ավելի մանրամասն տե՛ս *Alagar*, *Procis*, p. 694-700.

21 Հմմտ. *Docteur*, *The Idea*, p. 129-131, 137.

22 Այս մատենագրական երկը շաղկապում էր Ը դարում, մեր մասնագիտապես Արիոպագացու այս երկը Քարոլոս Թոմսոնը անվանում էր «Մատենագրության մեջ» Մատենագրության մեջ: Մատենագրության մեջ Քարոլոս Թոմսոնը գործունեության և ժրջյուց երկի թարգմանության մասին ավելի մանրամասն տե՛ս *Primaevit*. Մտերիանոս Միսնցի, էջ 30:

Այս մատենագրական երկը շաղկապում էր Ը դարում, մեր մասնագիտապես Արիոպագացու այս երկը Քարոլոս Թոմսոնը անվանում էր «Մատենագրության մեջ» Մատենագրության մեջ: Մատենագրության մեջ Քարոլոս Թոմսոնը գործունեության և ժրջյուց երկի թարգմանության մասին ավելի մանրամասն տե՛ս *Primaevit*. Մտերիանոս Միսնցի, էջ 30:

շարք Աստվածաշնչային Հղումների Համագրմամբ, մեկ անգամ և ընդամիշտ երկնային քա՛հանայության շրջանակներում առանձնացվում է ինն երկնային դաս, որոնք բայխվում են Հավասարապես երեք որակական խմբերի մեջ. ա) աթոռք, քերովքեք, սերովքեք<sup>23</sup>, բ) տերությունք, զորությունք, իշխանությունք<sup>24</sup>, գ) պետությունք, Հրեշտակագագ, Հրեշտակք<sup>25</sup>:

Ակտած Թ զարից, արզեն Հայտնի են Հայերեն սկզբնազրույրներ, որոնք եկեղեցական եզիրապատությունը ևս բաժանում են ինն աստիճանների: Մեզ հասած բնագրերի մեջ առաջինը Մաշտոց Եղիվարդեցու թուղթն է՝ ուղղված Գեորգ Հայոց կաթողիկոսին, ուր եկեղեցական եզիրապետության դասերը Համապատասխանեցված են երկնային քա՛հանայության դասերին և առանձնացված ինն աստիճաններում. պատրիարք (Հայրապետ), արքեպիսկոպոս (եպիսկոպոսագան), մեարուպոլիտ, եպիսկոպոս, քա՛հանայ, սարկավագ, կես սարկավագ, ընթերցող և փալա (երգեցող)<sup>26</sup>:

Եկեղեցական եզիրապետության այս կառույցի տեսականացումը Հայաստանում կապված էր այն հանգամանքի հետ, որ Բյուզանդական եկեղեցին Հրաժարվում էր ընդունել Հայոց եկեղեցական կազմակերպության եզիրապետության ամբողջականությունը, Համարելով, որ այն չունի պատրիարքական, արքեպիսկոպոսական և մեարուպոլիտական աստիճաններ, ուստի ըստ օրթոդոքս-բյուզանդական Հոգևորականության, Հայոց եկեղեցին պարամփո է ենթարկվել պատրիարքական աթոռներից որևէ մեկին: Թ զարի բյուզանդական եկեղեցական և մատենագրական Հայտնի գործիչ, Կոստանդնուպոլսի պատրիարք Փոտի Ջաքարիա Հայոց կաթողիկոսին ուղարկված թղթից կարելի է ենթադրել, որ Հայոց եկեղեցու Համար նման աթոռ էր զխվում Կոստանդնուպոլսի պատրիարքությունը<sup>27</sup>, որին այդ ժամանակ ուղղակիորեն ենթարկվում էր նաև Կեսարիայի արքեպիսկոպոսական աթոռը:

Թ-ժ զարի կաթողիկոսներ Մաշտոց Եղիվարդեցին և նրա աշակերտ Հովհաննես Դրասխանակերտցին փորձում էին ապացուցել, որ արզեն ներսես Մեծի կաթողիկոսության տարիներից (Գ զարի Բ կես)

23 Տե՛ս Dionisios, t. 17, p. 19-25:

24 Dionisios, t. 17, p. 25-29:

25 Dionisios, t. 17, p. 29-32:

26 Այդ թղթի հրատարակությունը տե՛ս Գիսկանյան, Մայր Աթոռ, էջ 748-753, Քառկապես էջ 750, 806տ. Esbrouk, Primate, p. 506:

27 Աննեան, Պոլիթ Փոսայ, էջ 75, 86տ. Esbrouk, Primate, p. 509:



գիժազրույթիւն այսոցիկ խորհրդոց ունայնացուցանուցաց» խորագիր-  
 րը<sup>34</sup>: Այս բնագրի սկզբում Հեղինակը, հիմնելով երկնային քահանա-  
 յութեան Հրեշտակներին հայտ գասերի ինն աստիճաններից, Հեռեկալ  
 զուգահեռ աստիճաններն է տեսնում երկրային քահանայութեան կար-  
 գերի Հեա. ա) Թժուր, բերովքի և սերովքի գասին Համասիպ է Համա-  
 րում արքեպիսկոպոս, եպիսկոպոս, քահանա աստիճանները, բ) տերու-  
 թյունք, զորութիւնք և իշխանութիւնք գասին՝ սարկավազ, կես սար-  
 կավազ և սաղմոսերգու աստիճանները իսկ գ) պետութիւնք, Հրեշտա-  
 կապետք, Հրեշտակք գասի պահանջում է տեսնում կրօնավոր, ժողո-  
 վուրդ և երկխոսք աստիճանների մեջ: Այնուհետեւ Հեղինակն  
 անդրադառնում է ժամանորային եկեղեցու ինն նվիրապետական  
 աստիճաններին, իսկ զրանից Հեաո Հազուսանների այն տեսակներին,  
 որոնք կրում են եկեղեցու պաշտոնյաներից յարաբանչյուրը: Այս գեր-  
 լին Հասկածում ներսու Լամբրոնացու աշխատութիւնը չափազանց  
 արժեքավոր է Հատկապես նրանով, որ նկարագրում է նաև Հարեան  
 (որթագրութեան-բյուզանդական, կաթողիկոս-Հայկական և Հակոբիկ-ասո-  
 րական) եկեղեցիներում յարաբանչյուր պաշտոնյայի սպասարժման  
 Համար թույլատրվող զգեստները: Հեռեկարք, ներսու Լամբրոնացու  
 «Խորհրդանութիւնք» աշխատութեան այս գլուխը կարելի է բաժանել  
 երեք Հատվածների, որոնց մեջ մեզ Հետաքրքրում է եկեղեցու նվիրա-  
 պետութեան ինն աստիճաններին վերաբերողը: Այստեղ ներսու Լամբ-  
 րոնացին, Հեաեկելով մինչ այդ արդէն մեծաւորված ավանդույթին (որը  
 տիրապետող էր և՛ Լուծական, և՛ Հայկական եկեղեցիներում) կրկին  
 արժանագրում է Տիգրեական եկեղեցու նվիրապետութեան ինն աստի-  
 ճանները: Ըստ նրա, տիգրեական եկեղեցու նվիրապետութեան սանդ-  
 զակը լիովին Համապատասխանում է Հայոց եկեղեցու պաշտոնե-  
 ութեան աստիճանակարգին, որը, ինչպես տեսանք, սկսած արեն Թ-ժ  
 զարերից Համակարգված մեծով վկայված է Հայ մատենագրութեան  
 մեջ:



Այժմ անգրագառնանք եսւյն խնդրին ժՔ զարի Հայ-բյուզան-  
 դական եկեղեցական բանակցութիւնների տեսանկյունից: 1165-1178  
 թթ. փոխհարաբերութիւնները շոշափում էին երկու եկեղեցական

34 Լեւոն Լամբրոնացի, Խորհրդանութիւնք, էջ 80:

կազմակերպութունների թե՛ ձևական, թե՛ դավանական և թե՛ նվիրագործություն ավանդները: Բյուզանդական կայսրությունը սեղանկայան և Մերձավոր Արևելքի մուսուլմանական ու քրիստոնեական համայնքներին և անբույժյուններին Հեռ փոխհարաբերություններում մեծ նշանակություն էր տալիս այդ տարածքներում բնակվող հայ ազգաբնակչությանը, իսկ Բալկաններում ազգամիջյան և միջնկենդեցական փոխհարաբերությունները կառուցելիս Հանախ էր ստիպված լինում հաշվի նստել Բալկաններին և Փոքր Ասիայի Հայոց եկեղեցու պաշտոննություն և հայ ազգաբնակչության Հեռ: Այդ իսկ պատճառով, Բյուզանդական կայսրության արտաքին քաղաքական ծրագրերում ԲՄ դարի 60-ական թվականներին քաղաքական հրապարակի վրա կրկին Հայտնվեց սրթագործ-բյուզանդական և Հայոց Առաքելական եկեղեցիների միջև միություն հաստատելու հրեալուրջ ծրագիրը:

Իսկ այդ փոխհարաբերություններից ի՞նչ ակնկալիքներ ուներ Հայոց եկեղեցին, ու ինչպե՞ս է այն արտացոլվել ժամանակաշրջանի սկզբնաղբյուրներում:

Ամենայն Հայոց հոգևոր հովիվը թեև կաթողիկոսական աթոռը հաստատել էր Հասկելայում՝ բուն Հայկական տարածքներից զուրս, սակայն ավանգույթի բերումով շարունակվում էր կոչվել և մնալ «Հայոց Մեծաց կաթողիկոս» և հայրապետ, որին ենթարկվում էին Արևելքում և Արևմուտքում խորհոխ ձգած Հայոց ազգային եկեղեցու զրեթե բոլոր թեմերը և վանական կենտրոնները<sup>35</sup>: Հայոց հոգևոր իշխանության եկեղեցաքաղաքական շահերը և ու բազմաթիվ իշխանության եկեղեցաքաղաքական շահերը Հեռ Բյուզանդական Հեռ կիրիկիայում, հարցերում խաչածնվում էին Բյուզանդական Հեռ Կիրիկիայում: Հայոց Հյուսիսային Ասորիքում և Փոքր Ասիայում ու Բալկաններում: Հայոց եկեղեցին ևս փորձում էր Հասնել իր Համար առաջնակարգ նշանակություն ունեցող եկեղեցաքաղաքական Հեռայն խնդիրներին լուծմանը.

ա) Բյուզանդական կայսրության տարածքում և նրա ազդեցության ոլորտում գտնվող երկրներում Հայոց եկեղեցու և նրա թեմերի Համար ստեղծել գործունեություն տանելի պայմաններ.

<sup>35</sup> Թեև Թեոփիլ քաղաքագետը Վաստատական թեմ էր, որը սկսած 1113 թ. ենթարկվում էր Աղբյուրի կաթողիկոսներին, որոնք ինքնագլուխ էին հայտարարել թեմը (այդ եկեղեցական թեմի մասին տես ԱՄՍՏԱՆ, Գաղափարագր., էջ 9-13, 33-36): Նրանք եկեղեցական թեմի մասին տես ԱՄՍՏԱՆ, Գաղափարագր., էջ 9-13, 33-36): Նրանք մինչև 1177 դարձ Գերբ, հավանաբար, իրենց հետո էլ մի պահում Հայոց եկեղեցու Գերբ գործերից:

բ) Հայոց եկեղեցական կազմակերպությունը քույր եկեղեցու կարգավիճակով ընդունելի դարձնել Բյուզանդական եկեղեցուն և կայսրությունը, որպես ուղղափառ քրիստոնեական Համայնք,

գ) Օգտագործել Բյուզանդական կայսրության Հեղինակությունը և արտաքին քաղաքական Հետադուրսությունները Հայոց կաթողիկոսարանի դիրքերը միջազգային Հարաբերություններում ամրապնդելու գործում, որն անուղղակիորեն նպաստելու էր ազգային պետականություն ստեղծելու գործընթացին:

1165-1178 թթ. Հայ-բյուզանդական քանակցություններն անարդյունք ավարտվեցին: Այնուամենայնիվ, Հենց այդ քանակցությունների վերջնական փուլն Հանդիսացող Հոսմկլայի ժողովում (1178 թ.) Ներսես Լամբրոնացին պատրաստվել է ներկայացնել մի վավերագիր, ուր առաջարկվում էր դիմել Բյուզանդական կայսրությանը՝ փոխելու Համար Հայոց եկեղեցու տեղը տիեզերական եկեղեցու նվիրատեական Համակարգում: Դա մի ծրագրային փաստաթուղթ է, ուր Տարսնի արքեպիսկոպոսը պատասխանում է բյուզանդական եկեղեցու ինքնաշահմանը: Այստեղ՝ «Գլխակարգությունը Հոսմաց» աշխատության մեջ, Ներսես Լամբրոնացին բյուզանդական կայսր Մանուել Ա Կոմնենոսի և պատրիարք Միքայել Գ Անփալոսի ուղարկած ինքնաշահմանը վերջինին, ուր ասվում է ընդունել «գառաջարկություն կաթողիկոսին միայն ի թագավորէն Հոսմաց», գրում է, որ այս դուրսը թեպետ և վերջում է դրվել, սակայն ընդգրկում է վերաբերյալ քույր խնդիրները: Նկատի ունենալով, որ Հայոց և Բյուզանդական եկեղեցիները սկսած է դարձնել բավական Հեռացել են միմյանցից (չնայած երկուսանք բազմաթիվ փորձեր են կատարվել Հաշտեցնելու Տիեզերական եկեղեցու այս երկու թևերը), Ներսես Լամբրոնացին Հոսմկլայի ժողովի մասնակիցներին խորհուրդ է տալիս Հետևյալ առաջարկով դիմել Բյուզանդական կայսրը. «է. եւ կայցէ զաթոսն Անախրոսայ կաթողիկոսն Հայոց- եւ զոր ինչ եկեղեցիք եւ սահմանք են ընդ իշխանութեամբ նորայ Արևելս եւ յԱրեւմուտս. եւ նոյն յաջորդեցնէ Հրամանաւ թագաւորից զՀայոց սեռն, այլ՝ մինչեւ ի սպաս»<sup>36</sup>:

Ըստ քննարկվող վավերագրի, Բյուզանդական եկեղեցու և կայսրության Հետ բարեկամական փոխհարաբերություններ Հաստատելու միայն մեկ եանապարհ կա. «... անքակ պնդութեամբ զտէրն եւսանել, այսինքն՝ Հարսնացուցանել զաթոսն Անախրոսայ Հայրապետութեանս Հայոց, զի ի մեան ողջախոս Հուսին այնորիկ, եւ անբն

<sup>36</sup> Պատմագր. Պատմություն, էջ 265:





ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ  
ՓԻԼԻՊՈՒՊՈԼՍԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ  
ՀԱՅ-ԲՅՈՒՋԱՆԴԱԿԱՆ  
ՓՈՒՆՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԺԲ ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ  
ԿԵՍԻՆ

Արզեն Քրիստոսի ծննդին Հաջորդած առաջին դարերում նկատվի է Հայ ազգաբնակչության սրտչակի, արժանազրգամ գազթ դեպի Հռոմեական կայսրության տարածք, սակայն սկսած Զ դարից Բյուզանդիան ծրագրում և իրագործում էր Հայկական լեռնաշխարհի բնակչության բռնի և կամավոր անդաճանում Թրակիա և կայսրության մյուս արևմտյան նահանգներ: Բյուզանդական վարչակարգի նման մեանարկումների մասին տեղեկացնում է է գարի պատմիչ Սերեոսը, երբ Հատված է բերում Մորիկ կայսեր նամակից՝ ուղղված Իրանի շահնշահ Խոսրովին. «Ազգ մի խոսար ևս տնՀնազանդ են, կան ի միջի մերում ևս պղտորեն: Բայց ե՛կ, ես գիմս ժողովեմ ևս ի Թրակի գումարեմ, ևս զու գրոյզ ժողովէ ևս Հրամայէ յԱրևելս տանել»<sup>1</sup>:

Հետագայում Հայերի անդաճանությունը Բյուզանդական կայսրության արևմտյան նահանգներ շարունակվեց ավելի մեծ չափերով: Այդ իրողություն շարժառիթները և պատճառները բազմաթիվ են և մենք չենք անդրադառնալու դրանց: Արզեն շատ վաղուց Հայագետները և բյուզանդագետները զբաղվում են այդ խնդիրների ուսումնասիրությամբ: Գերմանացի բյուզանդագետ Հանս Դիտտենը Հիմնվելով գիտական գրականության և քրիստոնյա ու ժուսուլմանական Արևելքի միջնադարյան սկզբնադրյունների վրա, կարողացել է ստեղծել Զ-Թ

<sup>1</sup> Անրու. Պատմություն, էջ 85:



Վերջին տարիներին Վ. Հեխտի, Հր. Բարթիկյանի, Վ. Արուսթյունովա-Յիրզանյանի և մասնավորապես Հ. Լ. Ջեքիյանի ջանքերով բազմաթիվ աշխատանք է կատարվել վեր Հանելու և դասակարգելու ԺԲ դարում Բաղկանյան թերակղզում Հաստատված Հայկական բնակավայրերի մասին վկայությունները: Հիշյալ Հեղինակների աշխատանքներում ընդհանուր առմամբ պատկերված է մեզ Հետաքրքրող գաղութի վիճակը և նրա կշիռը Բյուզանդիայի քաղաքական և մշակութային կյանքում: Այնուամենայնիվ, փորձենք ևս մեկ անգամ մասնագետների ուշադրությունը սեռել այդ խնդիրների վրա:



